Ո Ր Ա Գ Ի Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ.

1859.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻԳՆԱՑՔ.

ԱՄՍԱՑԵՑՐԱԿ II.

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Լուկրեցիա, ողբերգուհի՝ն, գործ Պօնսար ֆրանսիացւոյ.
Թարգմանուհի՝ն Ս. Նազարեանցի ..... 837—871
Հնախօսականք մարդուս մարմնի վերայ. գործ Ս. Աւետիքեանցի ..... 872—892
Մի նամակի պատասխան. Ս. Նազարեանց ..... 892—893
Նամակներ առ Հրատարակողը Բերլինէ և Վիէննայէ,
Մարախոս-Սառաֆեանցի և Ագօլի Բլումենթալէ ..... 893—906
Տիշատակարան Կամ Լմմանուէլի ..... 907—918

ՄՈՍԿՎԱ,
Въ Типографіи Грачова и К°.
1859.

ՆՈՅԵՄԲԵՐ 1859 ԹՈՒԱԿԱՆԻ

ՐՆԹԱՑՈՒԹԻՒՆՔ·

ՈՂՐԵՐԳՈՒԹԻՒՆ

(Դարձ պօնար Քրանսիացւոյ·)

ԼՈՒԿՐԵՑԻԱ·

ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ·

Ա՛յս Լուկրեցիան էր դուստր Հռոմէական սենատորի, Սպուրիոս Լուկրեցիոսի, Տարկվինիոս Սուփերբոս թագաւորի օրերուն, 500 տարի Քրիստոսէ յառաջ: Ա՛յս Լուկրեցիան ամուսնացած էր Տարկվինիոս Կոլլատինոսի հետ· իր անօրինակ գեղեցկութեամբ գրգռեց թագաւորի որդւոյ, Սէքստոս Տարկվինիոսի ցանկութիւնը, որ և դիւշերով ներս սողոսկ Լուկրեցիայի օթեւանը և բռնութեամբ ապականեց նորա ամուսնական անկողինը: Գալով առաւօտուն կոչելով իւր մօտ իւր հայրը և ամուսինը, որ քաղաքէն դուրս էր, պատմեց նոցա Լուկրեցիան իւրեան պատահած նախատինքը և պարտք դրեց նոցա վէրժ վքեժինդիր լինել իւր անպատուութեանը: Սորանէ յետոյ սպանեց նա իւր անձը: Ա՛յս միջոցիս ներկայ էր Ցունիոս Բրուտոս հռոմայեցին, որդի Մարկոս Ցունիոսի, ինչպէս ասուածն, Տրոյական ազգից: Սոյն այս Մ· Ցունիոսը ամուսնացած լինելով Տարկվինիոս Սուփերբոսի քոյրը հետ, սպանվեցաւ իւր անպրանիկ որդւոյ հետ միասին Տարկվինիոսի ձեռքով: Նորա կրտսեր որդին, Ցունիոս Բրուտոսը ստացել էր յետին մականունս, այսինքն Բրուտոս, որ նշանակուածէ տկարամիտ, ըստ որում կեղծաւորվեցաւ տկարամիտ, որ ազատհովէ իւր անձը իւր կասկածամիտ քեռւոյ երեսից: Տարկվինիոսը առանց երկրայուելոյ ուղեկից տուեց սորան իւր որդիներին, երբ որ սոքա ճանապարհորդութեին դեպ ի Ցունատոսի Դելփի քաղաքը, ուսոի յետ եկան նոքա այսպիսի պատասխանով, որ տուել էր Դելփեան պատգամախօսը· «Մի

ժամանակ Հռոմի մէջ իշխելու է այն մարդը, որ վերադառնալով Դելփի քաղաքից, առաջնապէս կը համբուրէր իւր մայրը։» Բրուտոսը միայն ուղղապէս հասկացաւ պատգամախօսի ասածը, վերաբերելով դորան դէպ ի հասարակաց մայր, երկիրը։ Երբ որ Բրուտոսը երկար միջոց կրել էր իւր վերայ տկարամտութեան դիմակը, առանց դուրս երևեցնելու իւր ստոյգ բնաւորութիւնը, պատահեցաւ անպատուութիւնը Լուկրեցիայի, Սեքստոս Տարկվինիոսի ձեռքով։ Այժմ հասել էր ժամանակը Բրուտոսի համար երեսից ցած ձգելու տկարամտութեան դիմակը և առյարէզ մտանելու որպէս մի խոհական և քաջ տղամարդ։ Այնուհետև երդուաւ նա վրէժխնդիր լինել Տարկվինիոսանց, խռովեցուց ժողովուրդը, և այն միջոցին երբ Տարկվինիոսը պաշարուած Առդէա քաղաքը, յառաջ տարաւ նորա սահմանից վայրագութեան և աքսորանքի վճիռը։ Նոյն իսկ Տարկվինիոսի տղաքտոհմը թէ ինչ անլսելի չարագործութիւնների նախատինք բարձել է իւր վերայ, չկամինք մանրամասնաբար յառաջ բերել այս տեղ, որովհետև այդպիսի յառաջընթաց տեղեկութեամբք երկիւղ կար աւերելու մոռացող ընթերցողի վայելքը, նոյն իսկ ողբերգութեան ընթացքից տեղեկանալ իրողութիւններին։ Մեր տուած ծանօթութիւնների խորհուրդը այն է, որ օգնենք ընթերցողին, առանց ծուլացնելու նորա ուշադրութիւնը, ընթերցանութեան միջոցին։

1.

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ· ՏԵՍԱՐԱՆ 1·

(*Մի սենեակ Ցունիոս Բրուտոսի տան մէջ. Բրուտոսը նստած է մի սեղանի առաջև. ժամանակը գիշերկ է։*)

ԲՐՈՒՏՈՍ·

«Ելա, որ առաջնապէս կը համբուրէ իւր մայրը,
Կը թագաւորէ և առաջնապէս։» Չհամբուրեցի՞ ես երկիրը,
Չլցուցի՞ ես աստուածոյ պատգամը։ Եւ երբ որ ես
Իմ ոսկելից գաւազանը նուիրեցի նորան,
Չխօսեց նա այսպէս. «Բրուտոսը ընծայումէ իւր պատկերի
նմանութիւնը,
(Նոյն պարունակութիւնը և նոյն պատեանը)
Նոյնպիսի նիւթ մի նոյնպիսի անօթի մէջ։
Գաւազանը խորտակելու է դայիտոնը, երկու անգամ
Պիտոյ է ահ ու դող բերէ ցնծալի անունը թագաւորների վերայ։»
(Նա բարձրանում տեղից.)
Ցնծարի անունը· այո՛ այդպէս է իմ անունը·
Եւ այդ կերպով կը լինիմ ես այն մարդը, որ կը տիրապետէ Հռոմին։
Իմ հոգին իսկապէս թռչում դէպ ի բարձր սահմաններ·
Դէպ ի վեր տարվելով պատգամախօսի ասացուածով,
Որ խորհրդաւոր կերպով ակնարկութիւն արեց ինձ·
Թէ ես իշխելու եմ և արժանի եմ դորան։

Ա՛յո՛, ինձ արժան է իշխել. մի՞ թէ բացայայտ չասաց այսպէս.
Լսումեմ ահա, ի՛նչպէս բարձրանումէ մի փոթորիկ.
Տարկվինիոսը կամի ամենայն բան իւր ոտքի տակ ձգել,
Հռոմի աշնուականքը իւր համար պատուանդան շինել,
Եւ ուր համարձակվումէ մի գլուխ բարձրանալ,
Պատժվումէ մահով, եթէ չկամի յանձն առնուլ անարդութիւն։
Ա՛յսպէս, Տարկվինիոսը խորամանգութեամբ աշխատումէ նուաճել
ծերակոյտը.
Պատճառ, երբ որ դա պահանջումէ իւր հնուց սովորական իրաւունքը,
Ապա նախանձախնդիր բռնակալը
Լռեցնումէ անիրաւութեան լողոքը, մորթելով իւր ընտիրքը։
Բայց նորան հանդէպ է գնում մի զայրացած մրրիկ,
Զօրանումէ ատելութիւնը, մի խաւար լծի տակ ճնշվելով.
Թէև լռութեամբ կատարվումէ նորա հրամանը,
Բայց լռութիւնը շատ մծա դրացի է ապստամբութեան։
Ուղիղ ասաց Լուկրեցիան. մի բան խմորվումէ։—
Թէ գալու է յաջող ժամանակ, թէ դուրս կ'երևի մի խելացի տղամարդ։
Շուտով աշնուականքը, թագաւորից վշտացած,
Կը պատրաստվին դէպ ի կռիւ իւրեանց հին իրաւունքի համար.
Եւ այդ տղամարդը ես եմ. պատճառ, ինձ է սպասում
Պարծանքի ամենագեղեցիկ պսակը և գանչումէ դէպ ի վրէժխնդրութիւն,
Հայրենիքի, հօր և իմ համար յատկապէս.
Աղատել ապագայքը, պատժել անցած օրերի յանցանքը.
Ա՛յդ բանը կամիմ ես, իմ յիմարահոչակ անունը փառաւորելու.
Համբերութիւն. օրերը հասած չեն դեռ ևս.
Դեռ ես չկայ փոթորիկ. նայումեն միայն խոժոռ աչքերով.
Ա՛յդ է այն տօթագին, ահաւոր հանդարտութիւնը
Որ գուշակումէ մեզ երկնքի մծաւոր բարկութիւնը։
Երկնքի ցասումը սպասումէ միայն մի յաջող հողմի.
Մինչև այդ բոպէն, քնեցէք իմ դարբնասալի վերայ, շանթեր.
Դու, աշնիւ արիւն, որ ուռցնումես իմ կուրծքս,
Ցած իջիր դարձեալ յիմարի երակների մէջ,
Եւ դու, սիրելի Հռոմ, որի անունով երդուումեմ ես,
Հռոմ, որի գալոց օրերը պիտոյ է փառաւորվին.
Հռոմ, որի մեծութիւնը, միայն թէ հասանէի նպատակիս,
Պիտոյ է ճառագայթէ, ինչպես երբէք մտաբերած չեն թագաւորքը.
Եթէ հարկաւոր է քեզ քո գալոց փրկութեան համար,
Ահա մատուցանումեմ քեզ իմ աշնիւ արիւնը։ Համբերութեամբ

Կամիր մնալ և սպասել բարեյաջող բոպէին։
Որպէս նուէր ընդունի՛ր դու այն նախատինքի լաժակը որ խմել եմ ես,
Այնուհետև աւելի քաջալերեամբ ընդդէմ դուրս կը գամ հին
անարդութեանը։
Կարեկցութեան արտասուքի մէջ ընկղմուած իմ սիրտը,
Եւ այս աղբիւրը, մի նոր բան իմ անլսադդ սրտի համար,
Լուայ ու մաքրեց իմ ճակատը նոր պայծառութեամբ։
Ես խոնարհութեամբ գլորվել եմ կեղտոտ անկողնի մէջ,
Եւ իմ նախատինքը երբէք պատկանում չէ ինձ,
Երբէք չկամիր ես կապանքի տակ դնել իմ կատաղութիւնը,
Այժմ պիտոյ է ինձ իմ երանքը մորակել դէպ ի բարկութիւն,
Երանի՛ թէ մի քաղցր խօսք մեղմացնէր կատաղութիւնը
Մի թշուառականի սրտի մէջ։

(Վալերիոսը դուրս է գալիս։)

ԲՐՈՒՏՈՍ։

Ո՜հ, լսող լսենք, ի՛նչ լուր է բերում Վալերիոսը։

ՎԱԼԵՐԻՈՍ։

Ուրախացի՛ր, բարեկամ, քո փափագը կատարվում է,
Եւ մեր խօսքերը շուտով կը դառնան գործ։
Շուտով կը ձանձրանան մարդիկ դողալուց մի մարդու առաջև։
Ես Հռոմի աղնուականներից շատերի մօտ էի, և բոլորեքեան,
Պատրիկեանք, Ասպետք և Սենատօրք,
Վաստակած արդէն բռնակալի ամբարտաւանութենից
Սաստիկ տհաճութեան մէջ են այս [1]) պատերազմի վերայ,
Որի ազահ կոկորդը կլանում նոցա բոլոր գոյքը։
Ես սնունդ տուէի նոցա բարկութեանը, բորբոքեցի նոցա ուղեղը,
Եւ կատաղութենից յետոյ ցոյց տալով նոցա, յուսալի բանը,
Փայլեցուցի աղատութեան ճառագայթը նոցա առաջև։
Չհեռացայ նոցանից, մինչև նոցա սիրտը
Ամուր բռնեց արմատ ու ճիւղ արձակող ցանկութեան սերմը։
Արդէն համարձակ խօսքեր շշնջում են միմեանց ականջի մէջ,
Արդէն հարցանում են միմեանց, կշռում են, խորհուրդ են կատարում,
Արդէն խօսքի նիւթ դառնալով նոցա ձգտողութիւնը
Տարածվում աւելի անկասկած օդի միջով, որովհետև Տարկվինիոսեանքը
հևռի են։

---

[1]) Բուտուլեանց հետ. դոցա մայրաքաղաքը էր Առդեա. թէ ժողովուրդը և թէ քաղաքը դտանվում յետոյ սիրտագետած Լատինի մէջ։

Պրոկուլոս սենատորը իմ մեծ էր այս առաւօտուս,
Թէև ոչ ոք համարձակվում էր յառաջ քայլել, բայց և ոչ ոք չէր մնում.
Մենք կանգնած ենք դարպասի մօտ, այժմ հասել է րոպէն
Քաջալերելու նորանոր դողդոջումներն.
Մեզ պակաս է միայն — խօսեց Պրոկուլոսը — մի առաջնորդ.
Ես ասացի նորան. «Առաջնորդը, որին խնդրում էք դուք,
Կենդանի է. նա հարկաւոր ժամանակին դուրս կ'երևի,
Եւ ես խոստանում եմ ձեզ, որ նա կը լցուցանէ ձեր պիտոյքը.»
Սորանով ընդհատեցի իմ խօսակցութիւնը.
Եւ իսկոյն սորանից յետոյ — գուցէ աստուածների ձայնն է դա —
Ես իսկոյն տեղեկանում եմ քո վերադարձին.
Ի՛նչ ես ասում դու, Ցունիոս. կարդը չէ՞ այժմ քոնը,
Մի՞ թէ պիտոյ չէ այժմ դործակատարութիւն.

ԲՐՈՒՏՈՍ.

Դեռ ևս պիտոյ է համբերութիւն.

ՎԱԼԵՐԻՈՍ.

Ընդպէս խօսում միայն Բրուտոսը. Ես լսում եմ քեզանից.
Բրուտոսը միայն սանձահարում իւր վրէժխնդրութիւնը և պատիժը.

ԲՐՈՒՏՈՍ.

Ահա սանձահարում դորան, որ յետոյ աւելի քաջ ներդործէ.

ՎԱԼԵՐԻՈՍ.

Նայոյ երբ կը դայ աւելի պատշաճաւոր ժամանակ, քան թէ այս րոպէս.
Հեռի է լռնակալ տէրը, և ծերակոյտը լորդորված է բարկութեամբ.

ԲՐՈՒՏՈՍ.

Ընդարև Տարկվինիոսի ապարանքը դատարկ է այս տեղ,
Բայց նա տեղափոխել չէ նորան դեպ ի պատերազմի դաշտը.
Եթէ նա կը վերադառնայ, իւր ղօրքից պաշտպանված,
Շուտով կը հաստատվի նորա վրանը մեր դարպասների մօտ.
Հռոմի մէջ ևս պակասելու չէր նորան օգնութիւն.
Դեպ ի մեր կողմն է ծերակոյտը, դեպ ի նորա կողմը ժողովուրդը.
Ժողովուրդը շատ փոքր դգում է նորա հպարտութեան ծանրութիւնը,
Դա չէ վախենում այն մարդուց որ կործանում է մեծամեծը.
Տարկվինիոսի կայծակը լնայում է տափարակ դաշտին,
Նա զարկում միայն բարձր աշտարակների ծայրին.

Ապահով ժողովուրդը տեսանումէ Թագաւորի վոճորիկը
Իւր գլխի վերայից Թաւալվելով արձակվիլ միւս սահմանների վերայ.
Ոչինչ չկոգալով հեռաւոր պատերազմի վերջը,
Նա խնդրումէ այդ միջոցին իւր մօտաւոր կողոպուտը։
Այս ըօրութեան վերայ հաստատված մնումէ Տարկվինիոսը
պատերազմները,
Նա վարձատրումէ ժողովրդի շնորհը նոր աշխարհներով,
Եւ այսպէս, առանց միւսերին ընտրելու,
Ագահութեամբ կլանումէ ամեն մինը իւր կողոպուտը.
Ժողովուրդը օտարականներին, Տարկվինիոսը ծերակուտին.
Ժողովուրդը գլուխ չէ բարձրացնում ընդդէմ բռնակալութեան,
Մինչև որ դա անպատուելով կը համարձակվէր մօտենալ նորան.
Այնուհետև անձնահաճ կամքը բացումէ իւր համար մի նոր հանդէս,
Եւ ցած է իջանում ամբոխի սահմանի մէջ,
Այնուհետև հրաժարվումէ նա իւր աթոռի խորամանկ բարձրութենից,
Որ մեռանի մի հասարակ, շատ սովորական դրութեան մէջ։
Մանաւանդ թէ ատելի է իշխանութեան չար գործադրութիւնը.
Պատճառ, այնուհետև բոլորեցուն աչքի առաջև գրած է վտանգը.
Որովհետև դա յանդգնումէ ներս մտանել ամեն մի սրբարանի մէջ.—
Դոքա, անձնահաճ կամքը և իշխանութեան չար գործադրութիւնը,
Ժողովրդի ամեն մի դասակարգից խլելու են ղօհեր.
Դոքա վշտացնելով ամեն մարդու սեփական իրաւունքը,
Եւ անարգելով ամեն մարդ, կը լինին երկիւղալի ամենի համար։
Ահա նորերումս մի օրինակ տուեց Ալեքսը.
Հիպպարքոսը, մի երկրորդ Տարկվինիոս, յանկարծ,
Տաճարի մէջ բռնվեցաւ, և ինչ որ տասն և հինգ տարի
Թագուցած էր, դորան համբերեցին և տասն և հինգ տարի.—
Քրմուհին պղծեց նա—նոյն օրին և կործանվեցաւ նա։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Այդ երբ կը դայ այդ բոպէն։

ԲՐՈՒՏՈՍ.

Համբերութիւն.
Ոգա անպատիժ մնալը խրճելով դրդումէ նորանց.
Պատճառ, մի փորձ, որ պսակված էր յաջողութեամբ,
Է մի յարդարած ճանապարհ դէպ ի ամենավերին լրբութիւն։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Ուրեմն դիպուածն է, որին յուսալով հաւատումես դու.

Եւ քո խորին իմաստութիւնը կապած է պատահմունքի վերայ.
Ա՛յն խորհուրդը, որ քսան մուժին տարիք անուցել են,
պիտոյ է դիպուածը իրագործէր և ոչ թէ քո կամքը։
Եւ եթէ երբէք չգար մի յարմարաւոր ժամանակ,
եթէ մի մտանողութիւն կարող էր մեղ ամէններս կորուսանել.
Ա՛յս բանի վերայ հիմնապէս մտածե՞լ ես դու։

ԲՐՈՒՏՈՍ.

Հիմնապէս մտածել եմ։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Եւ ի՛նչպէս ես վճռել.

ԲՐՈՒՏՈՍ.

Ստհեմութեամբ յառաջ տանել դորան.
Ինչքան աւելի կշռումեմ ես, այնքան ևս ամրանումէ վճիռս,
Որ չձեռնարկեմ ոչինչ բանի, որ լինելու էր առօրեայ։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Եւ ձեր հօր սպանութիւնը —

ԲՐՈՒՏՈՍ.

Դա կը ստանայ իւր վրէժը մի փոքր յետոյ։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Եւ քո նախատինքը —

ԲՐՈՒՏՈՍ.

Ես նախատինքի համար իմ ծնած։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Եւ մեր բարեկամքը, որ բոլորը քաջալերեցի ես,
Ի՛նչ պիտի ասեն տեսանելով այս նոր յապաղանքը.
Ի՛նչ պատասխանեմ նոցա, եթէ հարցուփորձ առնեն ինձանից,
Թէ ինչո՞ւ իմ բաղուկս այդպէս երկչոտ, իմ խօսքս այդպէս սրտեայ էր։

ԲՐՈՒՏՈՍ.

Լսա՛ նոցա. թէ կործանելը հեշտ է,
Բայց նոքա մտածել չեն, թէ ի՛նչպէս պիտոյ էր վերստին շինել.
Եւ իւր գործը կիսով չափ միայն լցուցանումէ այն բարկութիւնը
Որ առանց աւելի խոր պատճառի սպանումէ թշնամին,
Եւ ո՛վ պիտի Տարկվինիոններին յաջորդե։
Ծերակո՞յտը պիտի լինի դա, թէ ժողովուրդը.
Եւ եթէ կամքը մի նոր թագաւոր ընտրել,
Ո՛ւմ հասանելու էր վճճակը։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Քնէ միայն, Բրուտոս.

ԲՐՈՒՏՈՍ.

Այդ չէ այն պատուասիրութիւնը որ կարող էր առաջնորդել ինձ.
Հռոմի բարին և նորա տևողական բարին, ահա իմ ջանքը.
Լաւ վերահասու եղիր այն բանին, որ ես կամիմ։ Վրէժի մասին,
Թէ ինչպէս կարելի էր դա, խօսվեցաւ մինչև այժմ.
Այժմ ժամանակ է, որ ամեն մինը մեզանից իմանայ
Թէ ինչ պիտոյ է լինի յաղթութենից յետոյ, որ ձարվել էր վրէժով.
Վալերիոս, եթէ այնպէս պատահեցաւ, ինչպէս կամիմ ես,
Ապա, ոչ ես և ոչ միւս անձն պիտոյ չէ թագաւոր դառնար։
Տարկվինիոսը բռնակալ էր. Թող նա լինի վերջինը.
Հռոմը, ինչպէս որ կայ, կարօտ չէ աւելի ոչ մի տիրոջ։
Սկզբումը, երբ որ քաղաքը դեռ ևս վտանգի տակ և թոյլ լինելով,
Պարտական էր միշտ պատերազմել իւր պահպանութեան համար միայն,
Այն ժամանակին բարի էր, որ մի ղօրաւոր կարողութիւն
Կամակորներին ուսուցանէր հնազանդութիւն։
Եւ այս խիստ կարգը ցոյց էր տալիս մի կրկնապատիկ ընդդիմութիւն
Մեզ չորս կողմից սպառնացող կորուստին։
Վտանգի մեծութիւնը արիւն էր պահում հոգին,
Եւ այդպէս ստիպելով սնուցանումէր ազգի պարծանքը.
Մի նոր յաղթութիւն տալիս է մի նոր հոգի պատերազմողին,
Եւ բոլոր թշնամիքը խոնարհումէին Հռոմի առաջև.
Նորա պարիսպների վերայ թշնամին չէ յարձակվում այլևս,
Եւ մեք աւելի պաղ սրտով դիմումենք դէպ ի պատերազմ.
Քնով արբեցնումէ մեզ մի այդպիսի ապահովութիւն,
Դա թուլացնումէ հոգին և թողումէ բռնութեանը աճել.
Իւր երջանկութեանը միայն ծառայումէ հրամայողի դաւազանը,
Երբ որ չունէր այլևս հոգալի բան ընդհանուրի համար.
Լինելով ազատ մեր հին թշնամիների սպառնալիքից,
Ոտքը ճնշումէ նա այժմ քաղաքացիների քամակի վերայ։
Ինչքան թոյլ է ընդդիմութիւնը, նոյն չափով համարձակվումէ նա.
Հռոմը շատ կանուխ տիրութիւն ստանալով, կորցրեց իւր ազատութիւնը,
Եւ օրէնքից սանձվելով, չունի նորա սիրտը
Այն անդուլ ժողովրդի վայրենի քաջութիւնը։
Մեր սեղանի մօտ, մեր տների և հապուստների մէջ
Տիրումէ փափկութիւն, արհամարհելով հին օրերի բարքուվարքը.

Պատերազմական զգեստը շատ դժուարացել է մեր մարմնի համար,
Նոյն իսկ գօտին ահա երեւումէ մեղ անյարմար.
Քարեայ ապարանքը այժմ ծաղը է առնում կաւեայ խրճիթին,
Մեր զօրաւոր նախահարց աւելի խոշոր օթևանին։
Ամեն մի զօրութեան համար թոյն է այս հանգիստը.
Դա բարձրաձայն գանչում է մեղ դէպ ի մեր առնելի գործը։
Նոյն իսկ առաքինութիւնը որ առաւել երկար փայլում էր —
Կնոջ ամօթը — սա ևս փախել է մեր ժամանակում։
Ա՛յսպէս ահա մեռնում է Հռոմին մահ,
Եթէ մի դերօրինակ գործ շուտով չխլէ նորան դորա ձեռքից։
Նոր հոգուն մի նոր ձև տալու համար,
Որ վերստին վառվի մեռած պատուասիրութեան կրակը,
Որ Հռոմը նոր զարդարվի քնքուշ պարկեշտութեամբ,
Մի՛ ճանապարհ կայ միայն — և դա է, Աղատութիւն.
Նոր քաջագործութեամբ, ինչպէս առաջին գամը,
Ցարութիւն կ՚առնու Հռոմը բարձրիգլուխ պարծանքով։
Սա գերութեան մէջ էր, իւր թագաւորներին ծառայ,
Բայց աղատ Հռոմին կը նոնարհի Իտալիան։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Ուրեմն արժան էր ժողովրդին ձեռք առնուլ կառավարութեան ղեկը։

ԲՐՈՒՏՈՍ.

Ո՛չ, դորանով կը փոխանակվի մի ծառայութիւն միւսի հետ.
Խառնակ ժողովրդի վերայ տիրում միայն կիրքը.
Դա մի պատրաստ որս է ամեն մի ծածուկ խռովարարի համար։
Ով որ առաւելապէս շողոքորթում կոյր ամբոխին,
Գտանում նորա հաւանութիւնը և կառավարում նորա համար։ —
Եւ պատուասոլութիւնը այդպէս շտապելով դէպ ի գործ,
Ծնուցանում միայն խառնակութիւն և վեր ի վայր շփոթութիւն։
Ո՛չ. թող ծերակուտի հոգաբարձութիւնը հաստատ մնայ,
Նոյնպէս պատրիկեանց պաշտպանողական իրաւունքը.
Բայց թո՛ղ դաստիարակենք մեր համար տղամարդիկ,
Որոնց կոչումը կարողութիւն կը տար նոցա
Պաշտպանող տեարք լինել միւսերին.
Որ ռամիկ ժողովուրդը իմաստուն խորհրդականների ձեռքով
Ցառաջ տանէր իւր օգուտը, քան թէ ապստամբութեամբ։
Կարճ ասեմ. ինչ որ մինչ և այժմ եղած է ոտքի վերայ, թող սուրբ մնայ.
Հեռի մնան Հռոմից թագաւորքը միայն։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Յառաջ տար խօսքդ.

ԲՐՈՒՏՈՍ.

Ես տեսած եմ Յունաց աշխարհները,
Եղած եմ Դելփի, Սպարտա և Աթէնք քաղաքներում,
Հարցափորձել եմ այն տեղ Ապոլոնի պատգամախօսութիւնքը, և
Այս տեղ Լիկուրգոսի ու Սոլոնի օրինադրութիւնքը.
Սպարտան տալիս է հաւասար կարողութիւն երկու թագաւորների,
Եւ այդպէս թողում նոցա բաժանել միմեանց հետ արքայական
իշխանութիւնը.

Որ մինը հսկելով միւսի վերայ,
Սանձէ միւսի չարութիւնը և խոթէ նորան դէպ ի բարին.
Այսպէս իշխանութիւնը բաժանվելով երկուքի մէջ,
Ուղղեցնում նոցա կրինակի կամքը դէպ ի հասարակաց բարին.
Բայց մի իշխանութիւն որ տևում չափից դուրս երկար,
Թողում կամքին և չափից դուրս աղտ ասպարէզ.
Իշխանական դաւաղանի սովորութիւնը ծնուցանում բռնակալներ.
Աւելի բարւոք է այս տեղ հետևել Աթենացոց օրէնքին,
Որ ամեն մի կառավարութեան որոշում իւր սահմանը.
Այս տեղ դրդում հրամայողին մի փառասիրութեան խոթան,
Եւ շտապութիւնը չէ թողում ժամանակ դաւաճանութեան հաւար.
Այդ տեղ ոչ ոք կարող չէր մոլորվել, դէպ ի չարը գործ դնել իւր
իշխանութիւնը.

Պատճառ, ամեն մինը երկիւղ ունի ինքն ղգալու դորա ծանրութիւնը,
Քաջ գիտելով թէ շուտով նորա ձեռքից դուրս կ'երթայ
իշխանութիւնը,

Եւ ով հրամայումէր այսօր, պիտոյ է միւս օրը հնազանդի.
Եւ որովհետև Սպարտայի ու Աթէնքի քաղաքավարութեան մէջ
Գտանվում միասին աւելի շատ խնամատութիւն, ապա թող և մեք
Երկու աղբիւրից ևս օգուտ ու շահ քաղենք մեր տէրութեանը.
Եւ Հռոմը թող ունենայ Սպարտայի պէս երկու ղեկավարք,
Բայց թող նոցա կարողութիւնը սահմանվի կարճ միջոցով.
Եւ Աթէնքի օրինակին հետևելով այս բանի մէջ,
Թող ընտրենք երկու իշխանք մի տարի ժամանակով.
Այս է իմ խորհուրդը, Վալերիոս, և անտարակոյս է,
Որ դա կը պատրաստէ մեղ երջանիկ դալոց օրեր.
Այժմ պիտես դու իմ սրտի ներքին խորհուրդը.
Ասա ինձ, հաւանե՞ս դորան, թէ մերժումես։

ՎԱԼԵՐԻՈՍ·

Ինչքն եգերիան [1]) աղդել է քո մէջ այդ իմաստուն խորհուրդը,
Եւ պայծառացած Հոգով լսումեմ ես քո առաջարկութիւնը·
Դա արժանի է մեր աշխարհին և մի տղամարդի,
Որպէս Բրուտոսի ընծայ և որպէս Հռոմի ապագայ։

ԲՐՈՒՏՈՍ·

Ա՛խ կայիր ապա, զարթեցրու Հոգիքը, որ ընդունեն այդ խորհուրդը·
Դա կը վառէ նորանց, եթէ հասկացել էին նորան·
Ատելի միայն կը լինի նոցա ծառայութեան լուծը, այն ժամանակ,
Երբ որ նոքա քաղցրացած էին մեծեցած արդար իշխանութեան յուսովը·
Գործ դիր մեր կարճատև րոպէքը, պտղաբեր առնելու այս խրատքը·
Եւ ծածուկ պահիր այս բանը, թէ խօսած էիր իմ հետ·
Ես ընծայումեմ իմ հաւատը քեզ միայն։

2.

ՁՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ· ՏԵՍԱՐԱՆ 1· 2· 3·

(Կանանց սենեակը Կոլլատինոսի տան մէջ· ժամանակը գիշեր է· Լուկրեցիա· Դայեակը· Լառիկն և միւս աղախինքը·)

ԴԱՅԵԱԿԸ·

Ցող տուէք ձեր իլիկներին պտոյտվիլ ղուարճապէս, աղջիկներ,
Եւ ոլորեցէ՛ք նոր բուրդ դաւաղանների վերայ·
Դուք որ հիւսումէք թելերը, ասեղները խաչաձև շարժելով,
Քաջալերեցէք ձեր մատերը· յառաջ գնացէք, մանուկներ,
Որ օդը օղի վերայ կապվի, և այդպէս
Ամեն մի երեկոյ աւելի երկարանայ կտաւը։ —
Հապա շտապեցէ՛ք այս ղինուորական ղգեստը պատրաստելու։

ԼՈՒԿՐԵՑԻԱ·

Ո՛հ անգամ ղինուոր մարդը քնումէ սաուն հողի վերայ
Իւր պաղած ու փայտացած անդամներին խնդրելով ջերմութիւն,
Որ հասուցանումէ նորան իւր խիտ և արձակ վերարկուն։

---

[1]) Իտալական մարգարէ կին, աղքիւրային յաւերժահարսն, որ հռոմէական առասպելի ասելով, էր ամուսին Նումա Պոմպիլիոսի, որ ունէր նորա հետ ծածուկ հաղորդակցութիւնք և նորա խորհրդով արած է Հռոմի մէջ կրօնապաշտական կարգադրութիւնք։

Լցուցէք ձեր օրական գործը, գատարկեցէք բրդի սակառները,
Ապա շուտով կը մտեննայ և հանգստի ժամանակը.
Բայց ասացէք ինձ. պատճառ, միտքս խառնված է,
Պատերազմի գաշտից ոչինչ նոր լուր չունիք.
Լսած չէք ոչինչ։ Դուք միշտ աւելի շատ բան գիտէք,
քան թէ ես իմ միայնութեան մէջ լսում եմ.
Կոլլատինոսին տեսած չէ՞ն։ Խօսք եղած է պատերազմի վերայ։
Քանի՛ մարդիկ երթումեն պատերազմ առանց վերադառնալու.
Ով Ցանոս[1]), վակվեր դու, վերստին լցուցանելով քաղաքները
ժողովրդով.
Խաղաղակեաց տանտիկնոջը յետ տուր նորա ամուսին այրը։

ԴԱՑԵԱԿԸ.

Ո՛նչ հոգսերի մէջ ես դու. ո՛հ, հաւատա ինձ, ով սիրելի,
Շուտով կը վերադառնայ քո Կոլլատինոսը որպես յաղթող.
Ճոխ ստացուածով յետ է գալու նա պատերազմից,
Եւ լիութիւն ու խնդութիւն կը լցվի այս տեղ.
Հռոմեղոսը չէ՞ լինելու նորան պաշտպան, և մի՞ թէ կռիւները
Այնքան վտանգաւոր էին ղօրավարներին, ինչքան պատերազմողներին։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ո՛հ, այդ յոյսը պատշաճում անփոյթ ղօրավարներին միայն։
Մի տղամարդ որպէս Կոլլատինոսը, թաքչելու չէ.
Նա ահից ու երկիւղից մնալու չէ յետապահ ղօրքումը.
Երբէք պաշտպանելու չէ իւր անձը վատութեան վահանով.
Որպէս նախամարտիկ առաջնորդելու է դէպ ի կռիւ,
Նորան աւելի մօտ է կորուստը քան թէ հասարակ պատերազմողներին.
Արդարև, աւելի լաւ կը համարէ նա մեռանել սղնիւ մահով,
քան թէ ապրել, իւր պարտականութիւնը ուրանալով։
Ո՛հ, այդ է ահա իմ պարծանքը և իմ երկիւղը.
Իմ սիրտը ամենևին լցված է սև գուշակութիւններով,
Անհաւոր պատկերների երևից սարսափում հայեացքս.
Արի, դայեակ, լսիր. ես կամիմ պատմել քեզ բոլորը։

ԴԱՑԵԱԿԸ.

Խօսիր, ով սիրելի. իմաստունքը չկամին երբէք

---

[1]) Մի հին, իտալական աստուած, որի պատկերը ցուցանուէր մի երկդիմի երես, վաղեմի նշանակը արեգակի և լուսնի։ Այն աստուածին նուիրած էր մի փոքրիկ տաճար, որի դուռները բացվուէին պատերազմի ժամանակ, և փակվուէին խաղաղութեան միջոցին։

Ստուգութեամբ արհամարհել նախադուշակութիւնքը։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Մի շուն երէկ, կէս գիշերին ոռնաց։

ԴԱՑԵԱԿԸ.

Մի տրտմութեան լօթ։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Եւ քամիքը փչումէին
Իւրեանց սարսափելի հնչիւններով դաշտի վերայից։
Երբեմն հառաչումէր ասես թէ մի մարդու ձայն։

ԴԱՑԵԱԿԸ.

Տխրութեան լուր։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Այժմ, խոր ձմերան մէջ
Ես տեսայ — մի կայծակի ցայտ վայր իջաւ երկնքէից։

ԴԱՑԵԱԿ.

Դա նշան է արիւնհեղութեան։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ո՛հ, մի շատ բացայայտ նշան.
Շուտով կը լսեմ մի սարսափելի լուր։

ԴԱՑԵԱԿԸ.

Ոչ, ոչ. երկիւղը Կոլլատինոսի մասին անհիմն է,
Այս տեղ է վտանգը, այս տեղ է դորա նիւթը.
Դուք, աստուածներ, պաշտպանեցէք մեզ։ Այս տեղ, մեր մէջ
Պիտոյ է մինին կորուստ պատրաստէ իւր ճակատագիրը։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Այսօր առաւօտուն, երբ թողնելի իմ սենեակս,
Դուռը որ բացումէի ես, յետ զարկնց ձեռքս,
Թէպէտ չկար ոչինչ քամի. նա փակվեցաւ,
Վիրաւորելով ձախոյ ոտքս։

ԴԱՑԵԱԿԸ.

Տանից գուրս մի՛ գնա. պատճառ, երևումէ, թէ
Դուրսից գալոց վտանգի գուշակ էր այդ զարկուածը։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ո՛հ, վտանգից փախչելու չկայ այս տեղ ճանապարհ.
Պատճառ, նա հալածումէ մեզ մինչև տան խորին ներսը.

Լսէր այլեւս· անցեալ դիշերին տեսայ երազումն
Ա՛յնպիսի զարհուրելի տեսիլ, որ մեծ ահ ու դող է ձգել վերաս·
Մեկնի՛ր դորան, դու կարող ես երազները բացատրել։

ԴԱՅԵԱԿԸ·

Տեսիլները Իւպիտերի յառաջընթաց կարապետքն են,
Որ զգուշացնումեն մեզ, որ ծանուցանումեն մեզ,
Թէ մի մեծ բան պատահելու էր·
Ճշմարիտ տեսիլը ուղարկվումէ մեզ Ճակատագրից,
Եւ երկար ժամանակ մոայլեցնումէ մեր հոգին·
Այդպիսի տեսիլը հեշտ կարելի է որոշել սուտ երազներից,
Եւ դուշակողքը կարող են պատմել նորա խորհուրդը·
Իմ մօրս ուսուցին այդ արուեստը իմաստուն երազահանը,
Երբ որ մեք դեռ ևս ընակումէինք մեր հայրենի կուրետեան աշխարհում,
Եւ նա ուսուց ինձ այդ հանճարը, երկար ժամանակ է·
Մինչ դեռ ես աղատ նստած էի իմ նախահարց կրակարանի մօտ·
Ապա բերեց մեզ Սերվիոս Թագաւորը աւերածք և կործանուԹիւն,
Խլեց մեր սեփականուԹիւնը և շինեց մեզ ծառայք·
Բայց ասա՛ դու ինձ քո տեսիլը, ես կը մեկնեմ նորան։

ԼՈՒԿՐԵՑԻԱ·

Երազումն Թվումէր ինձ որպէս Թէ մոանումէի մի սուրբ տաճար,
ԲազմաԹիւ ժողովրդից շրջապատած։ Բոլոր Հռոմը, այո՛,
Մինչև վերջին մարդը կարող էր տեղ գտանել այդ տեղ·
Ժողովրդի միշտ յաւելացած բազմուԹիւնը տեղաւորելու համար,
Ասես Թէ տաճարի լայնուԹիւնը ընդարձակվումէր։
Ապա Հռոմղոսին ղոհ էր մատուցանում նորա քուրմը,
Նորա շնորհը մաղԹելու համար·
Արդէն դրած էր ղոհելի անասունը սեղանի վերայ,
Արդէն ցանած էր նորա մեղի վերայ ալիւր և աղ,
Քուրմը Թափումէր արդէն գինին բաժակի միջից
Նորա Ճակատի վերայ եղջիւրների մէջ, ասելով·
Ով կվերինոս աստուած, ընդունի՛ր այս ղոհը,
Եւ Թող Հռոմին աւելի ղօրանալ քան Թէ միւս ազգերը·
Քուրմը լուռ կացաւ — ահ ու դողի մէջ սպասումէին ամենքեան։
Եւ ահա բարձրացաւ մի մեծահնչիւն ձայն,
Դղրդելով տաճարը· «Հեռացո՛ցէք այդ եզը,
Ի՛նչ պիտի ջնջէ ինչ Թողը անասունների արիւնը,
Տո՛ւեցէք ինչ մարդու արիւն· այլեա՛ զհո՛ւ պո՛ւեցէք ինչ

Մէ ինոջ անապատ ալքան, և Հռոմը կը մեծանայ։»
Ա՛յսպէս խօսեց աստուածը։ Նոյն րոպէին
Անյայտացաւ, ոչ ոք չդիտեր թէ ւ՛ր։
Եւ ես գրած էի մեծ զոհարանի վերայ,
Եղի փոխանակ սպասելով դանակին։
Եւ մինչ ես գրած էի այն տեղ, գունաձափ — մի օձ
Դուրս սողալով մի սիւնի ճեղքից, մօտենումէ ինձ,
Եւ յատակի վերայ ոլոր ոլոր լինելով
Ծանր ու երկար ձգվելով, որպէս թէ անփախչելի էր նորա որսը։
Նա բարձրանումէ կուրծքի վերայ — իւր սառցային օղակապերը
Փաթաթումէ մարմնիս — մաղերս փուշ փուշ են լինում,
Օձի դիջային շնչողութիւնը դղրդումէ ոսկերքիս ուղեղը,
Ձայնս մեռանումէ ցամաքած կոկորդիս մէջ։
Կամէի փախչել, բայց կարող չեմ,
Երկիւղից կապած սառած եմ։ Հսկայական բաղուկներով
Գրկախառնումէ ինձ անճոռնի գաղանը և բարձրացնումէ
Դլուխը, և ըերանից մի սուր սլաք դուրս պարզվելով սպառնումէ ինձ։
Նորա աչքը մի վառուն կրակ, հանդիպումէ իմ աչքին,
Դերեզմանի հոտ է փչում դէպ ի ինձ նորա շունչը։
Նորա սլաքը տալիս է մարմնիս մահու ակնկալութիւն,
Քաջ ընտրելով պատշաճաւոր տեղը թունաւոր խայթի համար։
Ա՛յնուհետև չեմ տեսանում ոչինչ — իմ սպանողս փախած էր —
Իմ սիրտը միջից ճեղքած մահու սրով։
Բայց մի նոր հրաշք։ կաթիլներ առուի պէս հոսումեն
Իմ կուրծքից արիւնաշաղախ յատակի վերայ։
Ա՛յդ կաթիլներից գոյացան պատերազմողների խումբեր
Խիտ խիտ շարքերով, որպէս ցորենի հասկեր արտերի դաշտումը։
Ա՛յս բոլոր պատերազմողը տեսութեամբ գեղեցիկ,
Չէին կրում որպէս նշան բանջարեղէն փուճջեր,
Ա՛յլ երկաթի գեղարդների վերայ կար մի ոսկի արծիւ,
Որ աչ էր տալիս Հիւսիսին ու Հարաւին, արևելքին ու արևմուտքին։ —
Ա՛յս բոլոր ղարմանքայ ես, հոգիս այնպէս լցուած այդ տեսիլքից,
Որ այն պաղ սուրը ղգուեցի դեռ ես կուրծքիս մէջ։
Ա՛յժ, այժմ ես ծակումէ դա իմ սիրտը։
Ո՛չ, դայեակ, կարող ես դու երազիս խորհուրդը ասել ինձ։

ԴԱՅԵԱԿԸ։

Ի՛ղձ մնացեմ դորա վերայ, մինչև կը պատասխանէի քեղ։
Ա՛յդ պատճառով — ըստ որում գործը պակաս յառաջ գնալու չէր,

Եթէ օգնէր Նորան մի տաղերդութիւն — կամիմ փորձել,
Արդեօք կարող էր մի քաղցր ձայն ղուարթացնել քեզ։

(Դէպ ի Լաոդիկէն։)

Դու մանուկ աղախին, Ցիռնիայի դուստր, որին
Ողորմած մուզան պարգեւել է ներդաշնակութիւն,
Երգիր մեզ քո հայրենական տաղերից միոը,
Մինչև ես կը քննեմ ապագայի մութ դաղտնիքը։

ԼԱՈԴԻԿԷ

(Ելեր է կենում, ցած է բերում քնարը պատից)։

Մարդերի արտաքանութեան վերայ
Աստուածների հոդու թևերից
Ցած է թափվում քնի բալասանը։
Նորա քաղցր երաշները բերում են
Խաղաղութիւն վշտացած սրտերին
Որ ուտում մաշում են խաւար հոգսեր։
Ցերեկի ցաւերը սիրելու համար,
Այցելութիւն է գործում ուրախութիւնը։
Այժմ կենդանանում են սարերի լարձրութիւնքը
Անտառներով խիտ շրջապատած։ —
Սիրտ լռնելով համարձակվում ես շրջել
Առանց դողալու իւր կեանքի համար,
Վախկոտ եղջերուների բազմութիւնը կանաչի մէջ։
Պատճառ, անտառաշրջիկ օրիորդի [1]) նետը
Դրած է անգործ, որ քաւէ արիւնասիրութիւնը
Սիրու փրկաւէտ ղօրութեամբ։
Դիր, ով Էնդիմիոն [2]), գեղեցիկդ,
Որոնում Նա Թեսալիայի սարերի վերայ։
Նորա սիրտը լցուած է կարօտով ու փափագով,
Որ հալվելով սիրու քաղցրութեան մէջ,

---

[1]) Այս տեղ հասկացվում է Դիանա, դուստր Լեպիտների և Լատոնայի, քոյր Ապոլոնի, աստուածուհի որսորդութեան և լուսնի, և գիշերային կախարդութենների. Թէպետ Դիանան պարկեշտ և միշտ կոյս համլաւած էր, սակայն ունեցել է նոյնպես սիրու գաղտնիք։

[2]) Այն գեղեցիկ պատանին որ Լատմոս սարի վերայ քնած էր. սորան վերայ հասաւ Դիանան և համրուրեց, և այնուհետև չզարթեցաւ երբեք Էնդիմիոնը, մշտնջենաւոր քնով թմրելով։ Դիանան սիրուվէր այս պատանին, ամենայն գիշեր ցած իջանելով երկնքից, համրուրելով սորան և հանդստանալով սորա կողքին։

Հանգստանար քո կողքին, շրթունքը շրթունքիդ հետ
կապած.—
Եւ պարկեշտ սիրու խոցերը բժշկէր
Առաջին սիրու հրաշառ դրկախառնուելիւնը։

Ի՛նչպէս կաղդուրուէ քունը վաստակածին.
Բայց ո՜հ, խոշոր ձեռքերով պիտոյ է շատ անգամ
Նորա խաւար ընկերը վերջացնէ այս տեղ
կեանքի ասպարէզը։ Ով մահ, քանի՛ քանի՛ խաղաղ
ննջածներ

Մորթեց քո թունաւոր հայեացքը,
Եւ հաւատարիմ բարեկամի վշտին
Շմնաց ոչ մի բարեաւ մեայլ մխիթարուելիւն։

ԴԱՑԵԱԿԸ.

Լ՛ուռ կաց, թշուառ դու. այդ ի՛նչ ողբալի տաղ է.

ԱՂԱԽԻՆԸ.

Ո՜հ, իմ խօսքերը դատարկ են արտասուքից.
Բայց մի ճակատագիր առաջնորդուէ իմ խօսքերին։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ով ղարհուրելի նշաններիս. ինչ խորհուրդ ունին դոքա.
(Սեքստոս Տարկվինիոսը և Սուլլիկիոսը գալիս են.)

ՍԵՔՍՏՈՍ.

Լ՛ուկրեցիա.... ինչո՜ւ այդպէս ահ ու դողի մէջ.
Այդ ի՛նչ երկիւղ է, որ տեսանուէմէ քո երեսի վերայ.
Հանգստացիր, ես մահու բօթաբեր չեմ,
Թշնամու ոտք չէ, որ շօշափուէմ քո սեամը (շէմը)։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ներողութիւն, իմ հիւր. ներողութիւն մի կին մարդու երկիւղի.
Մի այդպիսի անյուսալի եկաւորութիւն դղրդեց իմ սիրտը.
Բայց, գալուստդ բարի՛։

ՍԵՔՍՏՈՍ.

Անագան է արդէն,
Բայց չկարողացայ աւելի կանուխ դալ ձեր մօտ,
Եւ այսպէս գալիս եմ անսովոր ժամի մէջ.
Բայց լուր եմ բերում քո սիրելի տղամարդից,
Կոլլատինոսից....

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Կոլլատինոսի՞ց. ով աստուածներ.
Ի՛նչ է առնուտ նա. կամի՞ նա...իմ տղամարդի բարեկամ,
Երկու, երկբպատիկ բաղդաւորումն ինձ ձեր յայտնութիւնը.
Նորա մասին ինչ որ գիտես դու, Սեքստոս, ասա ինձ խնդոյն.

ՍԵՔՍՏՈՍ.

Խնդոյն կամիմ լցուցանել ձեր անհամբեր հարցասիրութիւնը.
Խնդրումեմ միայն, որ հեռացնէք ձեր աղախինքը,
Ինձ պիտոյ է ձեր հետ միայն լինել։

ԼՈՒԿՐԵՑԻԱ (դէպ ի դայեակը).

Հեռացի՛ր, դայեակ.
Տար քո հետ իմ աղախինքը։

ՍԵՔՍՏՈՍ (դէպ ի Ծուլպիկիոսը).

Ծուլպիկիոս, դնա։

(Բոլորեքեան հեռանումեն, մնումեն միայն Լուկրեցիան և Սեքստոսը.)

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ընդ ժամ թող ականջ դնեմ քեզ։

ՍԵՔՍՏՈՍ.

Երանի՛ քեզ, կոլլատինոս.
Ի՛նչպէս ճոխ բաժին հասել է քեզ բաղդի օրհնութենից.
Աւրօրան թող արևաբացի կարմիր քօղն տակից
Տարածանէ քո վերայ ճերմակ օրեր շատ.
Այն օրը, որ պարգևեց քեզ կեանք, ողջունեց
Շնորհալից աչքով մի բարի աստուածուհի.
Պատճառ, սի՛ր դանձը պակաս է, Լուկրեցիա, այն տղամարդին,
Որին բաղդաւորումես դու քո քնքուշ սիրով.
Ո՛րպիսի քաջութիւն պիտոյ է տայ նորան քո սիրող սիրտը
Որ ղարկումէ դողալով, երբ մօտ է նորան մի վտանգ.
Որ հետևումէ նորան մինչև պատերազմի խռովութեան ներսը,
Նորա վէրքի համար արտասուքի բուսական պատրաստելով.
Ցնծալով յաղթողն ուրախ վերադարձի վերայ,
Փափուկ խօսքերով քաղցրացնումես դու նորա հանդստութիւնը.
Երանի՛ թէ կարողանայի իմ արքայական թագը
Տալ փոխարէն այն քաղցր հայեացքին որ պայծառացնումէ նորա սիրտը.
Այն ծիրանի ղգեստը, այն սպիտակ արքայական վերարկուն
Փոխարէն այն հագուստին, որ քո ձեռքը պատրաստումէ նորան.
Ո՛հ, եթէ այդպիսի չնաշխարհիկ բաղդ վիճակվածք լինէր ինձ,

Ամենազգաստ հսկողութեամբ կը պահպանէի դորան.
Այնուհետև չկամէի պատերազմողն գործ լցուցանել,
Պողպատով արիւնոտ օրեր ընտանեկան կեցութենէից։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Այլ թէ Հռոմայեցին պարտական չէ հետևել Հռոմի հրաւէրքին,
Եւ Սեքստոսը հայրենիքի համար թողուլ ամենայն բան.
Այսպէս է կոլլատինոսի ընթացքը, և լաւ է նորա արածը.
Բայց դու չես բերած ինձ ոչինչ լուր։

ՍԵՔՍՏՈՍ.

Ընդարձ բերած եմ.
Ես մոռացումի դորա վերայ. ուշս գնաց վերայիցս.
Ես աւելի շփոթված եմ, քան թէ կարող էիր դու կարծել.
Լուկրեցիա. ո՛հ, մեծարանք ու նախանձ
Շարժումն իմ մէջ ամենայն բան, ինչ որ ես տեսանումեմ այս տեղ.
Այս սրահի հնուց սովորական պատկառելի կերպարանքը,
Պարկեշտ աստուածուհի Վեստայի [1]) նաղելի օթևանը,
Խաղաղ սրահը, խռովայոյզ ուրախութիւններից աղատ,
Ձէ անպատուում հայրենական օթևանի ծանրութիւնը.
Այդ սակառները, այդ բուրդը, այդ լապտերը
Գործունեայ ժամեր ճշդութեամբ գողանալով քնից,
Տեսանումեն Պալլասին [2]) քաղցր լռութեամբ ցած իջանել այս տեղ,
Իւղի ճրագը պահպանելով գիշերային աշխատութեան համար։
Պալլասը հիացած է գտանելով քեզ այդպէս գեղեցիկ, այդպէս
իմաստուն.
Եւ վախումէ, մի՛ գուցէ որպէս մի նոր Պալլաս
Պաշտեն քեզ մարդիկ աղօթքով ու պատարագով։
Ի՛նչ ասեմ — երկիւղած պատկառանքով լցուած

---

[1]) Վեստա, դուստր Կռնոսի և Հռէայի, աստուածուհի տնային կրակարանի, որ ամենայն հռոմէական տան մէջ պաշտվուածը միւս սրբութիւնների հետ միասին։ Բայց դորա գլխաւոր պաշտօնը կատարվուածը հրապարակով Վեստայի տաճարի մէջ վեց քրմուհիների ձեռքով. այդ քրմուհիքը սովուածն Վեստալեանք և էին կոյս աղջիկներ. սոցա պարտականութիւնը այն էր, որ պահպանէին տաճարի մէջ մի անշիջանելի կրակ որ եթէ հանգաւ, համարվուածը մեծ ձախորդութիւն տերութեան համար, և յանցաւորը պատժվուածը մեծ քահանայապետի ձեռքով։

[2]) Պալլաս Աթենէ, անմայր դուստր Դիոսի, որի ուղեղից, ինչպէս ասուածն Ցուպնայ առասպելը, դուրս է թռել նա, երբ որ Դիոսը կուլ էր տուած իւր ամուսնի Սեմիսը (խոհեմութիւնը)։ Աստուածուհի խոհեմութեան և իմաստութեան, այլև պաշտպան ամենայն խոհեմ և ժրաջան տղամարդերի և կանանց։

կարծումեմ թէ գտանվլումեմ այս տեղ աստուածների տաճարի մէջ.
Եւ դու աստուածների շարքում երևումես ինձ
Որպէս լարձր Թագուհի Հղօր ղօրութեամբ։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Խայց, Սեքստոս, այժմ խօսի՛ր դու իմ տղամարդիս մասին,
Իմ Կոլլատինոսի. Ի՛նչ կամի նա։

ՍԵՔՍՏՈՍ.

Ոչինչ.

Ես նորա մօտից չեմ գալիս.

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ապա ի՛նչ է քո այցելութեան խորհուրդը.
Ի՛նչ էր ապա քո խօսքը։

ՍԵՔՍՏՈՍ.

Դա մի մեծակշիռ բան չէ...
Բայց ինչո՞ւ սար ու ձոր եմ ընկել։ Ոչինչ չգիտեմ ես ոչ Հռոմի,
Ոչ ղօրքի և ղօրավարների և ոչ Կոլլատինոսի մասին։
Այս տեղ ոչինչ չգիտեմ, բայց միայն քեզ և ինձ.
Ես եկայ քո մօտ....ես եկայ....որովհետև սիրումեմ քեզ։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Այդպէ՞ս. մշանջենաւոր աստուածք։

ՍԵՔՍՏՈՍ.

Այո՛ սիրումեմ քեզ. Թող ծանր չլինի քեզ
Իմ Համարձակ խօսքս. մի՛ մերժիր ինձ.
Ես սիրումեմ քեզ, սկսեալ այն օրից, երբ օր եղած եմ քո Հիւրը.
Ես եկայ Կոլլատինոսի Հետ. իմ մեղքս չէ.
Մի ծածկախորհուրդ Հպարտութիւն
Ծանօթացրեց ինձ քո Հայեացքի կախարդող ղօրութիւնը.
Քո պատկերը մնաց է գալիս քամահրից. ուր և նայումեմ,
Ամեն տեղ աչքիս առաջևն է Լուկրեցիան, նորա տնարարութիւնը.
Հեռուից ու մօտից պատնումեմ քեզ միշտ իմ կողքիս։
Ոչինչ այլևս տեսանում չեմ բաց ի քեզանից. զուր էր իմ ջանքը
Պատերազմելով յաղթահարել իմ անձը.
Անպաշտպան իմ ես. Սէրը կապել է ինձ,
Որսորդի նետից վերաւորված գայլն նման
Կծումեմ ես իմ սպանողը, կրելով սրտիս մէջ նոյն իսկ մահը։

Պիտոյ է ինձ լցուցանել իմ բորբոքված արիւնի կամքը,
Ապա թէ ոչ, կը մեռանիմ որպէս զոհ այդ կրակին։

(Լուկրեցիան, որ այս խօսուածքի միջոցում առել էր մի ծանրահայեաց կերպարանք, կամենում խօսել.)

Ո՛հ, ականջ դիր ինձ դեռ ևս, երկնաքաղցի կին դու,
Քեզ կարող չէ երկրաւոր սէրը կուրացնել,
Դու սլանում ես դէպ ի արեգակը, և քո պարկեշտ ճակատը
Անթափարտում և խորամանկութիւն և չանցանք.
Լսի՛ր իմ առաջարկութիւնը. Հռոմը կարօտ է քաջ տղամարդերի,
Բայց մի անզաւակ ամուսնութիւն ղրկում նորան պատերազմողներից.
Այդ երողութիւնը իրաւունք է տալիս քեզ քակտել քո
ամուսնութիւնը.

Տարկվինիոսի հրամանը կը տիպէ քո ամուսնակիցը
Լուծանել այդ անպատշաճ զուգաւորութեան կապը,
Որի վերայ բարկացած աչքով նայում Լուցինան [1]).
Լինելով բաժանված երկուքս ևս, կը լինինք երկուքս ևս ազատ,
Եւ կը ծաղկի մի նոր ամուսնութիւն մեր սիրու մէջ։

(Լուկրեցիան դարձեալ փորձում խօսելու.)

Եւ խօսի՛ր դու. կոլլատինոսը սիրած է քեզ երբ և իցէ.
Դու չես սիրում նորան, դու և կարող չես սիրել նորան.
Լուկրեցիան չէ սիրում մի տղամարդ որ նորանից ստոր է,
Եւ կոլլատինոսը չէ հասանում քո բարձրութեանը.
Նա լինելով թէև թագաւորական արիւնից, թէև մի կոլլատինոս,
Բայց չեղաւ երկիւղալի Տարկվինիոս թագաւորին։
Մի թանգագին գանձ ուներ նա ծածկապէս,
Եւ կոպտութեամբ պարծելով, լացում նա քօղը։
Մի այդպիսի տղամարդ չէ կարող լցուցանել քո սիրտը,
Դու յարգում ես նորա մէջ քո յատուկ արժանաւորութիւնը միայն.
Մի խօսք ևս. — Խոլորը պիտոյ է, այո՛ արժան է քեզ իմանալ.
Տարկվինիոսը ինձ պիտի թողու արքայական թագը,
Ես արժանի իմ դորան. միայն թէ, միայն թէ կարո՛ղ էի ևս,
Ցառաջ տանել այն վստահամիտ շինուածքը, որ նա փորձում.
Եթէ դու չկամիր խափանել իմ փառքի թռիչքը.
Պատճառ, իմ յանկութիւնը պողոպատի պըրութիւն է տալիս Հոգուս։
Հռոմայեցիք այժմ ցուցանումեն աւելի հաճոյական բարք ու վարք,

---

[1]) Քոյր և ամուսին Դիոսի, Թագուհի երկնքի, պաշտոնական ամուսնութեան և ծնած մանուկների։ Նա տես՛ր և Իւնո։

Եւ այդպէս պիտի ծանրանալու չէ իմ լուծը նոցա վերայ.
Նոր կարիքների հետ կը ծանօթացնեմ ես նորանց,
Թող նոցա յոյսը ապրի տիրոջ երեսի քաղցր ժպտելուց.
Ոչ, ուրքան շուք և ուրքան փառահեղութիւն
Այս իշխանութեան մէջ որ այդքան լի է կամքի կարողութեամբ.
Գեղեցիկ է թագաւոր լինել. Այն մի հատ տղամարդի
Մի հպարտ հայեացքը հրամայում բոլոր միւսերին,
Եւ նա իւր կամքի անսահմանութեամբ,
Մի հատ խօսքով լռեցնում ժողովրդի տրտունջը.
Ահա, այսպիսի մեծութիւն սպասում քո վստահութեանը,
Լուկրեցիա. խօսիր, չկամի՞ս դու իմ հետ կցորդ լինել դորան։
Իմ խորհուրդը վճռած է, Տարկվինիոսը կ՛օդնէ ինձ.
Երբ որ մեռաւ նա, կ՛առնում ձեռքս նորա գայիսոնը,
Ինչպէս արել է նա, անտես կ՛առնեմ ես նուիրական արարողութիւնքը,
Շուտով կը տաղտկացնեմ Հռոմէացոց համար իւրեանց ընտրութիւնքը,
Ես կը լինիմ թագաւոր — և դու, Լուկրեցիա, —
Թագուհի....

ԼՈՒԿՐԵՑԻԱ

(Առաջին խռովութենից յետոյ սառնութեամբ լսել էր նորան).

Ես հաւատարիմ կը մնամ ինձ և իմ ամուսին տղամարդիս.
Դու կարող ես խօսել, և ես կարող չեմ հաւատալ
Թէ դու կամիս այս սև խայտառակութիւնը կատարել,
Որ դու որպէս ազգական, բարեկամ, այո՛ և որպէս հիւր
Կամէիր այդպէս վատթարաբար անպատուել քո բացակայ հիւրընկալը.
Ես կարող չեմ հաւատալ, թէ մի հոգի
Ամիսիւումէր իւր մէջ մի այդպիսի ամբարշտութիւն,
Թէ մի մարդ գալիս էր մի ամուսնացած մարդու տունն,
Ցաւիշտակելու նորա ամուսին կինը.
Ա՛խ. դու սխալվումես. ես իմ ամուսին տղամարդս պատուումեմ,
Նա միշտ սիրելի է ինձ, թէև դու այդքան անարգեցիր նորան.
Նա լարձրապատիւ է քան թէ դու, որովհետև նա
Չէր առնելու այն բանը, ինչ որ դու համարձակվեցար առնել.
Շատ սիրումեմ ես նորան, քան թէ կարող էի երկպառակութեան վերայ մտածել,
Թէև մի այդպիսի բաժանումն չլինէր անաստուած.
Ես չկամիմ մնանակից լինել քո քաղաքական խորհուրդներին,
Պատճառ, ես կարող չեմ այդպիսի սանձեր վարել.

Բայց, եթէ ուղիղ եմ հասկանում, դու ընտրում ես ճանապարհներ,
Անարգելով և բարի թագաւորը և բարի քաղաքացին,
Քեզ արժան է ուղղել լարքերը և ոչ թէ աւերել,
Բարձրացնել, բայց ոչ դեպ ի ցած կործանել, և ուսիր
Աշխիւ խորհրդով վաստակել քո հաւատը.
Բարեաւ կացիր։

ՍԵՔՍՏՈՍ.

Դու փախչո՞ւմես ինձանից։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Մի այլ նախատինքից։

ՍԵՔՍՏՈՍ.

Ընդհատում եմ քեզ հիւրասիրութեան անունով։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Դու կեղտոտում ես նորա պատիւը։

ՍԵՔՍՏՈՍ.

Ընդհատում եմ քեզ իմ սիրու անունով։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Լուռ կաց, չկամիմ լսել այդպիսի խօսք անգամ։

ՍԵՔՍՏՈՍ.

Վ՚ախեցիր յուսահատ սրտի հետևանքից։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ընդհատում եմ ամօթից։

ՍԵՔՍՏՈՍ.

(Բարձրացնելով ձայնը և սպառնական ոճով.)

Ո՛չ. մնա։

(Լուռթեան րոպէ. Լուկրեցիան զարհուրանքի մէջ, բայց պատկառելի կերպարանքով. Սեքստոսը տեսանելով Լուկրեցիան այս դրութեան մէջ, մեղմանում է և սպառնալիքը փոխում է պատկառանք.)

Լուկրեցիա, սուրբ ամուսնակից դու,
Մի՛ վախեցիր, ների՛ր դու իմ խորամանկութեանը,
Դարձեալ յաղթող հանդիսացար դու արժանապէս.
Պատճառ, առաջինով բաւական չէի ես.
Նոյն փորձը քո սեփական տան մէջ
Խայտառակեց իմ հաւատը ամենանախատ կերպով.
Երկու աշխիւ յաղթութիւնք ձեռք ես բերել դու.

Դու հաստատել ես ապացուցումներս ես յաղթված եմ.
Շտապում եմ բերան առ բերան քո ամուսին տղամարդին
Եգուց առաւօտ ծանուցանել քո նոր յաղթութիւնքը.

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Վո պարծանքի համար, Սեքստոս, կամիմ հաւատալ դորան.
Բայց այսուհետև չկամիմ քո հետ միասին մնալ այս տեղ.
Փորձութիւնը չափից դուրս էր. պատշաճաւորութիւնը
Ստիպում ինձ, այդպիսի խօսուածքից յետոյ, հեռանալ քո մօտից.

ՀՎԴՆԳՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ. ՏԵՍԱՐԱՆ 1. 2. 3. 4.

(Տարկվինիոս Կոլլատինոսի տունը. չորս աթոռք դրած են պատրաստ. երեքի վերայ հանդստացած են Կոլլատինոսը, Վալերիոսը և Բրուտոսը. չորրորդը դատարկ է. ժամանակը ցերեկ է.)

ԿԼՈՂԱՏԻՆՈՍ. ԲՐՈՒՏՈՍ. ՎԱԼԵՐԻՈՍ.

ՎԱԼԵՐԻՈՍ.

(Կոլլատինոսին ցոյց տալով դատարկ աթոռը.)

Ո՛ր չորրորդի համար պատրաստած է այդ դատարկ աթոռը,
Եւ ուզի՞ն էք սպասում դեռ ևս.

ԿՈՂԱՏԻՆՈՍ.

Ղիտեմ.
Բայց տեսէ՛ք, ահա մօտենում հեռուից այն ծերունին,
Մի արժանապատիւ ալևոր, Լուկրեցիայի հայրն է դա,

(Լուկրեցիոսը նեղս է մտանում, վեր են կենում ամենքեան.)

ԼՈՒԿՐԵՑԻՈՍ.

Ով իմ զաւակներ, խօսեցէք, ասացէք ալևորիս,
Ի՛նչ է պատահել. դեռ ևս չո՞ւշ չէ իմ գալուստը.

(Լուկրեցիոսը հանդստանում, միւսերը մնում են կանգնած և շրջապատում նորան.)

Ամենասիրելի խաղաղութեան մէջ ապրում եմ հանդարտօրէն.
Պատճառ, ոչինչ այլևս կարող չէ իմ կեանքս օգտել աշխարհին.
Հայրենիքին ծառայում էի միանգամ, բայց այժմ
Թող դուք աւելի լաւ ղօրութեամբ հոգաբարձու լինիք նորա օգտին.
Ա՛յս օր առաւօտուն լուր են բերում ինձ,
Թէ իմ դուստրս կարօտագին խնդրում ինձ գալ իւր մօտ.
Գիտէ՞ք այս բանի նորհուրդը.

ԿՈՂԼԱՏԻՆՈՍ.

Ո՛չ. մեք ևս ամենեքեան այս տեղ,
Ինչպէս դու, արժանապատիւ ծերունի, սպասումենք
Տեղեկանալու բանի խորհրդին.
Եւ ինձ այս առաւօտ դէպ ի բանակս
Լրաբեր էր ուղարկել ծանրակշիռ բաների մասին.
«Թէ Լուկրեցիան խնդրումէ ինձ և Բրուտոսը,
Եւ մի այլ բարեկամ, որ ընտրելու էր Բրուտոսը.»
Այսպէս խօսեց լրաբերը։ Բրուտոսը ճանապարհի վերայ,
Միշտ Հռոմից տանուամբ իւր հետ Վալերիոսին։ Բայց ի սորանից
Ոչինչ չգիտեմ ես, արդեօք յայտողութիւն թէ ձախորդութիւն
Գանչել է մեզ։ Լուկրեցիան հրամայել է խնդրել մեզ մնալ այս տեղ.
Երբ որ ամենեքեան այս տեղ էին, գալու է և ինքը։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Ահա գալիս է նա.

(Լուկրեցիան ծածկած մի սեք քողով, որ ցած է թափվում նորա գլխուի վերայ, ներս է մտանում.)

ԼՈՒԿՐԵՑԻՈՍԸ

(Բարձրանալով տեղից, հանդիպել է գնում Լուկրեցիային).

Այդ ի՛նչ բան է. քո մազերը արձակած, հայեացքդ դէպ ի գետին.
Մի սեւ քո՞ղ. այդ ի՛նչ ահաւոր գալստիք է.
Իմ գլուակ.—Նա լուռ է, աչքերի մէջ լողումեն արտասուքը.
Ի՛նչ ես լաց լինում։

ԼՈՒԿՐԵՑԻԱ (մի քանի րոպէ լուռ մնալուց յետոյ).

Իմ վերայ, իմ վերայ յատկապէս ցաւումեմ ես,
Իմ ամօթիս վերայ։

ԿՈՂԼԱՏԻՆՈՍ.

Այդ ի՛նչ խօսք է, Լուկրեցիա։

ԼՈՒԿՐԵՑԻՈՍ.

Ես չկամիմ մտածել, թէ ի՛նչ է դորա խորհուրդը.

ԿՈՂԼԱՏԻՆՈՍ.

Լուկրեցիա, խօսի՛ր, իմ աղնիւ կին։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ո՛չ այդպէս.

Ո՛չ այլևս քո կին. չկամիմ այսուհետև այդ անունը,
Մեռած է քո ամուսինը։

ԿՈՂԼԱՏԻՆՈՍ.

Ո՞ւրա՞ծ է ամուսինս։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ա՛խ. մի՛ թէ
Լսորհուրդ ունի դեռ ևս մարմնի կենդանութիւնը,
Երբ որ մեռած էր ամօթը.
Պղծած է այն մարմինը որ դու տեսանուամես,
Բայց մաքուր է հոգին. ես կամիմ գործով հաստատել.
Լսիր ինձ, Կոլլատինոս, լսիր ինձ, իմ հայր.

(Նա աւելի կշիռ է տալիս Ցունիոս անունին.)

Դու Ցունիոս, և դու, Վալերիոս, լսեցէ՛ք.
Երդուեցէք ձեր աչ ձեռքով, ձեր հաւատարմութեամբ,
Թէ վըճիժ պիտի հնձէ ամբարշտութեան սերմը։

ԱՄԵՆԵՔԵԱՆ (բարձրացնելով ձեռքերը).

Երդուումենք։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Մեղապարտ է Սեքստոսը.
Սեքստոսը յարուցել է այս ահաւոր փոթորիկը.
Հատուցումն արեցէք ինձ և Նորան, եթէ սիրտ կայ ձեր մէջ։

ԲՐՈՒՏՈՍ.

Ո՛Չ.

ԿՈՂԼԱՏԻՆՈՍ.

Սեքստո՛ս, Սեքստո՛ս։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Հառաջ տար խօսքդ։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ուստ պատճառանքով
Ոչ եկաւ այս տեղ երեկեան երեկոյին, մութ գիշերով.
Ես ընդունեցի Նորան, որպէս հիւր. վա՛յ իմ կորստաբեր
հիւրասիրութեանը.
Գիշերին, երբ որ քնած էի ես, մտաւ նա իմ անկողնին.
Ես պարծենումեմ՝ ցնսանումեմ Նորան և դաշնակը.
Փայլուն պողպատը դնելով սրտիս վերայ, խօսումէ նա.
«Լուռ կեցիր, դու կը մեռանիս, եթէ կամք չտաս ինձ.
«Այս սրովս, որ այս րոպէիս անց կը կենայ քո սրտի միջից,
«Կը մորթեմ ես իմ ծառաներից մինը ցածումը,

«կը դնեմ քո կողքին այդ անշնչացած մարդը,
«եւ աղաղակ բարձրացնելով կը բանամ դուռը և ձայն կը տամ.
«թէ այս տեղ վերայ հասայ ես այն կնոջ անառակ գործին,
«եւ այսպէս քո մահը ամօթ միայն կը բերէ քո վերայ.
«Անարժան դերեզմանի, կը նեխէ քո մարմինը դուրսումը։

ԲՐՈՒՏՈՍ.

ՈՂ։

ԿՈԼԼԱՏԻՆՈՍ.

Ովստագրաժ Սեքստոս։

ԼՈՒԿՐԵՑԻՈՍ.

Իմ անբաղդ ալաւակ.

ԶԱԼԵՐԻՈՍ.

Գարշելի՜ Տարկվինիոսեանք։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Ես չվախեցայ մնհուց, բայց վախեցայ ամօթից.
Պատճառ, մեռանելով այն թոպկին, պիտոյ է մեռանէի խայտառակված.
Եւ անմեղութեան վերայ դնելով մի անջնջելի արատ,
Հեռացաւ պաշտաւորը ծիծաղելով ու անպատիժ։
Այդ պատճառով «Հա կենդանի եմ ես—Ես արժանի եմ պատժի,
Բայց թող ամեն մինը ստանայ իւր արժանի հատուցումը.
Մինչև այժմ միայն կամէի ես ապրել, որ իմանայիր,
Թէ ինն է պատիժը, իսկ նորան—նախատինքը։

ԿՈԼԼԱՏԻՆՈՍ.

Ով սեմսոհ կին դու, ինչ խօսք կայ այս տեղ պատժի վերայ.
Դա արժանի չէ անբաղդութեանը, այլ յանցանքին միայն.
Մի՛ ողբա քո վերայ, դու չես անարգել քո անձը.
Այն տեղ միայն, ուր դիտաւորութիւնն էր, կայ և մեղապարտութիւն.
Անկողինը պղծած է այո՛, բայց սուրբ է ամուսինը.
Մարմնի ապականութիւնը սուրբ է թողել հոգին.
Դա ստանում միայն աւելի մեծութիւն, ինչքան որ դու ինքդ
Դատապարտումիր քո անձը. բայց ամենայն կին մարդ
Պարտակում ամուսնութեան բռնի գողութիւնը.
Անբարբառ գործը չէ քարշում կինը դատաստանի առաջև.
Պարծանք է այն նախատինքը որ երևում այդպէս.
Նորա ամօթի կարմրութիւնը ճառագայթելով յաղթում ամենայն
արատի.

Ես սիրումեմ քեզ, անբաղդ դու, պարծանքով անպատուած.
Արի՛, հանդարտիր. քո վըհէժը կը հանվի։

ԼՈՒԿՐԵՑԻՈՍ.

Վհաջալերվի՛ր, իմ զաւակ, վերուղղի՛ր քո հայեացքը,
Ահա ես, իբրև քո Հայր, իբրև ալեւոր աղաչելով
Ասումեմ քեզ. Դու կարող ես համարձակ նայել մեր երեսին։
Իմ համբոյրս կը սրբէ ամենայն արատաւորութեան կեղտ։

(Նա համբուրումէ Լուկրեցիայի ճակատը.)

Ո՛վ կարող է պարտաւորել քեզ, երբ որ ես վճռել եմ դատը։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Հ՞նորհակալ եմ քեզանից, Հայր.
Շնորհակալ եմ, Կոլլատինոս. բայց դեռ ևս մնումէ մի դատաւոր։

ԿՈԼԼԱՏԻՆՈՍ.

Ո՞վ է դա։

ԼՈՒԿՐԵՑԻԱ.

Նա ինքս. ոչ թէ նախատինք, այլ պատիժ է իմ մասը.
Թող մի յարմարաւոր պատճառանք չլինի իմ օրինակը —
Եթէ մի այլ ամուսին խախտել էր իւր դրած ուխտը —
Անպատիժ թողուլ պարտակցութիւնը.
Դուք կը պաշտէք Սեքստոսին. այդ պահանջումեմ ես.
Բայց ասացի ես, թէ մահուց երկիւղ չունիմ ես. — Թող մնտենայ դա։

(Սպանուածի իւր անձը այն սրով որ թագուցել էր իւր հանդերձի մէջ, և վայր է ընկնում.)

ԿՈԼԼԱՏԻՆՈՍ.

Լուկրեցիա, Լուկրեցիա։

ԼՈՒԿՐԵՑԻՈՍ.

Իմ դուստր։

ԿԱԼԼԱՏԻՆՈՍ.

Իմ կին։

ՎԱԼԵՐԻՈՍ

Երկնայի՞ն պետութիւնք։

ԼՈՒԿՐԵՑԻՈՍ.

Այս մեռած է։

ԿՈԼԼԱՏԻՆՈՍ.

Այո, մեռած է։

ԲՐՈՒՏՈՍ

(Լուկրեցիայի վերջին դուրս հանելով սուրը, դեպ ի վեր է բարձրացնում նորան)։

Այս արիւնովս, որ բոլոր կանանց արիւնից ամենամաքուրն է,
Որ մի վատթար երիտասարդ համարձակվել է պղծութեամբ թունաւորել,
Երդուում եմ ես, և դուք վկայ էք իմ երդմանս,
Դուք բոլոր մշտնջենաւոր աստուածքդ, որ այսուհետև,
Ես ամենայն տեղ կրակով ու սրով,
Որքան կարող էի, անդադար և անյապաղ
Հալածելու եմ Տարկվինիոսը, նորա տունը և ազգատոհմը։
Ազատել կամիմ Հռոմը այս թունից
Եւ այնպէս ջարդել ու փշրել նորա թագը և դայխտոնը,
Որ դոքա ոչ նորան և ոչ միւսերին պիտանի լինէին։
Սկսած այս օրից, Հռոմ, մեռած են քո թագաւորքը։
Դուք մի՛ լացէք այսուհետև, խօսեցէք, ինչպէս խօսում եմ։

(Նա տալիս է սուրը միւսերին։)

ՎԱԼԵՐԻՈՍ։

Տեսէ՛ք տեսէ՛ք։ սա Ցունիոսն է։

ԿՈԼԼԱՏԻՆՈՍ։

Այս ի՛նչ հրաշք է, աստուածք։

ՎԱԼԵՐԻՈՍ։

Հռոմի ճակատագիրը խօսեց մի պատգամախօսի բերանով։

ԿՈԼԼԱՏԻՆՈՍ։

Ով և էիր դու, որ վառեց իմ հոգին։
Տուր, որ իմ խօսքս հետևի քո խօսքին։

(Նա վեր է կալնում սուրը և բարձրացնում նորան դեպ ի վեր։)

Դուք, մշտնջենաւոր աստուածքդ, տեսէք այս պողովատը
Որ հրատարակում պատերազմ ընդդէմ իմ կնոջ սպանողներին։
Նոքա չճանաչեցին չափ ու սահման, և ես ճանաչելու չեմ
ցաւակցութիւն։
Բնաջինջ կ՝առնեմ նորանց իմ ատելութեամբս,
Արմատից կը վերացնեմ ես նոցա ամբողջ,
Ջարդուփշուր արած գործ կը դնեմ նորան որպէս վառելու նիւթ
Քո փայտակուտի համար, Լուկրեցիա։ քեզ կը նուիրեմ։
Վալերիոս, վեր կաց։

ՎԱԼԵՐԻՈՍ (վեր է կալնում սուրը)։

Ընծեանք լինիմ ձեզանից, աստուածներ, եթէ խնայեմ Տարկվինիոսին։

ԼՈՒԿՐԵՑԻՈՍ

(վեր է կալնում սուրը)։

Տուր ինձ։

ԲՐՈՒՏՈՍ (դեպ ի Վալերիոսը)։

Վաղի՛ր, ձայն տուր ժողովրդին, որ հաւաքվի այս տեղ։

ԼՈՒԿՐԵՑԻՈՍ։

Որդեակներ,
Լուսնեամբ ականջ դրեցէք իմ անէծքի ծանրութեանը,
Մի՛ արհամարհէք նորան, ըստ որում դաղումէին իմ ծունկերը։
Զօրութիւնս փախել է, ճաշել են միայն սպիտակ մազերս։
Իմ բազուկս տկար է, բայց բերանս կարող է նզովել։
Դուք, աստուածք, որ պատժումէք խաւարի թագաւորութեան մէջ,
Ո՛հ, նեղէ ճշմարիտ է, որ դուք լսումէք աղօթքը
Կենդանիների որ ծանրացած են իւրեանց օրերով։
Ապա հալածեցէք այն ահաբիշտը դեպ ի անվերջ թշուառութիւն,
Որ նա օտարութեան մէջ կարեկցութիւն մուրայ,
Հալումաշ եղած, ամենայն տեղ օգնութիւն աղերսէ,
Թափած արիւնը քաւելով արտասուքի հեղեղներով։

ԲՐՈՒՏՈՍ (դարձեալ վեր է կալնում սուրը և մօտենում Լուկրեցիայի դիակին)։

Ո՛վ խաղաղութիւն գտանէ քո հոգին, անմեղ ո՛հ դու,
Այս մեր խնդրուածքով, որ քաւումեն չարագործութիւնը։

(Դեպ ի Կոլատինոս և Լուկրեցիոս։)

Ըլժիր փակեցէք նորա աչքերը ձեր ձեռքով,
Եւ թող հրեք անգամ, ինչպէս սովորութիւն է, ձայն տանք նորան։

(Լուկրեցիոսը և Կոլատինոսը նոյնպէս մօտենում դիակին։)

Լսիր մեզ, Լուկրեցիա։

ԼՈՒԿՐԵՑԻՈՍ։

Ով Լուկրեցիա, լսիր մեզ։

ԿՈԼԼԱՏԻՆՈՍ։

Լսի՛ր, լսի՛ր դու մեզ, Լուկրեցիա։

(Աղմուկ տեսարանի քամակում. Վալերիոսը յետ է դալիս։)

ՎԱԼԵՐԻՈՍ (դեպ ի Բրուտոսը)։

Ժողովուրդը հաւաքվումէ, յուռաչ է դիմում այս տեղ։
Յարձակվումէ դարպասի վերայ։ ի՛նչ պիտոյ է առնել այժմ։

ԲՐՈՒՏՈՍ

Լ՛ր՛,

Թո՛ղ բանանք նոցա դարպասը։

(Բրուտոսը և Վալերիոսը բացումն դրան վայրագոյնները սենեկի յետնակողմում և այն տեղից դուրս են երթում դեպ ի գաւիթը, որ այս տեղ բանան տունը ներս կամեցող ժողովրդին։ Բազմութիւնը յարձակվում թատրոնական հրապարակի մէջ.)

ԲՐՈՒՏՈՍ.

Ով քաղաքացիք Հռոմի,

ՄԻ ՔԱՂԱՔԱՑԻ.

Տեսէ՛ք տեսէ՛ք յիմար Բրուտոսը։

ՄԻՒՍ ՔԱՂԱՔԱՑԻ.

Ի՛նչ կայ դա ասել մեզ։

ԱՌԱՋԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ.

Ականջ դրեցէք, թէ ինչ ծաղրալի բան ասելու էր մեզ։

ԲՐՈՒՏՈՍ.

Յիմար Բրուտոսը չկայ այսուհետև. պատճառ, յիմարի
Տեղը յաջորդել է այժմ վրէժխնդիր Բրուտոսը։
Իմ անձը փրկելու համար չետ դրեցի ես բանական մարդկութիւնը.
Այժմ, Հռոմը փրկելու համար, վերստին ընդունում եմ նորան.
Ով քաղաքացիք, դարձուցէք ձեր աչքը այս տեղ,
Տեսէք, տեսէք այս դիակը։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Տեսէք այս արիւնաթաթաւ դիակը։

ԲՐՈՒՏՈՍ.

Սա Լուկրեցիայի դիակն է։

ՎԱԼԵՐԻՈՍ.

Զարհուրելի՛ ճակատագիր։

ԲՐՈՒՏՈՍ.

Ո՜հ, ամենաշնիւ, ամենանքաղդ կին.
Գիտութիւն լինի ձեզ, որ մի մարդ այս պիշերիս,
Մի գող աւազակ որպէս հիւր ներս է սողացել նորա մօտ,
Սուրը ձեռքին, սպառնական խօսքերով
Ապականել է պարկեշտ անկոծին սրտութիւնը,
Չինուորված անպատուել է նա....

ՓԱՂԱՓԱՑԻՔ.

Ո՛վ խայտառակ գործիս.

ԲՐՈՒՏՈՍ.

Կինը չկամեցաւ այսուհետև ապրել անպատուութեամբ,
Ահա րոպէիս ահա ընտրելով մեզ իւր վրէժխնդիրը,
պատժեց իւր անձը օտարի վատթարութեան փոխանակ.
Տեսէք այս դաշնակը որի վերայ դեռ ևս մածւած է արիւնը,
Ես ինքս դուրս քարշեցի նորան Լուկրեցիայի մաքուր կուրծքից.

ԼՈՒԿՐԵՑԻՈՍ.

Ո՜հ, դու իմ անբաղդ զաւակ.

ՎԱԼԵՐԻՈՍ.

Լսեցէ՛ք նորա ծնողքին.

ԲՐՈՒՏՈՍ.

Ահա ժամանակ չկայ դանգատելու. դեպ ի
վրէժխնդրութիւն միայն.
Մի տղամարդ պատժապարտ է.

ՎԱԼԵՐԻՈՍ.

Ո՞ր մեռանի նղովեալը.

ՓԱՂԱՓԱՑԻՔ (կատաղաբար յարձակվելով դեպ ի բրուտոսը).

Ասա, ասա մեզ այդ չարագործի անունը.

ԲՐՈՒՏՈՍ.

Սեքստոս, Տարկվինիոս Թագաւորի որդին.

ՓԱՂԱՓԱՑԻՔ (զարհուրած յետ քարշվելով).

Ստուածք.

ԲՐՈՒՏՈՍ.

Այո՛, Տարկվինիոս Թագաւորի որդին. այդպիսի դաւաճանութիւն
Արժանի է Տարկվինիոս Թագաւորի որդուն,
Ահա գործը վայել է Սեքստոսին. պատճառ այդ ազգատոհմը
Կրումէ յանցաւորութիւնը, արդէն իւր արիւնի մէջ.
Ցիշեցէք, Հռոմայեցիք. յիշեցէք, թէ սկսեալ նոյն իսկ մանկութենից
Ինչպէս յառաջ է գնացել Տարկվինիոսը
Մի վատթարութենից դեպ ի միւս աւելի մեծ վատթարութիւն
Տեսէք նորան ձեր առաջև իւր բոլոր սևութեան մէջ
Իւր եղբօր կնոջ հետ, նախ պղծութիւն գործելով
Սպանեց իւր յատուկ կինը, իւր եղբայրը,

Որ նոցա դիակները իւր ոտքի պատուանդան շինած,
Ներս մտանէ ամուսնապիղծ անկողնի մէջ։
Այսօր այրի, էգուց դարձեալ ամուսնացած, վառում նա
Իւր հարսանիքի ջահերը այն երկու սպանածների փայտակոյտի վերայ։
Բայց անյապելն, որպես թէ հերիք չէին նորան
Իւր անաստուած մարդասպանութիւնը — ըստ որում
Դեռ ևս պակաս էր հայրասպանութիւն —
Պատածում նա այն սարսափելի գործը, որ իւր ձեռ բարի թագաւոր
Սերվիոսին
Ծերակուտից դուրս քարշեց և սիւնազարդ սրահից
Ցած ձգեց հրապարակի վերայ որպես մի ծառայ։
Եւ երբ որ թագաւորը ջարդած փշրած անդամներով
Մի քանի քայլափոխ քարշ դալով, վերջը ընկաւ ղարկվելով
Տարկվինիոսի հար ընկերներից։
Ցիշեցէք այն դուստրը, Տարկվինիոսի արժանի կինը
Որ լըրութեամբ անց կացաւ կառքով իւր հօր դիակի վերայից,
Այնպես որ այն փողոցը մինչև այժմ որպես նշան քաւութեան
Ասվում Սցելերատա [1]) այն յանցանքի պատճառով։
Դուք, դժոխային հոգիք, վրէժխնդրութեան աստուածուհիք,
Դուք, որ մտրակներով խարազանումէք հայրասպանքը,
Որոնց վերայ յարձակվումեն ձեր օձերը, մի՞ թէ տեսանելով
Այսպիսի ղարհուրելի գործեր, կամիք լուռ մնալ։ —
Բայց, քաղաքացիք, այս մեղքերը արել է նա որպես մասնաւոր մարդ։
Ի՛նչ է արել նա, երբ որ Հռոմի թագաւոր էր։
Անպատիժ է դարձել ժողովրդի հրապարակը։
Ձեր ընտրողական իրաւունքը, որ Հռոմոլոսը
Թողել էր ձեր կամքին, դրած է կապած ու կաշկանդած։
Նոքա, որ միանգամ օրէնքներ էին տալիս, այժմ ծառայք են,
Բնրանները խցկած և ոտքերը կապանքի մէջ։
Այսուհետև չունիք դուք իշխանութիւն ոչ խաղաղութեան
և ոչ պատերազմի վերայ։
Դուք այժմ փայտ էք կոտրում, այժմ բեռնակիր դրաստներ էք։
Ո՛հ։ Հին պատերազմողք, ձեր վերաւոր ձեռքերով
Պարտ էք այժմ իստակել ապականութեան փողովակները։
Պատճառ, Հռոմի որդիքը, այն աղիւս քաջ տղամարդիկը
Ցաղթեցին բոլոր ազգերին Հռոմի շրջակայքում,

[1]) Յանցաւորութեան փողոց։

Եւ Տարկվինիոսեանք, այս քաջ տղամարդերին,
Ով ամօթուս, շինեցին միայտ կտրողներ, բեռնաբարձ անասունք.
Ո՛հ. կը հասանէ՞ր մի օր այս նախատինքի վերջը.
Թող Տարկվինիոսի մահը յոյս տար մեզ խաղաղութեան,
Բայց նորա որդիքը.... պակաս չեն իւրեանց հօրից.
Ի՛նչ են գործում նորա այն մեղքերից յետոյ, որ գործած են ահա.
Արիւնի իրաւունքը, հիւրասիրութեան իրաւունքը
Որ բարբարոսները ևս միշտ պատուել են.
Ամենամաքուր անունի վահանը, մի երկրորդ պարիսպ,
Սեքստոսին արգելք չեղաւ մօտենալու Լուկրեցիային.
Այս պատկառելի բաներից ևս չունեցաւ նա ակնածութիւն.
Ի՛նչ բան սուրբ պիտի լինի նորան, որի համար սուրբ չեղան սոքա.
Քո վստահութիւնը, ով Լուկրեցիա, ցուցանում մեզ այս տեղ մեր
ճանապարհը.
Քո մահը ցուցանում թէ ի՛նչպէս արժան է մեզ ապրել.
Տարկվինիոսի սերմը հեռի է. Հռոմը մերն է այժմ.
Մեզ հաւատում ժողովուրդը, դեպ ի մեր կողմն է ծերակոյտը.
Տհաճ պատերազմողքը լսելով մեր ձայնը, իսկոյն
կ'ապստամբվին իւրեանց ամբարհաւաճ առաջնորդից,
Փրկելու այս տեղ, Հռոմին անձնանուէր սրով,
Իւրեանց կին ու զաւակը որ մեր ձեռքումն են.
Եւ սորանից առաւել կը պաշտպանեն մեզ մանաւանդ
Մշտնջենաւոր աստուածքը, այսպիսի ամբարշտութեան վերայ
բարկացած.
Կամենալ միայն պէտք է. եկեցէք, ի՛նչ կամիք դուք.
Ընտրեցէք, քաղաքացիք, Տարկվինիոսեանքը, կամ մեզ:

ՎԱԼԵՐԻՈՍ.

Ոչ. ոչինչ Տարկվինիոսեանք. մահ բռնակալութեանը.
Թող աքսորվի Տարկվինիոսը և նորա ազգատոհմը:

ԲՐՈՒՏՈՍ.

Յաւիտեան թող կործանվի անձնահաճութեան աթոռը
Որի վերայ կարող էր բազմել ևս աւելի մեծ ամբարշտութիւն.
Յաւիտեան թող արտաքսվի Տարկվինիոսը, նորա հետ միասին
Քանդվի այն օթևանը որ պաշտպանում էր մի նոր բռնակալութեան.

ՎԱԼԵՐԻՈՍ.

Այդ ի՛նչ ևս ասում դուք:

ԲՐՈՒՏՈՍ·

Հռոմը, ասուամեմ ես, ալատված է·

(Դեպ ի բազմութիւնը·)

Մահ թագաւորներին։

ՓԱՂԱՓԱՑԻՔ·

Թագաւորներին մահ։

ԲՐՈՒՏՈՍ·

Յառաջ գնացէք ապա։

ՎԱԼԵՐԻՈՍ·

Նղի՛ր մեզ առաջնորդ, Բրուտոս· խօսի՛ր, մեք հետևումենք քեզ։

ԲՐՈՒՏՈՍ·

(Իւր դեմքը դեպ ի Լուկրեցիայի դիակը շարժելով, որ գնումն մի պատգարակի վերայ)·

Դէպ ի Հռոմ, դեպ ի Հռոմ· — Դու հանգուցեալ հոգի·
Թող մեր բարկութիւնը բորբոքվի քո մաքուր արիւնով·
Դու յառաջընթաց եղիր մեզ· քո ճանապարհի վերայ
Թող քո առաջին հարուածը հանդիպի վերջին թագաւորին·
Մեք հրեղէն հոգով ուղևորվումենք բոլորեքեանքս մի հոգի դարձած,
Որպես Հռոմայեցիք, կոլլատիոնից դեպ ի Հռոմ։

ՓԱՂԱՓԱՑԻՔ·

Մի բաբան հոգով ուղևորվեցէք դեպ ի Հռոմ, դեպ ի Հռոմ։

Ս· Նազարեանց։

ՆՆԱԽՕՍԱԿԱՆՔ·

(Շարունակութիւն·)

ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆՒ ԳՈՑԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ, ՀԵՐՊԱՐԱՆԱՊՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՃԵԼՈՒԹԻՒՆԸ·

Որովհետև մարդու և առհասարակ կենդանի արարածներուն կեանքը շատ կարճատև է, ուրեմն օրէ օր մեռանելով և նորեն վերով միս միս, պիտոյ է յառաջանալ շուտով մի ընդհանուր մահ, այսինքն պիտոյ է չքանալին բոլոր արարածքը: Բայց Արարիչը կենդանի էակներուն մէջ անկել է առանձին զորդողութիւնք, որով կառավարուէն այնպիսի պաշտօններ, որոնց խորհուրդը է պահպանել արարածներուն կեանքը: Ահա պաշտօններուդ առաջնեն Սերունդ զորդողութիւնք: Ընտրութիւնը մի ծածուկ խորհրդով թագուցել է մեր աչքէն մարդու առաջին զոյաւորութիւնը և կերպարանագործութիւնը, և «Ընտրեան ներսը միջամուխ լինել կարող չէ արարածը» ինչպէս ասում է Դալլէր զերմանացի բանաստեղծը: Ի վերայ այդր ամենայնի, մարդկային հարցասիրութիւնը այդ թաքուն բաներէն շատերին վերահասու է եղել, և այժմ պայծառացած էին զանազան տեսակ բաներ, որ մի փոքր ժամանակ յառաջ ծածկած էին մարդուս դիտութեան համար: Ամէն ունինք, ինչքան որ պատշաճ էր մեր դիտաւորութեանը, ծանօթանալ այս տեղ այդ բաներին, ինչքան որ մինչև այժմ քննութեամբ իմացուած են: Սաղմն կամ Էմբրիօն, ուսոի գոյանում զալոյ մարդը, ստանում իւր զործողութիւնը մի նորա վերայ ապրող զօրութենից, և այսպէս սկսանում սաղմը ինքնիշխան ներզործել, այսինքն, այնպիսի պաշտօններ կատարել, որ տալիս էին տալիս մի նոր մարդու զոյաւորութեան և կերպարա-

նագործութիւն: Եւ յետ Նէրիոն վախճան է մի մանչկիղէն պահապանի մէջ, որ ասվում Զոս, և բաղկանում երեք զանազան թագաւորութիւից և պարունակում շատ ջուր, որի մէջ Նէրիոն որպէս թէ լող էր տալիս և այդպէս պահպանվում այսպիսին ձնշողութիւնից և այլ վտանգներից: Դա նախ և յառաջ երևում որպէս երկու փոքրիկ փամփուշտ, որոնց մինիցը յառաջանում դլուխը, միւսիցը բունը կամ թէ իրանը մարմնի: Սինչև իւր կատարեալ կերպարանագործութիւնը կատար էր նա 40 շաբաթի: Այդ հետ միասին լրացնում լինում այսպէս: Սկզբում, որպէս թէ իւր դոյատևութեան երրորդ շաբաթում, երևում նա որպէս մի երկայնաձև սիսեռանման փոքրիկ մարմին, բաղկացած երկու փոքրիկ փամփշտից և կամ ընկած մի փոքրիկ թևլից: Երկրորդ ամսում ահա, կարելի էր յայտնապէս որոշել անհամեմատաբար մեծ դլուխը, երկու մութ նիշերով որ դալոց աչքերն էին, և դուրսի ականջների սկիզբը: Երկրորդ և երրորդ ամսում երևումէին բերանը և քիթը որպէս փոքրիկ սալիք (վէրքի տեղը) և իրանը սկսանում տեսանելի լինել իւր ծայրերով, և երևումեն ոսկրակազմութեան առաջին ցոյցքը, մանաւանդ թէ կողերը, սկսառաւի ոսկրները, ծնօտքը և յօդուածքը: Չորրորդ ամսում կերպաւորվումեն բոլոր մասնիկը միշտ յառաջ խաղալով, և արտաքին կերպարանքը բացորոշվումէր, միայն թէ չը կային դեռ ևս եղունդներ և մազեր: Առքա դոյանումեն ոչ յառաջ, քան թէ հօթներորդ ամսում: Հինգերորդ ամսում սկսանում ֆիւսուսը (այսպէս է ասվում դեռ ևս չծնած երեխան) խաղալ մօր արդանդում և այնուհետև բոլոր անդամքը ստանումեն իւրեանց պատշաճաւոր դուրսկերևը: Այսպէս, Նէրիոն հետ միասին այնքան զօրանում և կատարելագործվում որ կարող էր մօր արդանդից դուրս ապրել, և այս պատճառով ասվում հասած, կամ թէ կենդանութեան ընդունակ, որ զանազանվի այն որովհետութենից, որի մէջ դեռ ևս խակ էր, այսինքն անընդունակ կենդանութեան մօր արդանդից դուրս: Խօսենք դարձեալ մի քանի բան ֆիւսուսի մարմնաբանութեան կամ ֆիզիօլոգիայի վերայ:

Նէրիոն ածում և զօրանում պատշաճապէս, մնում սահմանալով պետի թևլովը. սորանով կապակից է Նէրիոն Պլացենտայի (արդանդի մէջ եղած կակուղ մանկութի) հետ, և նորա արտաքնոյն անօթիկներից ստանում մի անդադար կամնանման

հիւթ։ Արտի միջնորդութեամբ պահպանվում ալիւնի շրջանակութիւնը. այս պատճառով սիլոսը առաջին գործարանն է, որ ալրարիչ զօրութիւնը պիտոյ է գոյացնէ, և այս պատճառով նա, առաջին շարաթնելի մէջ ահա, գտանվում մեծ և զրդռական պատճառ, ինչքան որ մանուկ էր սաղմը, այնքան էս ալրի և դործունեայ է սիլոսը իւր շարժողութիւնների մէջ։ Այն միջնապատի մէջ, որով սրտի երկու սենեակքը բաժանվում իրարից, գտանվում մի շատ արժանի առեղծուածն բացուած, որ ասվում ձուաձև բոլորակ ծակ. այս պատճառով կարող է ալիւնը աջակողմեան մտասենեկից անցանել ձախակողմեանի մէջ, առանց նախապէս հոսելու թոքերի միջով։ Մի ջոկ խոսի, որ ասվում Նւատաքեան, խոսհանում ալիւնի յետադարձը ձախակողմեան մտասենեկից դէպ ի աջակողմեանը. բայց եթէ մի փոքր ալիւն ներս է դնացել աջակողմեան մտասենեկի մէջ, ապա խոկոյն մի առանձին անցքով, ինչպէս ասվում, Հ նչելակի անցքովը յառաջ է տալվում առանց թոքերի մէջ մտանելու։ Նա որովհետև Նմբրիօն, ինչպէս յիշվեցաւ ահա, ամենայն կողմից շրջապատած է ջրով, ապա չէ կարող շունչ առնուլ, և այդ պատճառով թոքերը էին խիտ, օդից զատարկ և մանաւանդ պակաս ատելի ծանր քան թէ թոքերը այն մարդու, որ շունչ էր առած ահա։— Բայց և այդ պատճառով թոքերը անկարող էին ընդունել իւրեանց մէջ բոլոր ալիւնը, որ սիրտը անդադար յառաջ է մղում։ Այսպէս, ալիւնի փոքրիկ շրջանակութիւնը որին յառաջուց ահա ծանօթացանք մեք նորածին մանուկի մէջ, չէ պատահում Նմբրիօնի մէջ, և այն ալիւնը, որ սիրտը ընդունում իւր մէջ, խոկոյն առաւել կարճ ճանապարհով, այսինքն ձուաձև բոլորակ ծակովը, գնում ձախակողմեան մտասենեկի մէջ։ Ալիւնը որ ահա հիմնամնեայ կերպարանադործութեան մէջ նկատվում, սևագոյն կարմիր է, որովհետև նա ստանում իւր բաց գոյնը ծխանելուց յետոյ, երբ թոքերը շնչառութեամբ ընդունած էին իւրեանց մէջ թթուածինը։ Փոքր առ փոքր սաղմի բոլոր մասները ամրանալով պնդանում են, որովհետև հատանում էին նորա սննդարար հիւթերը։ Ինչքան մանուկ է Նմբրիօն, այնքան էս վարուկ, քնքուշ, մածոյային է նորա ամեն մի ձևակերպութիւնը։ Առաջին երկու ամիսների մէջ դլխի մեծութիւնը, համեմատելով միւս մարմնի հետ, մի անտեղի բան է. նոյնպէս և

աչքերը, որ մինչև Լօթինեբորդ ամիսը փակած էին մի նուրբ փոքրիկ թաղանթով, բայց առ փոքր փոքր նոցա մէջ գոյանում էր մի փոքր բացուածք, որ դնալով դնալով աւելի մեծանում, մինչև թաղանթը չքանում ամենևին։ Նա ախանջի ներքին գնացքը ստացել էր ահա իւր կատարեալ կերպարանքը. բայց սորա հակառակ, դեռ ևս շատ փոքր է քիմքը, և ատամների կերպաւորութիւնը նկատւում առաջին անգամը Հինգերորդ ամսի մէջ, երբ նոքա փակած էին առանձին խորանների մէջ։ Ինչպէս դլուխը, համեմատաբար մարմնի միւս բաժինների հետ, շատ մեծ էր, նոյնպէս սրունդները, տաշտը և երատանը անհամեմատ փոքր էին։ Ցեօտուսի համար մի շատ կարևոր գործարան է Լարդը. սա է նորա համար այն բանը, ինչ որ չափահասի համար էին թոքերը. պատճառ, բոլոր արիւնը որ Պլացենտայից հասանում նորան, ընդունում իւր մէջ այդ լեարդը և յառաջ է մղում։ Պաղձի պարկը որ համեմատելով ընկղին, շատ փոքր է, սկզբում չունի իւր մէջ ոչինչ լեղի, այլ միայն աւիշկային (լեմֆատիան) դիջուքիւն։ Որովհետև նորածին մանուկը ոչինչ չէ կերած, այդ պատճառով նորա աղիքները և փորը փոքր ու նեղ էին. վերջին ամիսներումը միայն հաւաքվում փորոտիքների մէջ մի փոքր ապականութիւն։ Երիկամունքը բաղկանում փոքրիկ կոտորներից որ կապակից էին միմեանց հետ մի թոյլ բջիջաւոր հիւսուածով. նոցա պատաճորութիւնը դեռ ևս շատ փոքր է, և այս պատճառով միզապարկի մէջ եղած հեղանիւթը շատ սակաւ էր։ Երկրորդական երիկամունքը շատ մեծ են և նոցա մէջ պարունակած դիջուքիւնը չէ թխագոյն, այլ սպիտակ, կամ թէ կարմրագոյն։ Սկզբում, մի մանրադիտակի նման լրացնում Էմբրիոնի թոյլ բջիջաւոր հիւսուածը. ոչ յառաջ, քան թէ իւր կերպարանագործութեան միջոցին, այսինքն հինգերորդ ամսում նկատւում կտոր կտոր ձևով ճարպ։ Նորա բոլոր մարմինը վերջին ժամանակում պատած է մի սպիտակ ճարպապատեակ իւղով, այլև բուսած էին նորա վերայ փոքրիկ և կարճ մազեր որ շատ նման են քնքուշ բուրդի։ Լօթինեբորդ ամսում բողբոջում ղլխի մազերը. բայց սորա հակառակ, յօնքերը և թերթերուկները ծնանելուց յետոյ ևս կարճ ու նուրբ էին։

Նթէ Էմբրիոնի բոլոր գործարանները այնպէս կերպարանված են, որ նա ընդունակ էր կենդանութեան, այսինքն կարող էր

ապրիլ մօր արդանդից դուրս, ապա սովորաբար քառասներորդ շաբաթի վերջումը կատարվում ծնունդը. այնուհետև նոր կենդանութեան հետ միասին յառաջանում էական փոփոխութիւնք: Ծորածին մանուկի վերայ, երբ որ մտած էր աշխարհ, իսկոյն ներգործում մի դեռ ևս անճանօթ զրդիռ, այսինքն ատմոսֆերեան օդի զրդիռը: Մանուկը շնչում առաջին անգամը, լայ և լինում և աղաղակում, որովհետև այս անսովոր զրդիռը չէ զարթուցանում նորա մէջ ոչինչ սխոյժ զգայողութիւնք: Այս դեռ ևս չէ սովորած եղանակի փոփոխութեանը, օդի հալածութեանը: Ասես թէ մանուկը հաւան չէր իւր նոր գրութեանը: Առաջին շնչառութեան քամակից հետևում առաջին շնչարձակութիւնը և այդպէս շարունակվում փոխ առ փոխ, աւելի և աւելի ընդարձակվելով թոքերը և թեթևացնելով աջակողմեան սրտաճեղքի արիւնի ներահոսութիւնը թոքերի շնչերակի մէջ: Այսու հետև աւելորդ էր ձանապարհը ձուաբոլորակ ծակի միջով, նմանապէս և բաց տարօրինակ դնացքը շնչերակի անդորձ է կացուցանվում: Նա փոքր առ փոքր վակվում ամենևին, նոյն միջոցին Նստատքեան խուփը ևս անբացելի ծածկում ձուաբոլորակ ծակը և այդպէս խափանում արիւնի անցքը նորա միջով: Ը նչառութեամբ, թոքերի խորանիկները լցվում են օդով և այդպէս թոքերը փխրանում են և թեթևանում. շնչարձակութենից յետոյ թոքերի մէջ յետ է մնում դեռ ևս մի փոքր օդ. այս պատճառով նորա ուղիղ աւելի փոքր ծանրութիւն մանուկ ստանում, քան թէ յառաջ: Ասնելուց յետոյ սկսանվում փոքրիկ ատած Ը նչանակութիւնը, որ յառաջուց չէր կարող կատարվիլ, որովհետև թոքերը չէին շնչում, և այժմ աւելորդ էր նոյնպէս պորտի թելը: Այս պորտից մի ճկոյթ ցած կապ է ձգվում, և մի քանի օր յետոյ անզգայանում երեխայի վերայ կախ ընկած մասը, բաժանվում պորտիկը, և ապա, ինչքան որ կենդանի է մարդս, յետ է մնում մի սպիաձև նշան, որ և յետոյ նոյնպէս ատում Պորտ: Պտղատութիւնը, որ յառաջուց հատանում սաղմին պորտի թելով, ստանում նորածին մանուկը մօր կաթից, որ նա իրրև երեխայ հետևելով բնական ազդեցութեանը, ծծում մայրական սրինքներից: Պայրական կաթը է մի սպիտակ, անթափանցիկ, թոյլ բայց սխոյժ հոտով, մի փոքր քաղցրահամ հեւթ, որ բաղկանում շիճուկից (կամ ջրից), պանրից և պանրից: Ը նճուկը լինելով մի

ջրալի հեղանիւթի, պարունակուած իւր մէջ կաթնաշաքար. սերը բաժանուած շիճուկից և պանրից, է մի տեսակ մեղմ ճարպալի ձէթ որ գառնուած իւղ: Պանիրը պարունակուած իւր մէջ կենդանական ձուասպիտակուց շատ, որի հետ առհասարակ համեմատ է նա ամենևին: Այս բոլոր նիւթերը, խիտ կապակից միութեանց հետ, կան կաթնի մէջ, որ թարմ բղխուած կուրծքից. երկար ժամանակի միջոցում և հանդարտութեան մէջ, բաժանուելեն նոքա միմեանցից, և այնպէս որ սերը նստուածքը վերևից, ապա նորա տակին թանձրանուածքը պանիրը, և այդ երկու նիւթքը լոկ էին տալիս շիճուկի վերայ: Մի՛ւս տեսակ կաթներից զատնալուածք մարդու կաթը այն բանով, որ սա ունի իւր մէջ աւելի պակաս պանիր, բայց առաւել կաթնաշաքար, այլև այն բանով, որ կաթնի առանձին մասնիկը աւելի դժուար բաժանուելեն միմեանցից: Կաթը պատրաստուած կուրծքի մասնուտ տեղերում. նա իջանուած կաթնային գնացքների մէջ և դուրս է թափուած պտուղներից: Երբ որ երեխան ծծուած պտուկը, կաթը արտաքին օդի ձնշողութեամբ տարուած կուրծքից դէպ ի պտուկի փոքրիկ ծակերը, և այդպէս թափուած երեխայի բերանի մէջ: Շատ ու շատ հաղիւ տեսած բան է, որ և տղամարդի կուրծքի մէջ կաթն պատրաստուէր. այս բանը պատահեցաւ մի իտալացի մարդու որ իւր կնոջ մահուց յետոյ սնուցանուածէր մանուկը իւր տղիքներով, որ մանուկը իւր հօր հետ հանդստացած լինելով բնական ազդեցութեամբ ըմբռնած էր բերանով, և երկար ժամանակ ծծելով դուրս էր թորեցուցել այն կաթն: Առաջին կաթը որ նորածին մանուկը ծծել է իւր մօր տղիքից, բաց ի սննդարարութենից ունի և այն օգուտը որ գուրս է ձգում այն ապականութիւնը, որ ծնանելուց յառաջ փոքրիկ աղիքների մէջ հաւաքուած էր: Այս ապականութիւնը, նորա սև գոյնի պատճառով, տալիս երեխայի ձիւթ կամ մեկոնիում: Օրէ օր ամուսնանում մանուկը և նորա բոլոր գործարանքը զօրանուելեն և առանուելեն աւելի կենդանական գործականութիւն: Լնութիւնը անդադար աշխատում առանձինների կատարեալ կերպարանագործութեան վերայ. եթէ պատրաստ էր դա, ապա գուրս են ցցվում նորա առանձնափոսերից, որոնց մէջ վճակած կային, պատռտելով ընտերքը և առաւել պարզելով նորանց, և ամուսնեն շարունակաբար, մինչև հասած էին իւրեանց պատշաճաւոր մե-

ծուխեանը։ Հաստ երեխաների մէջ, ստամոքսահանութիւնը կապակից է սաստիկ ցաւի հետ, որի վերայ յաւելանում են հիւանդոտ տենդեր, որ շատ վտանգաւոր են լինում։ Այս էր երեխաների չժուալ ստամոքսահանութիւնը։ Ետին ստամոքսահանութեան գործը կատարվում է ըստ կանոնի, նախ և յառաջ երեւումն միջնի հատորական ստամոքները, որ սովորաբար պատահում է 5 երորդ, 6 երորդ, կամ 7 երորդ ամսումը ծնելուց յետոյ. ապա հետ ղհետէ առաջնի երեք տարիների մէջ, երեւումն շնական և ծամողական ատամները, այնպէս որ պատրաստ էին ութ յառաջակողմեան ատամներ, չորս շնական և ութ ծամողական ատամներ որ ասվումն և կոմնային ատամներ, որովհետև յետոյ դուրս են թափվում և նոցա տեղը բուսանում նորերը։ Երբ որ երեխան ատամներ է հանել, դա նշան էր, որ նորա մարսողական գործարանքը աւելի ամրանում էին և կարող են բաց ի մայրական կաթնից մշակել և այլ թեթեւամարս կերակուրներ։ Դոցա սովորում մանուկը հետ ղհետէ և առ փոքր փոքր հրաժարվում մայրական կաթնից։ Աւելի պիտոյ մանկանութեերից հասանում մանուկին աւելի հողեղէն մանկեր. այս պատճառով սկսանում ոսկրանալ մինչև այժմ ամառային եղած հնմնադրութիւնքը, և առ փոքր փոքր, սովորաբար մի տարու միջոցում, փակվում ուղեղի ամանը, կերպաւորելով մի ոսկրեղէն պատեան։ Եւ մարմնի միսը գնալով գնալով աւելի զօրանում և սնդանում, մինչև որ հետ ղհետէ աւելի յաջողակութիւն էր ստանում գալոց շարժողութեններին համար։ Նորածին մանուկի մարթիկ շուտով դուրս են թափվում փոքրիկ մազերը, որ պատում էին նորա բոլոր երեսը, բայց դորա հակառակ աճում են գլխի մազերը, յօնքերը և թերթերումները։ Առաջնի անզուգակշռը որ կայ սրունգների, տաշտի մէջ և մարմնի միւս մասների մէջ, հետ ղհետէ վերանում է. պատճառ, սնունդարարութիւնը ծնանելուց յետոյ աւելի յաջողակ է կատարվում այս մասների մէջ, որովհետև պրտի շնչերակը փակվելուց յետոյ, շատ արիւն սահմանվում տաշտի շնչերակներով վաղել դէպ ի մարմնի ստորին մասները։ Սորանով ստանում մանուկը զօրութիւն և ամրութիւն վեր կանգնելու և դնալու։ Ակզբում, եթե մանուկը թոզած է իւր կամքին, սողում չորս թաթերի վերայ, այսինքն սահելով թեքած ծնկերի վերայ և հաստատելով ձեռքերի վերայ։ Եթե ոսկրները առա-

ևել ամբացած էին, և մուսկուլները ստացած էին աւելի պնդութիւն, ապա սրունգները կարող են տանել մարմնի ծանրութիւնը, և երեխան ուղիղ կայքով սկսաւ դալիս: Այս ուղղորդ կայքը մարմնի, այս գնացքը ոտքերի վերայ առանց ձեռքերի օդնականութեան, այն բանն է, որով մարդս զանազանվում է անասուններից: Ձէ պիտոյ հաւատալ, ինչպէս մի քանի ուսումնականք կարծուում են, թէ աւելի բնական էր մարդուն վազել չորս թաթերի վերայ. այդ բանը ընդդէմ է նորա մարմնի կազմածին և մի անարժան վարք ազնիւ մարդկային կերպարանքի համար: Ճ՞աստ ծիծաղելի էր տեսանել մարդու սկսելեալ կանգնած ձեռքերի և ոտքերի վերայ մի չորքոտանի գազանի սկսելեալ մօտ, որ մարդու պէս, ուղիղ կանգուն էր միայն յետին ոտքերի վերայ: Այս օտարոտի հանդիպակացութիւնը տեսանվում մի քանի անդամոնական տեսարանների մէջ: — Առաքին զգայարանքը ցուցանուեան ահա նորածին մանուկի մէջ, որ նոքա ընդունակ էին ազդածութեան, բայց նոցա կատարելագործութիւնը լինում առ փոքր փոքր. բայց երբ որ աւարտվել էր, այնուհետև մանուկը կարող էր պատշաճապէս գործ դնել նորանց: Ո՛ր օրինակ աչքը առաջին ժամանակում նայում իւր առաջև, առանց մի բան որոշելու, և հոտառութիւնը շատ անկատար է դեռևս, որովհետև քիթը փոքր էր և չէր ըստ բաւականին լրագործված: Լայց ընդհանուր իմացութիւնը զօրացած է, որովհետև ջղերի համակարգութիւնը մեծապէս գործունեայ է. սորա համար, շատ փոքր առիթներից յառաջանուեան սաստիկ պատահմունք, զոր օրինակ մուսկուլների կծկողութիւնք, որ շատ վնասակար, այն շատ անգամ մահաբեր են լինում մանուկի կենդանութեանը: Երեխան աւելի քնասէր է քան թէ չափահասը. և ինչքան մատաղ էր երեխան, այնքան ևս սակաւ արթուն էր, և այս քունը շատ հարկաւոր է մանուկ էակին. պատճառ, բոլոր մարմնեղէն աճելութիւնը և ամրագործութիւնը աւելի շոյտ և ապահով կատարվում քնի հանգստութեան մէջ:

Նոյն որ արտաքին զգայարանքը ստացել էին մի որոշեալ չափ կատարելութեան, ապա զարթնուեան և նեղքին զգայարանքը, որոնց յառաջադայութեան վերայ այսպէս է խօսում Էֆնրօթ գերմանացի Ժոգերանը: Ինչպէս որ ածուէ և զօրանուէ մարմնաւոր կեանքը, այնպէս ևս ածուէ և զօրանուէ հոգեղէն կեանքը,

օրինապատշաճ կերպարանիւք ըղծութեան միութենից: Հոգին չէ մտանում դուրսից դէպ ի ներս, այլ ածելով բացվում ներսից դէպ ի դուրս: Առաջին բացվողութիւնը վակեալ ներսի, որպէս թէ հոգեղէն ծնի բողբոջումը է ախտը, այսինքն իւր անձի իմացողութիւնը: Ախտը է բոլոր հոգեղէն կենդանութեան որպէս թէ վառարանը և մեռումն նոյնպէս բոլոր կեանքի ժամանակումը. նա զարթնում յառաջ որպէս ցաւ, երբ որ մի արտաքին դրդիռ տպաւորութիւն է արած այն զգայութեամբ որ ծնանելու բոլորին զարթնում առաջին անգամը, այսինքն ախտի զգայութեամբ: Սա դրած լինելով մարմի գործարանի մէջ, այն նոր տարրովը, որի մէջ ներս է մտանում աշխարհ եկած մարդը, այսինքն օդի անտովոր դրդիռով, զարթնում և այդպէս գործակատար է որպէս յառաջածու ախտի, որ առաջին անգամը զարթնում որպէս ցաւ: Ախտը դարձեալ ներգործում դրդռողապէս դէռ ևս քնած ձգտողութեան վերայ, և սա զարթնում և յայտնվում շարժողութեամբ: Մի աղաղակ է երեխայի հոգեղէն կենդանութեան առաջին նշանը, և ծանուցանում նորա նկրտողութիւնը հեռացնելու իւրեանից ամենայն ցնցաստակար բան, կամ թէ անձնապահպանութեան ձգտողութիւնը որ զարթնում ահա: Այսպէս ուրեմն զարթնում հոգու կեանքը ծնանելու ժամումը, ասես թէ մի անգամով երեք տեղ ի միասին, այսինքն զգայարանի, ախտի և ձգտողութեան մէջ, որոնցից ախտը միջնաւայրն է, որի հետ կողմնակից են զգայարանի զրդռողական կէտը և ձգտողութեան գործականութեան (հակազդեցութեան) կէտը. ուրեմն ամենևին այնպէս, ինչպէս մարմնի մէջ համակարգած գործարանքը կողմնակից են միմեանց և կապակից են միմեանց հետ, երբ որ արդէն առանձին տեղերում գոյացած էին ներքին ըղծութենից: Մի այլ գոյացման կացուցանում զգայարանը, մի այլ, ձգտողութիւնը, և դարձեալ մի այլ կենսական վառարան ունի ախտը: Ամեն մինը սոցանից իւր վերաբողբոջելուց յետոյ, իսկոյն կերպաւորում իւր յատուկ կենսական համակարգութիւնը, սիսեռման, որ այնու ամենայնիւ է միայն մի օդ օրգանական կենսաշղթայի մէջ, որի միջնին օղը է Ախտը: Ուրեմն հոգու կենդանութեան առաջին զարթեցողութիւնը լինում արտաքին դրդռանքով, այսինքն ախտի զգայութեամբ: Այայց երբ որ սոցանով զրդռված էր ներքին կեանքը, ապա ընդարձակվում նա հետևելով իւր յատուկ օրէնք-

ներին և յառաջացուցանելով նոքքին և աւելի զօրաւոր ներհակութիւնք այն առանձին բաներովը որ ասվումեն Ախտ, Հիւանդութիւն և Ձգտողութիւն: Աւելի մօտ շարժառիթը կիանքի բըղխոսմէ Ախտից, որ է մնունդի կարօտութեան ախտը. քաղցը զարթնոսմէ և սոլանով ձգտողութիւնը դէպ ի մնունդ: Ինչպէս որ առաջին և նախնական աղէկութեամբ յաւէ ախտի վերայ դոյանսմէ շնչառութիւնը, նոյնպէս այս երկրորդ աղէկութեամբ քաղցի ախտի վերայ դոյանսմէ երեխայի ծծելը, մնունդ մատուցանելու ժամանակին: Ձգտողութիւնը դէպ ի մնունդ, որպէս ձգտողութիւն ծծելու, երևսմէ սահմանափակված ի հատ զօրաւորով, որ է բերանը: Բայց այս ձգտողութիւնը մի և նոյն միջոցում զրգռսմէ մի աւելի վերին զգայարան, այսինքն ձնշակի զգայարանը: Այսպէս, երկար չէ տևսմ, և ահա ընդարձակվսմեն ախտի, զգայարանների և շարժողութեան սահմանները: Պարիք լցուցանելու ախտը դառնսմէ մի աղօտ քաղցր հաճութիւն, և բացայայտվսմէ ընդհանրապէս ուրախ անդամաշարժութեամբ, որ դարձեալ երևսմէ շարժողական ձգտողութիւն, հասաքված զօրութիւնը յայտնելու համար: Այդ ախտը դադարսմէ շուտով լինել ընդհանուր. նա ընդունսմէ այնուհետև մի որոշեալ ուղղութիւն, այսինքն դէպ ի այն կողմը, որ կողմից գալիս էր նորա համար մնունդ, այսինքն դէպ ի մօր ստինքները, որոնց շօշափելովը զարթնոսմէ երեխայի շօշափական զգայարանը. պատճառ, մանուկը չէ այժմ բաւականանսմ իւր շրթունքով շօշափել մայրական ստինքը, այլ մի և նոյն միջոցին երկու քնքուշ ձեռներով բռնսմէ մօր ստինքները: Որանով զարթեցած շօշափական զգայարանը մի մեծ քայլափոխ յառաջ է տանսմ հոդու կենդանութիւնը, որովհետև նորանով զարթնսմէ նորա հետ ազգակից տեսողական զգայարանը: Դրախ և յառաջ յայտնվսմէ տեսութեան զգայութիւնը որպէս ընդունակութիւն լոյսի: Երեխայի աչքը որոնսմէ միայն լոյս. բայց այս անորոշապէս որոնողութիւնը շուտով հաստատվսմէ դէպ ի մի տեղ, այսինքն մօր հայեացքի վերայ: Երեխան նայսմէ մօրը և մի քաղցր հաճութեան մէջ նկատելով ժպտացող մայրը, ճնանսմէ երեխայի առաջին ժպիտը, այս դուրս փայլող լուսաբացը մարդկային հոգու: Դե այս դիւտը, երեխայի աւելի զօրացած ախտը, որ նախ և յառաջ էր ցաւ, ապա կարօտութիւն միայն, դառնու-

մէ նորա համար ախորժանք, որ բացայայտէ մէ անդամներէն ուրեմն խաղարկութենով և շարժողութենով։ Այս բոլոր կերպարանագործութեամբը արթնացած, լինուէ երեխան ընդունակ մօր ձայնին, և այսպէս զարթնուէ լսողութեան զգայարանը. ինչպէս տեսութեան զգայարանը ազգակից է շօշափական զգայարանին, նոյնպէս լսողական զգայարանը ազգակից է Աչքի զգայարանին։ Ինչպէս օդը ազդուէ աչքի վերայ ջերմութեան և ցրտի միջնորդութեամբ, այնպէս ևս շօշափուէ լսելիքը շառաչիւնի կամ ձայնի միջնորդութեամբ։ Շառաչիւնը բացուէ երեխայի առաջև եղանակների նոր աշխարհը. նոյնպէս լոյսը ծանօթութիւն է տալիս առարկաների և գոյների մասին։ Այսպէս օր ըստ օրէ առաւել զօրանուէն ձգտողութիւնքը ըմբռնել առարկայքը, և սոցանով աւելի վարժուէն զգայարանքը։ Ընդուլ և անդադար աշխատուէն զգայարանքը առաջին ամիսների մէջ և ամենից առաւել տեսութեան զգայարանը։ Սա ուսանուէ զանազանել, որոշել և հիմք է դնուէ հասկացողութեան համար։ Որոշելը է սահմանել, ձևակերպել, կազմել և կերպարանել։ Այսպէս լինուէ աչքը որպէս թէ ուսուցիչը ականջի, որ ապա հետևելով որոշողական կարողութեանը, որի առաջին տարիքը ամիսոտած էին ախորժ, ձաշակի և շօշափութեան մէջ, կատարելագործվուէն որպէս զգայարան ժամանակի մէջ եղած ձևերի համար, եղանակի, բառի և լեզուի համար։ Ականջը հետևուէ աչքին ծանրաքայլ ընթացքով միայն։ Շօշափական զգայարանը աւելի մօտ ազգակից է տեսական զգայարանին. ինչ որ երեխան տեսանուէ, կամենուէ նոյնպէս շօշափել և ձեռք ձգել նորա վերայ։ Այսպէս, առ փոքր փոքր յառաջանուէ նախկին մտաւորական պատկերացողութիւնը. առաջին մտաւորական պատկերացութեան միջոցին, զգայարանների գործականութիւնը, ախորժ և ձգտողութիւնը միանգամայն պարունակված են առարկայի նկատողութեան մէջ։ Ախորժելը այն առարկայի, աշխատութիւնը հասանել նորան, ունենալ նորան, է մի ընդարձակված ձգտողութիւն դէպ ի մնունդ. այս պատճառով երեխան, ինչ բան որ կարող էր ձեռք բերել և իւր կամեցածի պէս շարժել, տանուէ միշտ դէպ ի բերանը։ Այնուհետև երեխան սիրուէ այն առարկայքը, որ ունի նա, և ուրախանուէ որ կարող է նորանց շարժել և գործ դնել։ Որպեսով զարթնուէ խաղալու ձգտողու-

թիւնը և դորա հետ միասին մի աւելի ժիր գործականութիւն, որով առարկայքը առաւել ծանօթանում են նորան: Նա ուսանում ճանաչել շատ անգամ տեսած բաները. այս ճանաչողութիւնը տպաւորվում նորա մէջ և ստանում աւելի խոր արմատ նորա նկարչին զգայարանի մէջ: Ըմբռնողական կարողութեան հետ միասին ընթանում զարգանում հաղորդութեան կարողութիւնը, երևակայական կարողութիւնը և իմացականութիւնը: Այս գործականութիւնների հետ շարակապվում են և միւս վերադրյնները: Ինչ որ երեխան տեսանում և կրկին տեսանում, այն բանը յիշելի է նորան. այսպէս սկսանում երևել յիշողութիւնը, և յիշողութեան հետ կարողութիւնը որոշելու ծանօթը անծանօթից. այս էր դաստիարակական կարողութիւնը իւր ամենատարրին աստիճանի վերայ: Այս զգայական պաշտօնների հետ ընկերանում որոշողութիւնը հաճոյականի անհաճոյից: Երեխան սկսանում իւր շրջակայ առարկաների միջից ջոկել առաւել ընդունելին իւր համար. այսինքն զարգնում ընտրողականութիւնը, կամակատարութիւնը: Սորանից յետոյ զգում երեխան մի տեսակ օգուտ, որ կախ էր այն բանի ունենալուց և ծանուցանում և նշանակում այդ բանը: Ձեռքը, որով նա մատնացոյց է առնում դէպ ի այն կողմը, բաւական չէ այժմ. մի այլ նշանակութեան կարողութիւն զարգնում, այսինքն, ձայնը. երեխան անյօդաւոր ձայներով և եղանակներով նշանակում առարկայքը և աշխատում թոթովել այն անուանակոչութեան շառաչիւնը, որ լսած էր ուրիշից: Ահա թէ ինչպէս զարգնում խօսելու կարողութիւնը: Այսպէս երեխան ճանաչում, մատնացոյց է առնում, նշանակում և թոթովում օրէ օր աւելի բաներ, և սորանով աւելի զօրանում նորա ձգտողութիւնը դէպ ի այդ բաները. նա ձգտում ձեռքը դէպ ի այն կողմը, կամենում ցած իջանել մօր գրկից, կամ թէ այն տեղից, ուր նստած էր, կամենում ոտք շարժել դէպ ի նոյն իսկ առարկան, և այս պատճառով պարզում ոտքերը: Երեխան ցած են դնում. նա ոտք է կոխում դէպ ի ցանկալի առարկան. նորան առաջնորդում են. նա ուսանում այդպէս վազել, տարածութիւնք ճանաչել, հեռաւորութիւնք որոշել: Այսպէս առ փոքր փոքր սրտի վկայութեամբ վերահասու է լինում իւր յաւուրց աշխարհին. դիտակցութեան առաջին քայլը կատարած է ահա: Որոշողութեան գործականութիւնը ամրում և զօրանում զգա-

յարաննելովը երեխայի մէջ. նա օրէ օր աւելի հասու է լինում աշխարհին, ուսանում զանազանել նեղբինը արտաքինից և այդպէս ուսանում հասկանալ թէ ինչ ախտեր յառաջանում են նորա մէջ և տարբերում իւր պրուբիւնքը. նախ և յառաջ հաճոյութեան և անհաճոյութեան պրուբիւնքը, ապա շուտով և իւր ձգտողութիւնքը և յօժարութիւնքը, իւր հարկաւորութիւնքը, և յետոյ հարկաւորութիւնը ճանաչողութեան որին օգնական է մանաւանդ լեզուն, որ դնալով դնալով աւելի կատարելագործվում: Այն գործականութիւնը որ մինչև այժմ դէպ ի դուրս էր ուղղեցուցած, այսուհետև վեր է կանում մի այլ ուղղութիւն. այսինքն նա դէմքը դարձուցանում դէպ ի ներսը. երեխան ուսանում նկատել իւր անձը և զբաղում աւելի իւր հետ. նա խաղում իւր հետ կամ թէ իւր երևակայութեան պատկերների հետ: Առանց սրտի վկայութեան արած էր նա այս բանը ոչ թէ արհնութեան, այլ քնի մէջ, և այսպէս աշխատած էր ամենեցունց արարիչ գործականութեան, երևակայութեան ծիլը: Երեխայի զբաղմունքը, քնած երեխայի ժպտելը յայտնի ապացոյց է այս նեղբին գործականութեանը, թէպէտ սա չէր կատարվում առանց ընդհատումի: Դուրսի աշխարհը որի վերայ երեխան փոխադրում իւր երևակայութեան պատկերքը, երեւումն նորան շատ դեղեցիկ, և այսպէս նա անդադար զբաղած է ինքը իւր հետ և ուսանում ճանաչել իւր անձը որպէս նկատող և գործող: Ինչքան աւելի մօտ ծանօթանում երեխան ամենայն առարկաների հետ, ինչքան աւելի յառաջադէմ է նա լեզուախօսութեան մէջ, այնքան էլ աւելի կամենում ծանօթանալ առարկաներին և նորա յարակցութիւններին միմեանց հետ: Ընդհամբեր սրտով ցանկանում նա լսուցանել իւր հարցասիրութիւնը և զարմանալի խնդիրներով ցուցանում այն նեղբին ձգտողութիւնը: Սա էր առաջին ծիլը բանականութեան, որ իրրև ճանաչողութիւն պղտոր է երևում դեռ էս: Ահա թէ ինչպէս առ փոքր փոքր լրագործվումէին մարդու արտաքին և նեղբին զգայականքը:—

ՀԱՍԱԿՆ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆՔԸ.

Արդիպէին հասակ ասելով իմանում ենք կենդանութեան ժամանակը, որ սկսանում ծնելուց և վերջանում բնական մա-

հով։ Մարդս դնում է այն ճանապարհով, ինչ ճանապարհով դնում են բոլոր փոխոխական և եղծական էակները. այսինքն նա դոյանում է, հասանում է կատարելութեան, նուազում է և եղծանվում։ Ըստ պատճառով նորա կեանքի ժամանակը հաւեմատած են տարու և օրի ժամանակների հետ, համեմատելով նորա երեխայութիւնը և մանկութիւնը որպէս կեանքի առաւօտ կամ գարուն. նորա ուժեղ այրական հասակը որպէս միջօրէ կամ ամառն, և ծերութիւնը որպէս կեանքի երեկոյ կամ աշուն։ Պլուքէ գաղղիացին որոշած է կենսական ժամանակի համար 5 հատուած կամ պարբերութիւն. 1, Երեխայութեան հասակ, 2, Տղայութեան հասակ. 3, Երիտասարդութեան հասակ. 4, Հրատան հասակ. 5, Ծերութիւն։ Սմեն մինը սոցանից նա բաժանում է գալձեալ սկիզբն, մէջ և վերջ։ Ըստ բաժանումը իրաւացի ընդունելի է, որովհետև ոչ մարմինը և ոչ հոգին միանում հաւասարապես նոյն, կենդանութեան միջոցում։ Մարդը անցանում մի սահմանեալ, անընդհատ շարք փոխոխութիւնների, անզգալի կերպով յաջորդում մինը միւսին. նա ճանապարհորդում բոլոր հասակների մէջ, մինչև հասանում վերջինին։ Ըստ պատահող փոխոխութիւնների պատճառը կարելի է որոնել մարմնի զանազան կենսական ղօրութիւնների և բնական կազմածի մէջ, որ պատճառ են տալիս նորան միջոց առ միջոց սահմանեալ կերպով փոխոխելու իւր նիւթը։ Սմեն մինը այս փոխոխութիւններից ունի մի որոշեալ չափ, կարգ և տեւողութիւն։ Նորածին երեխան զանազանվում իւր առաջին զրութիւնից, էմբրիօնական կեանքից, իւր շնչառութեամբ, զորանով փոխոխած շրջանառութեամբ արիւնի, իւր սննդառութեան նոր ճանապարհովը և զորանից յառաջացած առանձին արտաթորութիւններով։ Հինգերորդ կամ թէ վեցերորդ տարումը դուրս են թափվում առաջինները և այնպիսի կարգով, ինչպէս որ բուսած էին։ Ըստ առաջնափոխութիւնը տեւում մինչև տասնևմի և տասներկուերորդ տարին։ Նոցա փոխանակ յաջորդում նոր առաջինները, որ տեւի ամբողջ և տեւի տեւողական են։ Ատամնափոխութեան միջոցում կոլշումն երեխայի քնքուշ և լեռպարարտ կերպարանքը. բոլոր մարմինը առանում տեւի բարակ կազմած, որի պատճառը է մանուածք ոսկրների ածողութիւնը։ Մինչև այս միջոցը, մարմնի մասերի չափը էին շատ փուխր, փափուկ, դալար և տարածուն. ան-

չաի շալժողականութիւն կայ ջիղերի համակարգութեան մէջ և արիւնի շալժողութիւնը շատ տարագ էր. և այս պատճառով երանելին զարկողութիւնը երևոյթ աւելի կենդանի երևեցոյթեան հասակումը: Տանևհինգերորդ և տասնուվեցերորդ տարումը հասանումէ արուբիւնը, և դորանով սկսանումէ զուարթ, ծաղկաւիթիթ կեանքը երիտասարդի և կոյս աղջկայ: Արմնի ամուր մասները, թէպէտ դեռ ևս դալար և տարածուն, են աւելի ջերդ և ոչ այնքան փափուկ, ինչպէս երեխայինը: Արմնի հետ ղհետէ աճելովը, հասանումէ պատանին իւր աւելնամեծ կատարելութեանը. այնուհետև մարմինը և հոգին ստանումեն մի նոր աշխոյժ, սերտական ձգտողութիւնը զարթելով, վառասիրութիւնը և պատուասիրութիւնը զօրանումէ, դատողական զօրութիւնը սկսանումէ առաւել, բայց և կիրքը սատկանումէ աւելի: Ընձնաձանաչութեամբ բարձրանումէ կեանքի արժանաւորութիւնը. իւր յատուկ յօժարութենով մարդը ընտրումէ իւր համար մի դործ որպէս իւր պաշտօնի վիճակ. այնուհետև ոչինչ բան չէ ուսանում ստիպանքով, կամ թէ ժամանակ անցուցանելու համար, այլ սրտի վկայութեամբ, թէ ուսած բանը դործ պիտոյ է դնէ սպասդայումը: Այայց լինելով դեռ ևս անփորձ և անհաստատաբարոյ, կարող է նա մոլորվիլ դէպ ի խելագար յանդգնութիւն և տարապայմանութիւն, որ կարող էին հեշտ կորուստի պատճառ լինել նորա համար: Սրիտասարդութեան վերջումը, այսինքն քսանի և քսանուհինգի մէջ, կանանց մէջ աւելի վաղ քան թէ տղամարդերի մէջ դադարումէ աճելութիւնը, և այսպէս մարմինը հասած է իւր բոլորովին կատարելութեանը թէ մեծութեամբ և թէ ուժով: Նայելով կազմուածքին, առողջութեանը, ժառանգական տրամադրութեանը, կլիմային, անունդին և այլն, զանազան է մի կատարելապէս չափահաս մարմնի մեծութիւն: Առաւել սովորական և դեղեցիկ զուգաչափը տղամարդի մէջ է հնդից մինչև վեց ոտնաչափ, բայց կանանց մէջ համարեա թէ միշտ մի փոքր պակաս: Նրը որ դադարել է աճողութիւնը դէպ ի երկայնութիւն, ապա աճումէ մարդը դէպ ի լայնութիւն, և առաւելանումէ ուժով: Ոսկորները լցվումեն, օսկրները հաստանումեն և ամրանումեն, և պատշաճապէս մնունդ ու հանդիստ տալով մարմնին, յառաջանումէ ձարպոտութիւնը: Այս ձարպոտից պատարտութիւնը հաւաքվումէ մանաւանդ թէ

փորի վերայ, որով մարմնի առաջին բարակութիւնը նուազումի և տեղի է տալիս շատ կամ փոքր բոլորակ ձևերին: Ընչական հատակը է կեանքի ամենագեղեցիկ միջոցը. այժմ լրատրծված են բոլոր ընդունակութիւնքը. երիտասարդական բոցավառ կրակը աւելի չափաւորվել է, փորձառութիւնը զօրացուցել է նորա սիրտն ու հոգին, մտածողական կարողութիւնը աւելի խոր է, դատողականութիւնը աւելի սուր, և դոյնը աւելի խոհեմ: Մարդը այս կենսական հատուածի մէջ կարող է առաւել պատշաճապէս լրացուցանել իւր պաշտօնի վիճակը: Ընչ կատարեալ ժամանակը մարդկային կեանքի ամենևին անզգալի կերպով նուազումի հետ ըհետէ. նոյն օրէնքը, որով մարդուս մարմինը առ փոքր փոքր հասած էր իւր գերազայրութեանը, նոյն օրէնքը առ փոքր փոքր տանուամեն նորան դէպ ի նուազութիւն և բոլորովին շիջուցանուամեն նորան: Մարմնի մի քանի բաժիններուն մէջ պատահումի զօրութեան նուազութիւն. զոր օրինակ ատամները աւերվումեն շուտով, որովհետև նոցա պսակները տորվումեն, փայլուն սպիտակութիւնը նոցա կորոզական մանկերևութի վերայ սովորաբար մաշված էր ահա քանիերորդ տարումը, այնպէս որ պսակի դեղնադոյն ատամնանիւթը կարելի էր տեսանել: Մազերի ամորութիւնը, որ սկսեալ վերջից մինչև քանևհինգ տարին շատ առատ է, երեսունիերորդ տարումը նուազումի դարձեալ. նոքա դունաթափվումեն և օրէ օր աւելի դուրս են թափվում: Յիսուն տարուց յետոյ յայտնապէս փոքրանումի մնդատութիւնը. ձայնը չքանումի. այս պատճառով մորթը գնալով գնալով խոշոմումի առաւել, և առաջին դեղեցիկ կերպարանքը տգեղանումի: Բոլոր անդամները ցամաքումեն, դանդաղկոտվումեն, կոշտանումեն և ստանումեն աւելի ջլոտութիւն: Աւելի փոքրիկ անօթների բերանները փակվումեն, այս պատճառով կապվումի ոսկրների սննդառութիւնը. նոքա աւելի տկարանումեն և աւելի դիւրաշրջելի էլեն. բոլոր ատամները հետ ըհետէ վայր են թափվում. երկու ծնօտանները տորվելով մաշվումեն, քթի հեռատորութիւնը կզակից շատ կարճանումի ծեր և ատամնաթափ երեսի վերայ, շրթունքը նեղս են ընկնում և կզակը վեր է ցցվում: Ընչպէս, առ սակաւ սակաւ չքանումի ամենայն վայելչութիւն որ յառաջուց նստած էր երեսի վերայ, որ և այնքան դրաւիչ էր սրտի համար, թէպէտ մարդը շատ փոքր մտածումի այն բանի վերայ թէ ան-

ցաւոյ էր դա: Աչքը կորուսանումէ իւր սրութիւնը, նորա կարողութիւնը թուլանումէ, եղջերեայ թաղանթը պղտորվումէ, և արուեստական ապակիներին, խոշորացոյց ակնոցների օգնականութիւնը լինում էր հարկաւոր: Անդադարութեան պահապանութիւնից թուլանումեն մուսկուլքը, միսը տկարանումէ և մարմնի առաջին ժրութիւնը փոխանցումէ դէպ ի հանգստասիրութիւն և դիւրասիրութիւն: Ծերունին փախչումէ ամենայն շարժողութիւնից, որովհետև դա ծանրանումէ նորա վերայ, նորա դնացքը անապահով է և դողդոջուն. ոտքերը չեն կամենում տանել մարմինը և մարմինը չէ կամենում աւելի տանել դլուխը: Գլուխը խոնարհումէ դէպ ի յառաջախոշմը, քամակը կորանումէ, ծնկերը ծալվումեն և դորանով բոլոր կերպարանքը կծկվումէ, կարօտ է օտարի օգնականութեանը, և Ծերունին պարզումէ ձեռքը դէպ ի մի նեցուկ: Նորա ձայնը տկար է, կերկերեալ և դողդոջուն. պատճառ, այս գործարանի մուսկուլքը եւս աւիրված են Ծերութեան տկարութենից: Արիւնի շրջանակութիւնը լինումէ աւելի ծանրաշարժ, երակի զարկողութիւնը, անչափ. մի րոպէի մէջ 50 ից մինչև 55 անգամ: Բոլոր արտաշնչութիւնքը, մանաւանդ նոքա, որ լինումէին մորթի գործակցութեամբ, կապվումեն և դանդաղկոտվումեն. բոլոր ամոր մասները են բեկանուտ և կոշտ, և այն հողի յատկութիւնը, որ դոյանումէր մարմնի մէջ, ոսկրանումեն խոչափողն դլխի, շնչափողն, կողերի աճառքը և աւելի մեծ արիւնեղէն անօթքը: Ինչպէս կեանքը առհասարակ, նոյնպէս և ջղերի զօրութիւնը և դրդռականութիւնը պակասումէ, դորա հետ միասին և հոդու զօրութիւնքը: Նրևակայութիւնը, կամ թէ նորանոր գաղափարների կերպարանութիւնը թուլանումէ մանաւանդ. իմացականութիւնը, որ հիմնած էր փորձի վերայ, և դորանով ստացած խոհեմութիւնը տևումէին դեռ եւս առաւել երկար: Դորանով Ծերութիւնը լինումէ օգտակար և մանուկներին խրատատու: Ամ փոքր փոքր անհետանումէ զուարթութիւնը և սկսանումէ երևել մի անխորոզութիւն դէպ ի ուրախութիւն և ցաւ. Ծերութիւնը իւր պատանեկով շինումէ Ծերունին բարկացկոտ և դժնդակ. նա մոռանումէ, որ մանկութեան ժամանակին ցանկացած էր Ծերանալ. նկերկից անգոհ է նա, և անցած ու դնացածի մէջ դտանումէ մի քանի սխալանութիւն: Նա իւր

օրերի վերջումը լինում է երեխայական, անկարող և օգնութեան կարօտ, ինչպէս որ եղած էր իւր օրերի սկզբումը:

ՄԱՀԸ.

Մի՛ սարսափիք, լսելով մահու անունը. հանդարտեցէք, մահ չկայ բնութեան մէջ, մահ չկայ և քրիստոնեայ մարդու համար, որ սահմանված է միանգամայն լինելու երկրի և երկնքի քաղաքացի. բայց կայ մի հոգևոր մահ, ինչպէս վկայում է սուրբ դիրքը, որպէս ամբարիշտ մարդերի հատուցումն: Պատմենք այս տեղ այդ բնական օրէնքի ընթացքը: Նորը որ կեանքը ամենևին հաղորդակից է եղել, ապա դադարումն ներգործել չիղելի զօրութիւնը. երբ մինչև այժմ անվաստակելի սիրտը զարկումն վերջին անգամը, այնուհետև վերջին շնչառականութեամբ հատանում բնական մահը, որպէս ծերութեան հետևանք: Դա երևութեան այն ժամանակը որպէս փոքր առ փոքր շիջողութիւն ամենայն կենդանական զօրութեան և նման էր մի քաղցր ննջողութեան: Կեանքի վերջին րոպէների մէջ թուլանում սրտի զարկողութիւնը, աչքերի փայլողութիւնը շիջանում, երևոյթ ներս է ընկնում և դունատվում, քիթը սրանում, ուշը և զգայութիւնը վերանում են, շունչը ծանրանում, նուազում, խանգարվում և վերջումը մի շնչառականութեամբ դադարում ամենևին: Հատ սակաւ մարդիկ միայն մեռանում են այդպիսի բնական մահով. անհուն բազմութիւն միատակաւ ներգործութիւնների, մանաւանդ թէ հիւանդութիւնների, վաղաժամանակ յառաջացնում են մահ. պատճառ, մարդերի մեծ մասը մեռանում ահա իւր մատաղ երեխայութեան հասակումը: Բնական մահը հատանում սովորաբար 70 և 80 տարում: Ընտիր երկարակեաց մարդերի օրինակները սակաւադիւտ են: Ծնածների չորրորդ մասը մեռանում ահա կեանքի առաջին տարում, համարեա թէ նոցա կէս մասը մեռանում մինչև տասն տարին. մնացածների մեծ մասը վախճանվում 20 ից մինչև 60 տարին: Ով որ հատանում խորին ծերութեան և մեռանում այդ հասակի տկարութենից, նա պիտոյ է ունենայր մի տեսակ կազմուածք և մանաւանդ թէ մի խելք, բարեխառն կեանք վարէր: Բնական մահու պատճառը, ասում պրօֆեսոր բնախօսը, բոլոր օրգանական և շնչաւոր արարածների համար մի սահմանված և անյեղաշրջելի բնական օրէնք է,

հիմնաւորված կենդանութեան պատճառների վերայ։ Երևում, որպէս թէ բոլոր կեանքը մի կենդանական քիմիական պրօցէս (ընթացք կամ դործակատարութիւն, մի քիմիական ծնունդ յառաջացնելու համար) է, որ կարդով, սկզբից մինչև վերջը անյեղլի կերպով յառաջ է գնում, անցանելով որոշեալ փոփոխութիւններին բովանդակ շարախարդը։ Կեանքը թէպէտ կարող էր չափաւոր կամ անչափաւոր վայելքով, մի լաւ կամ թէ վատ կազմուածով կարճանալ կամ թէ երկարանալ, այնու ամենայնիւ կենդանական պրօցէսը միւսվ անյեղլի, ըստ որում մեք ամենայն օր ծերանում ենք և դորանով առաւել մօտենում ենք բնական մահուն։ Պիւսերը որոնած են բնական մահու պատճառը այն կենդանական հողի կուտակութեան մէջ, որով իբրև թէ մարմնի մասները կոշտանում են և լինում են անթեքելի և խափանում են հիւթերի անցանելը նոցա մէջ. բայց այդպիսի ահագին աստիճան կոշտութեան չէ կարելի ենթադրել, ըստ որում և շատ պառաւամեայ ծերի անդամները չէին ամենևին զուրկ ձգականութենից։ Պահը երևութական է կամ թէ սոյգ. նորա վերստին դարձը դէպ ի կենդանութիւն կարելի է, բայց սորանը անկարելի։ Խեղդվածների, ջրահեղձիկ եղածների, շնչատպառների և մանաւանդ թէ ջրախտական դիպուածներով մեռածների մահը, տեղիք կայ համարելու երևութական, մինչև յայտնվէին սոյգ մեռելութեան նշանները։ Պատդպէս մեռած է մարդը, եթէ չը կայ նորա մէջ ոչինչ կենսական ջերմութիւն, եթէ անդամքը կոշտացած և բեկանուտ են. եթէ փչում է նորանից ապականութեան հոտ, եթէ կային նորա վերայ մեռելացոյց ասած բիծեր. եթէ թուլացած և պղտորած էր աչքը (որ երևում է անշարժ և անիսյալ, բիբը լայնացած և ամենևին անդրադ լուսի և արեգակի տպաւորութեան համար), եթէ չը կար նորանում ոչինչ հրապուրականութիւն մեռելի զօրութեամբ (այսինքն, երբ որ գալվանական հօսանքը շօշափելով մի մերկացուցած ջիղ կամ թէ մկանկու, չէ յառաջացնում ոչինչ ցնցիւնք), այլև, որ միակ անտարակոյս ապացոյցն է, թէ սոյգ էր մահը, երբ որ տեսանելութեին ընդհանուր նեխութեան նշանները։

ՄԱՐՄՆԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՄԱՀՈՒՑ ՑԵՏՈՑ.

Կենդանական ջերմութիւնը, որ մեռանելու ժամանակին ահա

սկսանումէ նուազիլ, մահուց յետոյ ատ փոքր փոքր չքանումէ ամենևին, և անհոգիացած մարմինը ստանումէ աստնաֆիլեան օդի որակութիւնը: Ըրիւնեղէն անօթքը դատարկվումեն, որովհետև արիւնը հաւաքվումէ աւելի մեծ փոսերի մէջ. բջիջաւոր հիւսուածը ներս է ընկնում և այս է դիակներուն դունաթափ և ներս ընկած կերպարանքի պատճառը. տպաւորութիւնքը որ մահներով առնումէին նոցա մէջ, չեն բարձրանում միւսանդամ, և այսպէս վերջումեր, եթէ ամենևին շնջած է կենդանական զօրութիւնը, յառաջանումէ նեխութեան խմորը, որով մարմնի կազմածը աւերվումէ և կատարվումէ հակառակը այն բանի, որով ղեղուկած էր կեանքը անդադար գործաւոր դանվելով: Ինչ նիւթերից բաղադրած է մեր մարմինը, նոյն նիւթերի յատկութեան մէջ դրած է այս կործանական խմորի սաիմը. մեք տեսանումենք, որ բնութիւնը կենդանութեան միջոցին անդադար ղեղուկած է հաւաքված վնասակար նիւթերը դուրս ձգելով մարմնից, և նոր սկսանի նիւթեր հասուցանելով նորան: Կենդանական զօրութեամբ միայն պահպանվումէ մեր մարմինը փտութենից, դէպ ի որ կողմը շատ հակամիտված էին նորա մարմնի ատմոսական նիւթքը: Ները որ այս կենդանական զօրութիւնը դադարումէ ներգործելուց, մահու մէջ, աւերված նիւթերը յետ ինաալով մարմնի խառնուածի մէջ ապականումեն անադատ մասները և այդպէս ձանապարհ են սալիս կործանական և նեխական խմորին: Ները որ այս բանը եղած է, մեռեալ մարմինը վերումի իւրեանից մի դիշական հոտ. նորա դոյնը լինումէ կանաչ, նորա բոլոր նիւթը փաիկանումէ և ջրալի է դառնում: Նա հետ միհետ ուռչումէ դէպ ի վեր, պատռվումէ յետոյ և այնուհետև գոյանումեն այնպիսի օդի տեսակներ որ վտանգաւոր էին կեանքին և առողջութեանը: Ջրալի, հեղանուտ մասներըը շողիապէս ցնդումեն, մարմնի բոլոր նիւթը փոխարկվումէ մի թուխ կամ կանաչ խիտ, որ անպիտան և գարշելի հոտ ունի, և յետոյ, մի կամ երկք տարու մէջ, չորանալով դառնումէ մի խոխռուտ, մոգադոյն թուխ հող: Ոչ ամենայն ժամանակ միօրինակ շոյտ կատարվումէ փտութիւնը. ջրի մէջ առաւել արադ. այս տեղ շուտով լուծանվումեն բոլոր կակուղ մասներըը. միայն եղունգներըը, մազերըը, ածառներըը, ոսկրներըը և վերջին մորթը աւելի երկար դիմանումեն կործանութեանը: Հողի մէջ մարմինքը փտումեն աւելի

ծանր. բայց սա լինում է և այլապէս, նայելով մանաւանդ թէ հողի որակութեանը. սպառնում, եթէ հողը չոր, աւազային, անձրևի կրկնից պահպանած է, ապա դեպ ի ինքն է քաշում ջրակի զիջութիւնը, և ջրակը չէ փառում այլ չորանալով դառնում մի բնական մումիա. ղոր օրինակ Նօհատպատէ Նապօլէոնի մարմինը Սանտ Ելենա կղզումը, որ քսան տարուց յետոյ, երբ որ բացեցին նորա գերեզմանը, ամենևին անապատ ծնացած էր. հողի այլատեսակ որակութիւններից ազդեցութենից կարող էր թաղած մարմինը փոխվիլ մի սապոնային նիւթ որ լուծանելի էր ջրի մէջ, Ոսկրները միայն կարող են յաջող հանգամանքների մէջ հարիւրաւոր տարիներ ընդդիմանալ փտութեան, բայց և նոքա յետոյ կորուսանում են իւրեանց մածուցը, խախտուանում և լուծանվում դառնալով նուրբ հողեղէն փոշի.

Այսպէս ահա մարմինը միւսանգամ յետ է դառնում դէպ ի իւր տարրական նիւթերը. բայց անտես բնութիւնը հաւաքում այն, մի ժամանակով զմայլեցուցիչ, կազմածի փոքրիկ ծնացուածքը և դարձեալ գործ է դնում նորանոյ, նոր ի նորոյ բաղադրելով օրգանական մարմիններ.

Ս. Ա–եանց.

ՆԵՐԱՆԿՆԵՒ·

Մոսկվա, 25 ին Նոյեմբերի 1859 Թուականի·

ՄԵԾԱՊԱՏԻՒ ԲԱՐԵԿԱՄ Կ· Ծ·

Ձեր յարգելի նամակը անցեալ Հոկտեմբերի 5 Թուականից ստացայ իւր ժամանակին· Նորա մէջ աղգասիրաբար ցաւելով գանգատումք ձեր երկրացիների անընթերցասիրութեան վերայ և կամենումք լսել ինձանից, Թէ ի՛նչ դեղ ու ճար կայ այդ բարոյական ցաւին որ մի ահագին քարի պէս ընկած ճանապարհի վերայ, Թոյլ չէ տալիս աղգի մարդերին մօտենալ լուսաւորութեան արբաքանին, Թէպէտ նորներումս բաւական և ընտիր ընթերցանելի գրուածք մեծ աշխատութեամբ տուած էին աղգին վայելելու· Դուք շատ իսելացի յառաջ էք բերում այսպիսի խօսք· «Եթէ Հայոց աղգը մինչև այժմ ուներ գանգատանքի տեղիք, Թէ նորա հեղինակները գրում էին իւրեանց համար աւելի քան Թէ իւրեանց ընկերների համար, խօսելով հին օրերի լեզուով, որ այժմեան ժողովրդին անօգուտ էր, ըստ որում անհասկանալի, ապա ի՛նչ պատճառներով կարող էին Հայք արդարացնել իւրեանց անձը, երբ որ արդէն ունին իւրեանց մէջ մի հասկանալի աշխարհաբառ ոճով մատենագրութիւն, բայց չկամին ընթերցասիրել այդ գրուածքը, օգուտ քաղել դոցանից, ուսանել մի նոր բան, որ չգիտէին դեռ ևս·

Ձեր գանգատը, աղնիւ բարեկամ, պիտոյ է ասել, պատշաճումք ոչ Թէ միայն ձեր երկրակիցներին մասնաւորապէս, այլ ընդհանրապէս մեր Հայերին ամենայն տեղ, Թէ Ռուսաստանի և Թէ Տաճկաստանի մէջ, Թէպէտ այդ ընդհանուր անընթերցասիրութեամբ չէ կարող արդարանալ ոչ մի մասը· Մինի պակասաւորութիւնը չէ կարող անմեղադիր կացուցանել միւսի պակասաւորութիւնը· երկուքը ևս հաւասարապէս դատապարտելի են· Խմաստութեան անսիրելութիւնը մի չար անէծք է Հայոց աղգի վերայ, սկսեալ հին ժամանակներից մինչև մեր օրերը· Չիմ ասում աստուածային անէծք, որովհետև ամենաբարի Աստուածը, սիրու և արդարութեան Հայրը, կարող չէր այդպէս անիրաւ դատավճիռ դնել ի Հայոց աղգը և կողմնապահութեամբ միւս աղգերին առատաձեռնել այնքան խմաստութեան և խմաստասիրութեան լարու-

թիւնք, բայց Հայերից միայն յետ պահել այդ պարգևքը։ Դորա պատճառքը երևումեն ինձ բազմադիմի. հին ժամանակների մասին, պիտոյ է ասել այսքան, որ Հայոց ազգի դաստիարակութեան գլխոգքը եղած են քրիստոնէական վանքերը (հեթանոսութեան դարերի մասին ոչինչ հաւաստի բան կարելի չէ ասել, որովհետև շատ չքաւոր են մեր տեղեկութիւնքը այդ ժամանակների մասին), ուր դաստիարակվումէին Հայերը, որ նուիրել էին իւրեանց անձը հոգևոր կոչման և կամէին լինել ժամանակաւ եկեղեցու պաշտօնեայք։ Միտ դնելով մի մի հոգևոր մարդերի ճոխիմաստ և բազմահայեաց մատենագրութեան, պիտոյ է ասել, որ այդ վանքերը եղած են լուսաւորութեան օթևանք, դոցա մէջ ծաղկել է մի բազմամասնեայ ճորին գիտութիւն, ուսումն ասորի, եբրայական, յունական, վերջին դարերումը, և լատինական լեզուների. ոչ այնպէս, ինչպէս այժմ, ուր Հայոց վանքերը դարձել են միայն խաւարի օթևանք, և վանականքը որբացել են ամենայն ուսումնականութենից, մինչև արդարև դոցա համար ամենևին անլսելի է դարձել յիշեալ լեզուների անունը անգամ։ Բայց աշխարհական գլխոգքը երբէք եղած չեն ժողովրդի դաստիարակութեան համար, ուրեմն կարող չէր լինել Հայերի մէջ և ազգային դաստիարակութիւն, և սորանով հասկանալի է արդէն և ազգի սառնութիւնը դէպ ի իմաստութեան սիրելութիւն։ Թողունք ժողովուրդը և ազգը, Հայոց հոգևոր դասը անցած գնացած դարերի մէջ մեծապէս սիրել է ուսումն և ծաղկեցուցել է դորան իւր ասիական հողի վերայ, ինչքան որ Հայաստանը ունէր իմացական և բարոյական հաղորդակցութիւն իւր քրիստոնէական ուսման աղբիւրի, այսինքն Յունաստանի հետ, չեմ ասում եկեղեցու հետ մասնաւորապէս, այլ Յունական ուսումնականութեան և Յունաց ականաւոր մատենադրութեան հետ, որ միշտ եղած են մեր Հայերի համար օրինակ և առաջնորդ։ Նոր ժամանակներումս հանդիպումն մեղ այլ իրողութիւններ, որ ձեռնտու չեն Հայոց մարդերի մտաւորական յառաջադիմութեանը։ Նախ և յառաջ, նոցա աշխարհային դրութիւնը. մի առանձնացած, իւր մէջ փակած դրութիւն այնպիսի քաղաքների մէջ ուր անկարելի է հաղորդակցութիւն լուսաւոր աղգերի հետ։ Երկրորդ, մեր Հայերի ընկերական դրութիւնը Ռուսաստանի աւելի լուսաւոր քաղաքների մէջ. այս Հայերը, թէև շատ մօտ էին լուսաւորութեան աղբիւրին, բայց իբրև մի անլուսաւոր վաճառական ազգ, գործ ունենալով միայն Ռուսաց ազգի ցած և անկիրթ վաճառականների հետ, ի հարկէ կարող էին միայն ուսանել դոցանից մի քանի վաճառական յայտողականութիւնք, արտաքին քաղաքավարութեան ձևեր և կարգեր, բայց ոչ մի աղնիւ մտաւորական շարժողութիւն դէպ ի յառաջ. Հայերը այդպիսի աննախան-

ձեւի օրինակներ իւրեանց աչքի առաջև ունենալով, զարմացք կը լինէր, եթէ զգային իւրեանց մէջ ազնիւ ձգտողութիւնք, ցանկութիւն յաղնային իւրեանց սրտի մէջ ընթերցասիրութեամբ և իմաստասիրութեամբ հոգ տանել իւրեանց իմացական կատարելութեանը։ Վաճառականութիւնը ինքն ըստ ինքեան արդէն շատ սնուցիչ և ձեռնտու է նիւթապաշտութեանը, ուր մնաց մի անդաստիարակ և անլուսաւոր ազգի մէջ, որի հանապազօրեայ ընկերը է նոյնպիսի տգէտ և կոպիտ ժողովուրդ։ Մեր Հայոց վաճառականքը Ռուսաստանի մէջ եթէ առևտրական գործ ունենային լուն Եւրոպացոց հետ — որ շատ փոքր է պատահում — բաց ի արտաքին և նիւթական մտաւորութենից, ինչպէս Հայերի կրթութեան աստիճանն է, կարող չէին նոքա ոչինչ այլ յարակցութիւն ունենալ Եւրոպացոց հետ։ Բայց թաղուն Եւրոպացի վաճառականքը Ռուսաստանի մէջ, որ շատ հեռի են մեր Հայերից իւրեանց ընդհանուր կրթութեամբ։ Ռուսաց վաճառականը, որին աւելի մտաւոր է Հայը, վերջին ժամանակներս բաւական յառաջադէմ է լուսաւորութեան մէջ, գիտէ բաւական յստակ և գեղեցիկ խօսել իւր լեզուն, ուրեմն և մտածել, որ ընթերցասիրութեան և գրասիրութեան միայնակ հետևանքն է, և նորերումն ի՛նչքան գրեանք են տպվում Ռուսաստանի մէջ ժողովրդի համար, և ոչ մի հեղինակ կամ գրավաճառ գանդատաւոր չէ, թէ նորա գրքերը տարածվում չեն։ բայց Հայ վաճառականը մի գիրք տեսած չտեսած, հեռի է փախչում նորանից, մի գուցէ որ ժանտացաւի պէս գիպչէր նորան և վարակէր մի անբժշկելի ցաւով։ և ինչո՞ւ, որովհետև մի անտանելի ցաւ էր թէ արծաթ հատուցանել գրքի համար, և թէ մնանաւանդ, որ պիտոյ էր իւր բանականութիւնը գործ դնել հասկանալու գրքի խորհուրդը։ Այս խօսքերս կը հաստատեն իւրեանց յատուկ փորձով թէ հեղինակներ թէ այլ պարոններ որ մեծ աշխատութեամբ և բաւական ծախքով Հայերէն գրեանք տպեցին նորերումն։ Նոյնը պիտի հաստատէ և Հայոց թշուառ գրավաճառը Ռուսաստանի մէջ։ Մի մեծ, երևելի գործ լինելու չէր, եթէ Հայոց վաճառականը գոնեայ օրինակ առնուր իւր համար Ռուսաց վաճառականների ընտիր մասը, նոցա մէջ եղած ուսումնասէր և ընթերցասէր հասարակութիւնը։ Բայց չէ։ ասես թէ Հայերի համար օրինակ չէ օտար ազգի լաւ բանը։ լաւ ուտել։ լաւ խմել, փառաւոր և յարմար ապրիլ, այս բաները շատ արագ և շատ քաջ ուսանումեն մեր Հայերը Եւրոպեականացած Ռուսերից։ բայց մի հոգևոր շնորհք, մի ազնիւ սովորութիւն, մի գովելի եռանդն ուսանելու, ընթերցանութեամբ լայնացնելու իւր հայկական տեսութեան շրջանակը, քաւ լինի։ պդ, Հայի համար չէ։ Հայը պիտոյ է միշտ տգէտ մնայ։ Թող լինին մի քա-

նի լացաուելիւնք ընդհանուր կանոնից, բայց դժբանով կարող չէ խախտվիլ մեր ասածների հաստատուելիւնը։ Հայերի մէջ շատ ծաղկած է թղթախաղուելիւնը նոցա պարապուելեան ժամերի մէջ. դորան մասնակից են ոչ թէ ժողովրդականք միայն, այլև եկեղեցական պաշտօնեայք։ Այդ գործին ասուելին մի անմեղ կողմանք, բայց ես կ'ասէի մի դատարկամիտ կորուստ և անխիղճ սպանուելիւն ժամանակի, որ կարելի էր գործ դնել խելացի և աղնիւ խոսակցուելիւնների կամ թէ ընթերցասիրուելեան վերայ ընկերական ժողովով։ կարծեմ, ամենայն լան հեշտ և ընդունելի է մեր Հային բաց ի այն լանից որի մէջ հարկաւոր էր մի փոքր խմացական գործողուելիւն, պարզ ասեմ, մի փոքր մտքի աշխատուելիւն, որի նպատակը արծաթ չէր, այլ խմացական և բարոյական։ Ահա այս և նոցա նման պատճառներով համարեա թէ ամենայն տեղ քնած է Հայոց աղգի հոգին. աղնիւ, ականաւոր մարդկուելեան գաղափար չկայ նորա համար, որովհետև չունի նա ոչինչ աղնիւ պատուասիրուելիւն, ոչինչ անձնայարգուելիւն, դուցէ թէ երբէք մտածել ևս ուսած չէ թէ ի՛նչ դանազանուելիւն կար մի շնչաւոր և մի հոգևոր էակի մէջ, դուցէ թէ Հայը չգիտէ դեռ ևս թէ նա իրրև մարդ իւր բանական հոգովը պատկանուելիր երկնքին և աստուածեղէնին, ուրեմն ուսումն և մտածուելեամբ, պարտական էր կատարելագործել իւր անձը, ինչ վիճակի մէջ ևս դրած լինէր նորան նախախնամուելիւնը. և այդպէս զարմանք չէ, եթէ մեր Հայը կարծումէ թէ նա գտանվումէր այս աշխարհումն մարմնաւոր պիտոյքներ միայն ճարելու և վայելելու համար և թէ բոլոր կեանքի երջանկուելիւնը, սկիզբը և վերջը բովանդակվումէր նիւթական վաստակի ճոխուելեան և մեծուելեան մէջ։

Ի՛նչ հնարներ կային այս մեր հասնտարած ցաւին դեղ ու ճար առնելու, հարցանումէք ինձանից, աղնիւ բարեկամ։ Հնարներ շատ կան, միայն թէ աղգի կարող մարդիկը կամեցող լինէին գործ դնել դորանից. եթէ աղգի նոյն իսկ մարդիկը կամէին մի փոքր թողուլ իւրեանց վայրենամտուելիւնը և տեղիք տալ մտածուելեան իւրեանց մարդկային կոչման վերայ։ Դանեմարքիայի տէրուելեան մէջ քաղաքական կարգով պարտականուելիւն է դրած ամենայն ծնողի վերայ ուղարկել իւր պաւակները ուսումնարան, որ տղայքը դատարկուելեամբ չշրջկեին փողոցներումն։ և եթէ մի ծնող ունէր զաւակներ, բայց նորանց չէր ուղարկում ուսումնարան, ընկնումէ տուգանքի տակ (ամեն օրի համար վճարելով 50 կոպ.), եթէ կարող չէր ապացուցանել թէ հիւանդուելեան պատճառով մնանումը չէտ էր մնացել տանը։ Պրոտեստանտական Գերմանիայի մէջ ամենայն մարդ, թէ աղնիւ թէ քաղաքացի և թէ շինական պարտ է դրպէտ լինել և կարողանալ կարդալ սուրբ գիրքը, ապա

թէ ոչ, կարող չէ նա հաղորդվիլ Տիրոջ սեղանին։ Հին Արարացոց մէջ եղած է նոյնպէս մի գեղեցիկ բարոյական կարգ, որի հիման վերայ երիտասարդ մարդիկը պարտական էին կրթուելիւն ստանալ գեղեցիկ հրմտուելիւնների մէջ, ճարտարապէս խօսել և գեղեցիկ գրել· ապա թէ ոչ, նոցա տալու չէին իրաւունք ամուսնանալու, կին ունենալու։ Ամենայն տեղ և ամենայն ազգի մէջ մի յառաջադիմուելիւն կեանքի ասպարիզումը յառաջացնելու համար, հարկաւոր է և եղած է միշտ մի նիւթական կամ բարոյական ընտրատուելիւն, մի փայտեայ կամ հոգևոր գաւազան։ Այն ազգը և մարդը որ ինքը չկամի գործ դնել իւր վերայ մի ուղղիչ և խրատիչ և դաստիարակիչ գաւազան, դորան գործ կը դնեն նոցա վերայ միւսները։ Այսպէս, Պետրոս Թագաւորը, Ռուսաց ազգի նոր քաղաքական մեծուելեան և վերանորոգուելեան հեղինակը ստիպուած էր գործ դնել մի բաւական ցաւեցուցիչ գաւազան իւր ազգի ասիական կոպտուելիւնը վերացնելու, բարքերը աղնուացնելու, օրէնք և արդարուելիւն հաստատելու, անկարգուելիւնքը դատարաններուն մէջ հեռացնելու, արուեստ և գիտուելիւնք ներս բերելու Ռուսաստանի մէջ Եւրոպայի բարեկարգ աղեարհներից։ Ինքը Պետրոսը ճանաչելով ուսման հարկաւորուելիւնը և իւր այս մասին պակասաւորուելիւնը, ամեթ չհամարեց յաճ իջանել իւր Թագաւորական աթոռի բարձրուելենից և գնալ դէպ ի օտար աշխարհներ ուսանելու և դաստիարակելու իւր անձը, որ այդպէս, նախ ինքը ուսանի և ապա ուսուցանէ, օրինակ լինի իւր հպատակներին ուսումնասիրուելեան և կրթուելեան մէջ։ Կան Ռուսաց ազգի մէջ մտաենագիրք որ կարծումեն թէ Պետրոսը մի վնասակար արագուելեամբ, ուրեմն և արտաքուստ միայն պատուաստել է Ռուսաստանի վերայ Եւրոպական լուսաւորուելիւնը և քաղաքական կարգերը, առանց ժամանակ տալու, որ այդ բարեկարգուելիւնքը ներքուստ ծլելով և կանաչելով, ազգային հետ ղէհետէ դաստիարակուելեան և կրթուելեան արմատից վեր բարձանային և դառնային մի հաստատմատ սեփական ծառ։ Այս կարծիքը ունի արդարև մեծ հիմնաւորուելիւն· սակայն չէ պիտոյ մոռանալ և այն, որ եթէ Պետրոսը իւր ժամանակին թէև այն մի փոքր շտապ ձեռքով սերմանած ու տնկած չլինէր, այսօր չէին հընձելու նորա ապագայքը· Հիմքը պիտոյ էր ձգել միանգամ, ճանապարհը պիտոյ էր բանալ, իսկ նորա ծիրանածին Թագաւորական յաջորդներին պահած էր յառաջ տանել և կատարելագործել ազգի ու տէրուելեան սկսած շինուածքը։

Հայոց ազգը չունի Թագաւորուելիւն, ուրեմն և մի Պետրոս մեծ կարող չէ վեր կենալ նորա մէջ և իշխանական գաւազանը ձեռքին հրամայելով յառաջ մղել ազգաշինուելեան գործը· Հայոց դրուելիւնը

այլ է· նոցա կարող մարդիկը, մանաւանդ թէ ազգի հոգևոր գլուխը պարտական է գործ դնել մի բարոյական գաւազան, կանք և կենդանութիւն յառաջացնելու ազգի մէջ, իմաստութեամբ հրամայելով և յառաջ տանելով ազգի գաստիարակութեան վաստակը· վերջապէս, եթէ բաւական ծանր հոգալիք ունէր մի հայկական կաթողիկոս, իւր հոգևորական դասու դաստիարակութիւնը և կրթութիւնը միայն հոգալով, ըստ որում այդ տեղ ամենայն բան պիտոյ էր այրից ու լինից սկսանել, որովհետև բոլորը ոտքից մինչև գլուխ թաղված է վայրենի տգիտութեան մէջ, վերջապէս, ասում եմ, ինքը ժողովուրդը պարտական է վեր կենալ և գործ դնել իւր վերայ մի բարոյական գաւազանի զօրութիւն· ինքը պիտոյ է լինի իւր իմաստուն սաստող և պատժող և խրատող դաստիարակիչը, ինքը պարտական է հոգալ իւր միջից իւր ուսուցիչը և դպրոցը· ինքը պիտոյ է լինի իւր համար և ուսուցիչ և աշակերտ· առանց մի բարոյական խթող և զարթուցանող գաւազանի անհնարին է մի ազգի վերանորոգութիւն, ուր մնաց, որ մի տգէտ և անկիրթ ազգ պահպանվիլ ևս կարող չէ ժամանակի ուտող մաշող ատամներից· Ազգային լուսաւորութիւնը միայն կարող է հոգի և զօրութիւն տալ ազգին դիմանալու օտարի կլանողական բռնութեանը· Լսում եմ, Հայոց ազգը մի քանքարաւոր, կրթութեան և լուսաւորութեան շատ ընդունակ ազգ է· կրկնապատիկ ցաւելի, որ այդ գեղեցիկ աստուածատուր քանքարքը անգործ և անհնշակ թաղած են հողի տակ և Հայք չկամին միաբան զօրութեամբ հոգաբարձութիւն գործել դուրս հանելու այդ քանքարքը, մշակելու և փայլեցնելու աշխարհի հանդէսի մէջ· Աստուած որ տուել է մարդուս բանական հոգի և իմացական կարողութիւնը, դա մի անխորհուրդ բան չէ, ինչպէս դարձեալ անխորհուրդ բան չէ, որ մարդս ստացել է նորանից մարմնաւոր կարողութիւնք· այս կարողութիւնքը կերպարանագործելով, այսինքն աճեցնելով, զօրացնելով և գործ դնելով, կարող է նա միայն հասանել իւր լուն մարդկային նպատակին· Աստուած մարդուս ոչինչ աւելորդ կարողութիւնք տուած չէ, թէ մարմնականք և թէ հոգևորք, երկուքը ևս ունին իւրեանց մեծ խորհրդաւորութիւնը մարդկութեան մէջ, թող մի աբևղայական խաւար տեսութիւն աշխատէր կամ թէ կեղծաւորվէր թէ աշխատում մեռուցանել մարմինը, հոգին կեցուցանելու, Աստուծուն հաճոյանալու համար· Մարմնական կարողութիւնքը հաստատված լինելով ընութեան ստիպեցուցիչ կարիքների վերայ, որպէս անմիջապէս զգացուցիչ շարժարանք, որպէս յայտնարարքաւ ձայն տուող հարկապահանջք, ստանում են կանքի մէջ իւրեանց հատուցումը· բայց հոգևոր կարողութիւնքը, իմացական զօրութիւնը մարդուս մէջ կարօտ է առան-

ձին զարթուցանող և զգաստացուցիչ հնարների, որ կարողանային գործ կատարել կեանքի մէջ և լցուցանել իւրեանց պաշտօնը։ Այդ խթող և շարժող հնարները դրած են այն բանի մէջ, որ ասվուծմէ դաստիարակութիւն, ուսումն, գրասիրութիւն, ընթերցասիրութիւն և ուշադիր հսկողութիւն իւր վերայ։ Այն ազգը և այն մարդը որ անիծոյթ է իւր հոգևոր աստուածապարգև կարողութիւնքը աճեցնելու և զօրացնելու, այն ազգը և մարդը որ կամաւ և դիտութեամբ իւր անձը դերի տալով մի լոկ մարմնապաշտութեան, մի լոկ նիւթական վաստակաբարութեան, թոյլ չէ տալիս իւր մէջ յառաջանալու որ և իցէ աչնիւ հոգեղէն ձգտողութիւններին, այն ազգը և մարդը ամբարիշտ ձեռքով ոչնչացնումէ միանգամայն և իւր աստուածեղէն արարչի խորհուրդը, այն խորհուրդը որով պարգևած են մարդուս հոգևոր շնորհներ, այսինքն, որ սոքա դաստիարակվելով ուսմամբ, պիտոյ է պայծառացնէին մարդուս մէջ Աստուծոյ նմանութեան պատկերը, որ այլապէս մնալու էր մշանջենաւոր խաւարով ծածկած։ Եւ ինչ բանով, հարցանումեմ ես, կարող էր մարդը աւելի արժանաւոր կերպով փառաւորել իւր արարիչը, եթէ ոչ, նորա տուած պարգևները, իւր իմացական քանքարները իմաստութեամբ շահեցնելով, գործ դնելով և պտղաբեր կացուցանելով իւր և ընկերի համար։ Այսպէս է մեր ուսումը, եթէ կամինք հաւատարիմ աշակերտք լինել մեր մեծ քրիստոնէական դպրոցին, եթէ կամինք հասկանալ այն աստուածային կրօնի պարունակութիւնը, որին դաւանող ենք խոստովանումեմ մեր անձը։ Մի անգրաւէր, տգէտ քրիստոնէութիւն է նոյնպէս մի թշուառ և խաւար քրիստոնէութիւն, այո՛ աւելի թուառ և ողորմելի քան թէ նոյն իսկ հեթանոսութիւնը։

Ի՛նչ են մտածումեմ մեր Հայ եղբարքը։ իւրեանց մարմնաւոր պիտոյքը այս և այն ճանապարհով ճարելուց և լցուցանելուց յետոյ, ուրիշ ոչինչ բան հարկաւոր չէ՞։ այդքան հոգաբարձութիւն իւր համար ունի և անասունը։ ինչո՛վ ապա տարանից զանազանվումեմ այն բանական էակը որին ասումենք մարդ։ ո՛ւր մնայ ապա այն իմացական հոգին, որով աստուածութիւնը կամեցել է նորան գերազանց կացուցանել անբան արարածներից։ ո՛ւր մնայ ապա այն երկնաքաղաքացի կոչումը, որ ստացել է մարդս, եթէ նորա բոլոր ջանքը և ուշադրութիւնը պիտոյ է կապած սառած մնային լոկ երկրաւորի և մարմնաւորի վերայ։ Արդարև, մարդուս նիւթական վաստակաբարութիւնը օրինաւոր ճանապարհներով, երկրաւոր բարիք ժողովելը առանց դաւաճանելու և ըրկելու իւր ընկերը, դատապարտելի չէ, այլ գովանի, որովհետև մարմնաւորի հոգաբարձութիւնը այն հիմն ու պատուանդանն է, որի վերայ պիտոյ է հաստատվի հոգին և գործ կատարէ այս ժամանակաւոր կեանքիս մէջ

մշանջենաւոր կեանքի համար· բայց մարմնի հոգալարձուքիւնը միջնորդական հնար է, այլ ոչ նպատակ· նպատակն է հոգու պահպանուքիւնը, աճելուքիւնը, կատարելուքիւնը· Մեր Հայերի մէջ այս բանը վեր ի վայր է արվել· միջնորդական հնարը դարձել է բուն նպատակ, և բուն նպատակը ամենևին կորել է աչքից· Հայը մտածումէ արժանաւոր մարդ լինել հասարակուքեան մէջ, եթէ ունևոր էր արծաթով, թէև ամենևին չքաւոր էր իմացականուքեամբ· տխմար կարծիք, որովհետև արծաթի շատուքիւնը կարող չէ ծածկել խելքի պակասուքիւնը և հոգու անկատարուքեունը· մեր ներկայ ժամանակներումս ոչ ոք կարող չէ իւր ընկերից պատիւ և յարգուքիւն պահանջել, եթէ բաց ի արծաթից, փառաւոր կեցուքենից, լաւ ուտելուց և խմելուց, շքեղ հագնվելուց և ձիով ու կառքով փողոցի մէջ շրջելուց, ոչինչ չունի, ոչինչ միւս բանով նշանաւոր չէ· Այո, մի կոտոր սուտ և խաբեայ պատիւ երբէք պակասելու չէ հարստականին անկիրթ ամբոխի կողմից, որ ամենայն բանի մեծուքիւն կշռումէ արտաքին փառահեղուքեան կշռով, և երազումէ ևս տեսած չէր իմացական ու բարոյական մեծուքեան պատկերը· բայց մի՞թէ կարող էր մարդս հանդստանալ մի այդպիսի պատուով, երջանիկ համարել իւր անձը յարգելի լինելով մի տգէտ ամբոխի աչքումէ, եթէ այդ յարգուքիւնը դէպ ի մեղ յառաջանումէ ոչ թէ մարդերի սրտից և հոգուց, այլ նիւթական ակնկալուքեուններից, եթէ այդ յարգուքիւնը չէ լրխումէ մեր պատուական անձնաւորուքենից, մեր լուսապայծառ իմացականուքենից, մեր առաքինաշարժ հոգուց·

Չէ՛, աղնիւ բարեկամ· իմ կարծիքս այսպէս է, որ ամենայն մարդ, թէ Հայ, թէ Ռուս, թէ Գերմանացի, թէ Ֆրանսիացի, ինչ աղգից ևս կամի թող լինի, այն ժամանակ միայն ունի իրաւունք պատիւ և յարգուքիւն պահանջել մեղանից, եթէ նա ջարդարած է մի լուսաւոր իմացականուքեամբ, եթէ նա որպէս մարդկեղէն էակ իւր աստուածեղէն սարքչի նմանուքեան պատկերը ինքնաշխատ հոգացողուքեամբ պայծառացուցել է իւր մէջ, եթէ աստուածուքիւնը խօսումէ նորա մէջ, նորա շրթունքով, նորա խօսքերով մեր հետ· Մեր ժամանակներումս ամենայն մարդ Եւրոպայի մէջ, թէ աղնիւ և թէ շինական, թէ հասարակաւոր և թէ մանուկ պարապումէ ուսման, վաճառականը և արուեստաւորը, ծառան և աղախինը ունի իւր համար առանձնական ժամեր, որ նուիրումէ գրասիրուքեան և ընթերցանուքեան, և ժողովրդական մատենագրուքիւնը հնդկի պէս ամենայն տարի հազարաւոր հազար գրուածք թափումէ բաղմուքեան վերայ· Արևմտեան Եւրոպայումը այսպէս· բայց և մեր Ռուսաստանի մէջ, վերջին ժամանակներումս այն-

քան ծագկած է գրասիրութիւնը և ընթերցանութիւնը, որ Ռուսաց
հինականների տղայք ևս խանութներն մէջ նստած, պարապութեան
միջոցներին մի կարգալն թերթ կամ գիրք ունին իւրեանց ձեռքում, և
այդ բանը տեսանելով մտախոհ անցաւորը, կարող չէր իւր սրտի մէջ
չգովասանել այդ ուսումնասիրութիւնը: Գիտեմ թէ ինչ պիտոյ էր
մնածել Հայերի մասին. մի՞ թէ մեր սիրելի Հայրենակիցքը կամին
այնքան արհամարհել իւրեանց բանականութեան պատիւը, մինչև ա-
ւելի ստոր և վատթար երևել, քան թէ Ռուսաց գիւղացի տղայքը:
Ամաչելով ցաւումեմ ևս, այնիւ բարեկամ, որ մեր ներկայ օրերումն
ստիպուած էք Դուք և մեք գանգատել, թէ Հայոց մարդիկը անգրասէր
են, անընթերցասէր և անիմաստասէր բարք ունին, և թէ դժուարին էր
տարածել Հայերի մէջ այն սակաւաւոր գրուածքն ևս, որ մի քանի մա-
տենագիրք Ռուսաստանի մէջ լոյս էին ընծայում Հայերի դաստիարա-
կութեան համար: Սոսկալի՜ իրողութիւն, և՛ս սոսկալի մտածութիւն,
թէ մեր սիրելի Համազգիքը այնքան վայրենացած էին հոգով ու սըր-
տով, մինչև ուրանալ այն արարչատուր շնորհը, բանականութեան
պարգևը, որ ստացել է մարդս իբրև մի շահեցնելի և գործադրելի քան-
քար: Սոսկալի մտածութիւն, թէ մեր սիրելի Համազգիքը կամին հրա-
ժարվիլ իւրեանց բարձր մարդկային, իւրեանց ևս ասելի բարձր, քրիս-
տոնէական կոչումից, որ անկարելի է լցուցանել առանց ուսման և դաս-
տիարակութեան, ինչպէս սա ժողովրդի մէջ անկարելի է առանց գրա-
սիրութեան և ընթերցասիրութեան: Մի՛ խնդիր կամենումեմ առաջար-
կել այս տեղ, այնիւ բարեկամ. եթէ ասէինք ձեր երկրացի Հայերին,
որոնց անընթերցասէր և գրատեաց բարքը պատճառ է տուել Ձեր
գանգատական նամակին, եթէ ասէինք թէ դուքա մարդիկ չեն, այլ մի-
այն ուտող խմող անբան արարածք, առանց որ և իցէ իրաւունքի մարդ
ասվելու կամ պատիւ պահանջելու մեղանից. կարծեմ, դուքա մեծապէս
բարկանալու էին մեր վերայ, այո՛ մեղ կը քարկոծէին ևս, եթէ կարո-
ղանային. բայց ինչո՞ւ այսպէս: Եթէ ծանր չէ նոցա փախչելով փախ-
չել ամենայն խնամատութենից, ատել և արհամարհել ամենայն ուսումն
և կրթութիւն, անպատուել իւրեանց մարդկութիւնը անասնական անա-
մոութեամբ, ապա ինչո՞ւ ծանր է նոցա լսել մեր բերանից, թէ նոքա
են, ինչպէս որ իսկութեամբ են, այսինքն անբան շնչաւորք մարդկային
կերպարանքով: Սարսափելի նկատողութիւնք, մանաւանդ որ դուքա
հանդիպումեին մեր սրտի սիրածներին, մեր արիւնին, մեր ազգին: Ոչինչ
հնար փրկութեան չկայ մեղ այս տեղ, այնիւ բարեկամ, ոչինչ ճար
ու ճանապարհ չեմ տեսանում այս տեղ բայ ի այն մի հատից, որ Դուք
և մեք աստուածեղէն խօսքի ամենակարող ղօրութիւնը սրտի վկայու-

Թեամբ գործ դնելով և մուրճ շինելով մեր ձեռքին զարկէինք և խորտակէինք հայկական մարդերի ապառաժացած խստասրտութիւնը։ Ճշմարիտ է, շատ դժուարին է գրասիրութիւն և ընթերցասիրութիւն յառաջացնել այն հասակաւոր մարդերի մէջ, որ մանկութեան ժամանակին կարդալ ևս ուսած չէին օրինաւոր։ բայց, մի բարի և հաստատուն կամք մեծ բան է։ դա կարող է հրաշքներ գործել և շատ բաներ լցուցանել, որ մանկութեան օրերումը այս և այն պատճառով անիծեալ և անհոգ էին թողած։ Ա՛յս բարի և աշխի կամքը յառաջացնելու մեր Հայրենակիցների մէջ թող լինի ձեր և բոլոր բարեմիտ ազգասէրների անձանձիր ջանքը և աշխատութիւնը։ Աւելի արժանաւոր վաստակ մեր կեանքի մէջ կարող չեմ ես նկարագրել մտքով։

Աշխի բարեկամ,

Ձեզ

Թեթեռող Ս։Նալբեանց։

Պրուսսիա։ Բերլին, 9 Նոյեմբերի 1859։

ՊԱՐՈՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ՀԻՒՍԻՍԱՓԱՑԻ ՕՐԱԳՐԻ։

Հիլլերեան տօնախմբութիւնը, որ սկսել ենք մեք երեկ արդէն նախատօնակներով, տուեց սրտերին առաջին շարժողութիւնը։ Այսօր, ճաշից յառաջ Ճարտարութեանների ակադեմիան կատարեց Շիլլերի հարիւրամեայ յոբելեանը մի առանձին հրապարակական ժողովով, որի մէջ պրօֆեսսօր, վարդապետ Գուէրը ասաց մի հանդիսաւոր ճառ այն խնդրի վերայ, թէ ինչպէս էր Շիլլերի յարակցութիւնը դէպ ի կերպարանող Ճարտարութիւնքը։ Մի պատուական ճառ։ Էգուց, առաւօտու 11 ժամուն կը սկսանի յատկապէս ժողովրդի տօնակատարութիւնը։ առաջին հոգալի գործը պիտոյ է լինի հիմնարկութիւնը Շիլլերեան արձանի Թատրոնատան հանդէպ, թէպէտ ժողովրդի ընդհանուր կարծիքը այնպէս է, որ արժան չէր Շիլլերի արձանը միայն կառուցանել, այլ անպատ-

ձառ պիտոյ էր կանգնեցնել Նորա մօտ և Գեօթէի արձանը. ըստ որում պիտոյ է այդ երկուքը միասին պղնձեայ արձանով պանծային գեղեցկաշէն Թատրոնատան Հանդէպ որ դորանով միայն կարող էր ստանալ իւր նուիրականութիւնը: Պատմեմ ձեզ Համառօտ Շիլլերեան արձանի հիմնարկութիւնը. Արևգակը շատ պայծառ փայլումէր, երբ որ սկսեցաւ գործ. մի անհամար բազմութիւն հաւաքվել էր այն տեղ. տէրութեան նախարարքը, զօրապետքը, քաղաքի մագիստրատը և միւս բարձրապատիւ մարդերի բազմութիւն մասնակից եղան այս տօնախմբութեանը. քաղաքի գլխաւոր քաղաքապետը արեց առաջին կռանաղարկը, ապա Հոհենցօլլերեան իշխանը, յետոյ մինիստրները, Համալսարանի կառավարիչ Բեօքը և այլն: Ա.յս գործողութեանը նայումէր ծովային վաճառականութեան շինութենից կառավարող Թագաւորը, ունենալով իւր մօտ Թագաւորական տան արքայազունքը: Սորանից յետոյ կատարվեցան ամենայն տեղ Բերլինում Հանդիսաւոր Հայկերութիւնք տների մէջ և ապա Թատրոնական տեսարանք, որոնց խորհուրդը էր մեծարել և պայծառակերպել Շիլլերի փառքը:

Մարտէրս Սառաֆեանց.

Աւստրիա. Վիեննա, 9 Նոյեմբերի 1859 Թուականի.

ԱԶՆՈՒԱՄԻՏ ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ՀԻՍԻՍԱՓԱՅԼ ՕՐԱԳՐԻ.

Երեկեան օրին մեք կատարեցինք այս կայսերական մայրաքաղաքում մի տօնախմբութիւն, ինչպէս բոլոր Գերմանիան մի երկրորդը տեսած չէ դեռ ևս: Թող միւսերը մանրամասնաբար նկարագրեն ձեզ այդ տօնախմբութեան միջոցները. Թոյլ տուեցէք ինձ միայն յիշել այս տեղ այն Հոգեպայծառ, կախարդող տեսարանը, որ յառաջացրեց ի պատիւ գերմանական Հոգեվից բանաստեղծի պատրաստած ջահաղարդ Հանդէսը: Մօտ 5000 մարդ, բոլոր ականաւոր մարդիկը Թէ գիտութեան և Թէ ճարտարութեան մէջ, Թէ զանազան ընկերութիւնների և Թէ այլ ազգային Հասարակութիւնների միջից, բոլորեքեան կրելով իւրեանց ձեռքումը ջահեր, կամ գունաւոր լապտերներ և փողիփողուն

դրօշներ, բարեձաշակ և ղեկդարուն կերպով, ծայրէ ծայր շրջեցան այս ամենամեծ գերմանական քաղաքի մէջ Պրատերստեուենից մինչև Ցովսէիստէդհան Գլայսիսը։ Նուիրական համերաշխութիւն և ուրախութիւն ամենեցուն երեսի վերայ, ցնծութիւն և բարեացակամութիւն նայողների բազմութեան կողմից, որ փոքր փոքր հաշուելով, հասանուէր քառորդ միլիոնաչափ ժողովրդի։ Երբ որ ջահակիր և դրօշակիր բազմութիւնը արձակվեցաւ և ոտք բռնեց Շիլլերի հսկայանմարմին արձանի առաջև, որ կլասիկական գեղեցկութեամբ պատրաստել էր քանդակագործ Մէյքսները, և աւելի քան թէ հազար երգեցողք սկսան երգել Շիլլերի տաղը «Ուրախութեան վերայ», բայց հազարաւոր գալղէն բոցեր քաղաքի դատարանների չորս աշտարակների վերայ տնկվեցան, տարածելով յերեկի պայծառութիւն, և բենգալեան կրակներ յետնակողմումը դրած, թոյլ էին տալիս աչքի տակ ձգելու ժողովրդի բազմութիւնը, որ գլուխ ղլխի մօտ լցուցանումէին մեծ, դինուորական վարժութեան հրապարակի տեղը։ Երբ որ Հէյնրիխ Լաուբէի հանճառօտ բայց իմաստալից հանդիսական ճառի քառակից թնդաց շատ հազարաւոր ձայների յնծութեան գոչիւն։ Երբ որ շնորհակալութիւնը այն հարիւրաւոր հազարների, որոնց անմոռանալի կը մնայ այս տօնախմբութիւնը, մի փոթորկային գոռացքով դուրս յարձակվեցաւ «կեցցէ՛ կայսրը» հնչելով, այն միջոցին ահա տեսայ ես մարդիկ, որ միմեանց անծանօթ, գրկախառնումէին միմեանց և օրհնաբանումէին այն պայծառացուցիչ և միաւորող ոգին, որ իւր անմահ հոգու բարոյապէս դեղեցիկ ստեղծուածներով պատճառ էր տուել իւր հմտներին կատարելու մի այսպիսի չնաշխարհիկ ժողովրդական տօնախմբութիւն։ Երանի՛ թէ մեր բոլոր գերմանացի եղբարքը, բոլոր ցեղերը մեր մեծ հասարակաց հայրենիքի, հիւսիսումը և հարաւումը, մասնակից լինելով այն անմոռանալի տօնախմբութեանը որ մեք կատարեցինք երեկ, տեսած լինէին այս սիրարժան, ազնուամիտ ժողովուրդը, այն վայելչաբարոյութիւնը, ուրախամտութիւնը և խնդակցութիւնը այս հարիւրաւոր հազարների։ Եթէ լսած լինէին ամենքեան նոքա, թէ ի՛նչպէս բարձր ձայնով ժողովուրդը յայտնումէր իւր ուրախութիւնը ջահակիր և դրօշակիր բազմութեանը, մանաւանդ թէ հոգաբարձու առաջնորդներին։ Եթէ նոքա տեսած լինէին թէ ոչ մի տեղ, և ոչ իսկ ամենախիտ ժողովրդահաւաքների մէջ որ և իցէ անպատշաճ խօսք, ոչ մի տեղ և ոչ ամենաիրաւ անկարգութիւն, ոչ մի տեղ մի կռուտութիւն չէլսվեցաւ։ Երանի՛ թէ բոլոր գերմանիան ականատես եղած լինէր, թէ որպիսի պատրաստակամ յօժարութեամբ և ուրախութեամբ հնազանդումէին մարդիկ հանդիսի կարգադրութեանը որ արդարև կարող էր նմանողութեան օրինակ լինել, այո

զարմանալու արժանի, և թէ ինչպէս բոլոր օթևանները, բոլոր պատուհանները լայն էին, բոլոր սենեակները փառահեղ լուսաւորած, բոլոր բնակիչքը հանդիսաւոր հագուստներով, միապես պայծառացած սրտով միացած բազմութեան հետ, որ ալիքների պես պտոյտվումէր փողոցներին մէջ, ուր ոչ մի տեղ հարկաւոր չեղաւ զինուորականների վերահսկողութիւն. մի տօնախմբութիւն ընդհանուր ուրախութեան «երկնքի օրհնառատ դստեր միայնակ հովանաւորութեան տակ, որ աղատը և աղատօրէն և հաւատարապես և ուրախութեամբ ղուգաւորումէ — այո, այո, այսուհետև չէր գտանվելու ոչ մի գերմանացի եղբայր, որ այս գեղեցիկ աշխարհը, այս ուղղափառ ժողովուրդը, այս միլիոնաւոր մարդիկը, որոնց մէջ այդքան լոր արմատացած է գերմանական կրթութիւնը, կամենար դուրս հանել մեղ գերմանական դաշնաւորութեան կապից որ միաւորումէ մեղ։ Դէպ ի երեք կողմ, նոյնպէս զարմանալի կարգաւորութեամբ ց ժամուն երեկոյին հեռացան տօնախմբողքը տօնի հրապարակից, որ ապագայումը պիտոյ է ասվի Շիլլերեան հրապարակ. հեռացողներին յառաջընթաց էին երաժիշտների դասքը և դունաւոր լուսատու լապտերները, ցուցանելով երգեցողութեան դանդաղ ձայները։ Բայց մինչև դէպ ի լոր գիշեր երերվումէին ղուարճ բազմութիւնք Շիլլերի արձանի առաջև, որ մինչև առաւօտու լուսանալը մնաց լուսաւորված գաղեղէն բոցերով։

Ես կամիմ հաղորդակից առնել ձեղ այն խօսքերին, որով քաղաքապետ դիանական Րիթթեր ֆօն Զէյլերը վերջացրեց երեկեան Շիլլերեան տօնախմբութիւնը, նոյնպէս և այն, հանդիսի մէջ ասած ճառին որ ասաց Հէյնրիխ Լաուբէն։

Նրա ջինքը այսպէս էին.

«Ներին կայսերական Վեճութիւնը, ամենազթած կամքով սահմանել է, որ այս տեղս, որ այժմ կրուէմ Շիլլերի արձանը, ուր և մօտակայ ապագայումն պիտոյ է կառուցանվի պալատական Թատրոնատան նոր շինութիւնը, զարդարվի մեծ գերմանական բանաստեղծի անունով, մշանջենաւոր ժամանակով։ Այս կայսերական սահմանադրութիւնը ցուցանուէ ամենավերին վեճարանք հանճարին այն ազնիւ տղամարդի որին մեք տօնումենք այսօր, և այն անմահ գործերին որ նա հրաշակերտել է. այդ սահմանադրութիւնը տալիս է մի հոգեպայծառ նուիրականութիւն այն անձառելի խնդութեանը որով մեր քաղաքը տօնախմբուէմ Շիլլերի հարիւրամեայ յոբելեանը. դա իրաւորուէմ բոլորեցուն բաղձանքը, որ սիրուէին և վեճարուէին գերմանական ազդի սրբական բանաստեղծը. դա պիտոյ է յիշատակը այն ուրախ տօնակատարութեան որով Վիեննան և Աստրիան ողջունեց հարիւրամեայ տօնը Շիլլերի ծննդեան, պահէ այսուհետև կենդանի և անմոռանալի թէ համաժ ամանակակից և թէ յետոյ գալոց մարդերի համար։ Այս պատճառով, քաղաքի անուամբ պարտականութիւն եմ համարում իմ վերայ հրատարակել իմ սրտի ամենապատկառ շնորհակալութիւնը մեր ամենազթած սիրոջից և կայսրից, այն շնորհակալութիւնը որ ամենայն հայրենասէր Աստրիացու սրտից դուրս է արձակվում, ձայն տալով» Վեցցե կայսրը։

Տօնախմբութեան ճառը Հէյնրիխ Լաուբէի բերանից, այսպէս եղաւ.

«Մենք կանգնած ենք Ֆրիդրիկոս Շիլլերի պատկերարձանի առաջև որ տօնախմբենք այս տղամարդի ծննդեան հարիւրամեայ օրը։ Ինչ գործ է կատարել այն տղամարդը, որ ամենայն մարդ որ աշխարհի երեսին խօսումէր գերմաներէն, տօնախմբումէ այս ծննդեան օրը։ Նա վեր է բարձրացուցել իւր անձը փոքրիկ քաղաքացու կարգերից, դէպ ի առաջին գերմանական բանաստեղծի աստիճան։ Նա իւր բանաստեղծական կոչման մէջ, թէև ծանր տառապանքների և վշտերի տակ, կացել է միշտ հաւատարիմ և ճշմարիտ և ազնիւ և մաքուր որպէս ղուտ ոսկի։ Նա մեր լեզուն ազնուագործելով տուել է նորան մի պանծալի բարեհնչուեթիւն, նա թևաւորել է նորան դէպ ի մի կախարդական թռիչք, այնպէս որ ամենայն գերմանական սիրտ ղովանումէ և հոգևորվումէ նորա խօսքերից։ Նա ստեղծել է մի ամբողջ շարակարգ գաղափարական կերպարանքների, որ գարձել են սիրականներ և օրինակներ փոքրի ու մեծի, հարստականի ու աղքատի համար։ Նա փառաւորել է կանայքը մեր գերմանական նախահարց հոգով, որպէս ամենաանբաւ առաքինուեթեան պահապաններ, որպէս տղամարդի ուղեկից ընկերներ կեանքի ամենավերին ենդիրների մէջ։ Նա ղարթեցրել է և սնուցել հոգին ղգալու այն բոլոր բարիքը որ ամիթափած են ամենայն մարդու սրտի խորքումմ, հոգին ազատութեան, հոգին հայրենասիրութեան, հոգին ղգալու բարին և վսեմականը։ Նա իւր մեծ քանքարը նուիրել է միշտ այն մեծ խորհուրդներին միայն, որ ազնուացնումեն և բարձրացնումեն մարդս։ Նա դորանով իւր բոլոր ժողովուրդը ազնուացուցել է և բարձրացուցել։ այս պատճառով մեր բոլոր ժողովուրդը տօնախմբելով մի այդպիսի բանաստեղծի ծննդեան հարիւրամեայ օրը, ձայն է տալիս միաբերան։ Ֆրիդրիկոս Շիլլերը է գերմանական ազգի բանաստեղծը և մեր սէրը։ Մեծարանք և գոհութիւն նորան միշտ և յաւիտեան։ Այս միաբերան ձայնարկութեան մէջ լսումէ մեծաբարբառ և ընդարձակ Աւստրիան, և Վիեննայի մէջ էս պակումենք մեք բանաստեղծի արձանը, և Դանուբիան գետ ի վեր և գետ ի ստոր, և մինչև ի մեր երկնաճեմ սարերը վեր է թնդում Աւստրիայի երախտագէտ տօնախմբութեան գոչիւնը։ գերմանական ազգի բանաստեղծին, մեր սիրելի Շիլլերին հաղար և գարձեալ հաղարաձայն բարեբանութիւն։

Յարգելի Հրատարակողիդ

անխարդախ բարեկամ

Ադոլֆ Բլոմենթալ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԿԱՄՍ ԷՄՄԱՆՈՒԷԼԻ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ։

ՆերածուԹիւն — Բէգլադէի եօԹն հրաշալիքը—Խառն լուրեր—Մի արեղայի ֆանատիկոսուԹիւն։

Խօսող ինչ կամին խօսեն, բայց Բէգլադէն Հայը տարաւ։ Ցիշատակարանս պարտական է նորա հրաշագործուԹիւնը պատմել։ Այնպիսի գործեր, որպիսիք օր ու ցերեկով գործվումեն Բէգլադէի ձեռքով, եԹէ նիւԹ չլինին հրապարակախօսուԹեան, եԹէ այդպիսի անքրիստոնեայ և անբարոյական մարդիկ գոլուԹեան ձեռքով չպատուհասվին, բանականուԹիւնը, արդարուԹիւնը մեղ — գրողներիս — կը դատապարտէ։

Մենք հրաւիրումենք բոլոր Հայոց վաճառականքը ուշադրուԹեամբ կարդալ այս տողերը և ամենայն արդարուԹեամբ դատաստան կատարել։ եԹէ այդ դատաստանի մէջ լինի այնքան լարեխղճուԹիւն, այնքան արդարամտուԹիւն, որքան կայ մեր առնելու պատմուԹեան մէջ, ապա ուրեմն, Ցիշատակարանս կը հասանի իւր նպատակին և ես կատարած կը լինիմ իմ խորհրդաւոր պարտականուԹիւնը։

Խօսող չսրտնեղին տղայաբար այն մարդիկը, որոնց ծանր է տեսանել բաց աչքով որ և իցէ պակասուԹիւն մեր ազգի անդամների վերայ։ առողջ բանականուԹիւնը պահանջումէ հանդէս հանել դորանց և խայտառակել և դատապարտել, որպէս զի օրէ օր վերանան և անհետանան այդպիսի բարբարոս գործողուԹիւնք։

Խօսող, նոյնպէս, Բէգլադէի նման մարդիկ չուրախանան, Թէ ինքեանք — ալատ մնալով, առիԹ ունէին զուարճանալու, տեսանելով Բէգլադէի բրդդուԹիւնը, այլ դորա փոխանակ Թող մաքրեն խղճմտանքները և մի փոքր մտածեն, լաւ են արդեօք այն գործերը, որոնց մասին դատապարտվումէ Բէգլադէն։ արդեօք չունէի՞ն ինքեանք ևս այդպիսի գործեր, արդեօք ապականված չէի՞ն նոյնպիսի կամ ևս աւելի վատԹար կեղտերով։ Ցիշատակարանիս աչքերը լաց են և ականջները

սուր. . . . Խարուք է իւր անձը մաքրել, քան թէ բարկանալ այն մարդու վերայ, որ տեսանելով ապականութիւնը, ասումէ յայտնի թէ ապականված ես։

Տարակոյս չկայ, մեր աղգի հիւանդութիւնը դարաւոր է· այն ապականութիւնքը, որով նա պղծել է իւր հայութեան անունը, մեծ հնարների են կարօտ, որ սրբվէին, բայց մեք մեր կարողութեան չափ պարտական ենք սպասաւորել այս սուրբ պաշտօնին։ Մեր համար աղգութիւնը և աւրհողջ աղգի կատարելութեան գաղափարը այնքան ծանր կշիռ ունի, որ զորան պահպանելու և օգնելու մեքով պատրաստ ենք ամենայն զոհաբերութեան, ինչ որ միայն կարող էր մի մտաւնագիր մարդ։ Ա՛յս բաների մէջ ոչինչ են մեր աչքում մի քանի կռապաշտ Հայերի պատուասիրութիւնը և անձնասիրութիւնը, ուստի մաքուր խղճմտանքով և ձեռքերս սրտերիս վերայ դրած, ոչ միայն զոհումնէք նորանց, այլ որպես քաղդէական սերմից յառաջացած ծնունդներ քարին ենք զարկում։

Հ՚ատ լաւ գիտենք, որ մեք այս ճանապարհով ատելի ենք կացուցանում մեր անձը, և այս է պատճառը, որ Հիւսիսափայլը փուշ է շատերի աչքին, բայց միշտ մտածումնէք, թէ պատասխանատու ենք Աստուծոյ առաջև, պատասխանատու խղճմտանքի և առողջ դատողութեան առաջև։

Եթէ մեր խորհուրդը լինէր գնալ օգտի և շահաստացութեան քաժակից, եթէ մեր յանկութիւնը լինէր սուրբը համարել ամենայն հնար, որ ձեռնտու էր թէ մեզ սիրելի կացուցանելու աղգին և թէ Հիւսիսափայլն ճանապարհը հարթելու, այն ժամանակ, ի հարկէ մեք ևս կը զոհէինք աղգի օգուտը մեր շահին, մեք ևս կնշդաւորութիւնը կը շինէինք մի յաղթակիր զործիք։ Բայց Թող հեռի մեզ այդ դժոխային հնարքը, նորա սեպհական են օրսկուրանտներին և ճիզվիթներին, որոնց հետ չունինք մտան և բաժին։ Եւ ոչ միայն այսչափ, այլև չենք յանկանում, որ այդ դիւահարհուրդ մարգիկը գովէին մեզ, մեր գործը, մեր ուղղութիւնը, ըստ որում մեք ինքներն պիտի կասկածելի երևէինք մեր աչքին։

Աղգի անդաստանի մէջ հինգ յորևնաբոյս չկայ, բայց փուշ և որոմ բիւրաւոր· աղաչումնէք ամենակալ Ցերը սրտացաւ զործաւորներ ուղարկել, որ խնամով խլէին այդ փուշերը, որպես զի այնիւ ըղ սերը հնար ստանային աճելու և զօրանալու։ Ժամանակ է, որ Հայերը դուրս գան երեխայութենից և մի փոքր այրութիւն ստանան, սովորեն դատել և ճանաչել սէրը և սպիտակը· մինչև այժմ նորա դատել են միայն դինու և պանրի արժանաւորութիւնը։ Ժամանակ է որ մի փոքր մտածել ու-

սանին, որովհետև մինչև այժմ գտանվել են նոյն գրութեան մէջ, ինչ վիճակում էր Նարուդոդոնոսորը երազից յետոյ. «և բանն վերացաւ յինէն» ասում էր նա մարգարէին։

Ուշադրութեանք, մի օտար մարդու առաջև, երբ պատմելով մեղ մեր ազգի անսրտութիւնը, նիւթականութիւնը և երեխայական դատողութիւնքը, խնդրումն պատասխանել, թէ ի՛նչ աղբիւրից յառաջանում էին դոքա և թէ կարելի՞ է արդեօք մինչև այդ աստիճան անարգել իւր անձը։ Մեղ շատ անգամ բռնադատումն կարմրել և ամաչել, բայց մեր հոգով չասի սիրելի Հայերը չկամին, որ եղբայրաբար խօսելով նոցա հետ, խնդրէինք վերացնել այն տղեղութիւնքը, որոնց համար ամօթապարտվում ինք օտարների առաջև։

Մեր ազգի խոցերը և ցաւերը քաչ յայտնի են մեղ, բայց ինքը ազգը չկամի խոստովանել իւր հիւանդութիւնը, նա փախչում բժշկից, նա կարծում, թէ թագուցանելով փտած և ապականված վէրքերը ընկերի աչքից, կարող էր պարտակել իւր ողորմելի դրութիւնը. այդ վէրքերը ճարակումն նորա հոգին, և այս պատճառով ևս Հայը մարմնով միայն ապրում առողջ։

Մի քանի թևթևամիտ օրագրերի և լրագրերի խելացնոր կարծիքներ և գաղափարք հասանում մեր ականջին, բայց դոքա կտրած ղանգակի ձայնից աւելի չունին ուրիշ արժանաւորութիւն։ Մեք ծիծաղումնք դոցա վերայ, բայց այդ ծիծաղը արտասուքից դառն է մեր համար, ըստ որում այդ բանները գործվում մեր ազգի մէջ։

Այդ երեխայամիտ օրագիրքը և լրագիրքը մինչև այժմ ուխտ են գրել բամբասել մեղ և մեր ասածի հակառակը պնդել, մինչև այն աստիճան մոլորութեան հասանելով, որ եթէ Հիւսիսափայլի մէջ գրվի, թէ Աստուած կայ, նոքա պատրաստ են և այդ ուրանալ։ Մի քանի հոգևորների կողմից նկատված շանթեր ևս տեսանում դեպ ի մեղ արձակված, բայց այդպիսի շանթերը փուճով շիջանողք են և վաղուց արդէն կորուսել են մարդկանցն աշխարհում իւրեանց դաղտնածածուկ նորհուրդը։

Մեր սիրտը լցուած է արիւնով. մեք այս տող չենք ծառայում մեր ախտերին, ինչպես մի քանի գիշերադէմ մարդիկ Հայհոյեցին մեղ, այլ սպասաւորումնք ազգի օգտին. գուցե մեղաւոր ենք նորանով, որ մեր աչքի առաջև են Հայոց ազգի համար, սորանից հարիւր տարի յետոյ գալոց օրերը.....

Ընթերցումնք կեղծաւորները շարել իւրեանց գործարանքը և արգարացնել Ռէգլադէի գործերը, որ պիտի նկարագրենք և որոնց հա-

մար ուրիշ յարմարաւոր անուն չգտանելով անուանեցինք «Բէգզադէի ևօթն հրաշալիքը»։

Առաջին, Բէգզադէն, մի մեծ քաղաքում ունենալով մի վաճառանոց, առել էր իւր մօտ մի պատուական երիտասարդ, տարեկան վարձ տալով նորան և խնդրում էր հաշուով յանձնելով։ Երիտասարդը, ինչպէս վերևում գրածներիցս պարզ երևում է, ընկեր չէր, ուրեմն և ոչ յաժանորդ Բէգզադէի շահին կամ վճռին, նա պարտական էր վաճառած ապրանքի արծաթը և մնացած ապրանքը ցոյց տալ Բէգզադէին նոյն հաշուով, ինչ հաշուով ստացել էր։

Մի քանի տարի ծառայում այս երիտասարդը, խանութի ապրանքները օրէ օր սկսանում են հատանիլ, այս պատճառով ևս տեսակի պակասութիւնից առուտուրը սկսում թուլանալ։ Արի երիտասարդը նկատում այս բանը և վճռեց ճանապարհը փակելու համար դրում Բէգզադէին նոր ապրանք ուղարկել։ Բէգզադէն, սկզբում այսօր էգուց ասելով, վերջապէս բոլորովին լուռ է մնում։ Երիտասարդը գրում, աղաղակում, տարիներով, բայց լսող չկայ։ գրում նա և շատ անգամ, եթէ չէ կամենում Բէգզադէն նոր ապրանք հասուցանել, որպէս զի կամ ինքը գնայ այդ քաղաքը կամ մի այլ մարդու յանձնէ, հաշիւը և ապրանքը ստանալ իւրեանից և գործը աւարտել։

Բէգզադէն, երկար ժամանակ այս աղաչանքին ևս ականջ չդնելով, թողնում երիտասարդը վերջին յուսահատութեան մէջ։ Մի օր, երբ սաստիկ զայրացել էր Բէգզադէի մարդ ղրկելու ծարաւը (տարու մէջ 365 անգամ զարթնում նորանում այս կիրքը) 1118 վերստ ճանապարհ կատարելով յանկարծ երևում այն քաղաքի մէջ, ուր էր նորա վաճառանոցը կամ գանգատաւոր գործակատար երիտասարդը։ Սա բսկսում իսկոյն հաշիւ տալ։ Օրինակի համար ասենք թէ երիտասարդի ձեռքը յանձնել էր Բէգզադէն 30,000 մանէթի ապրանք։ գործակատարը ժամանակ առ ժամանակ հասուցել է Բէգզադէին 25,000 մանէթ։ Ներկայ ցոյց է տալիս 10,000 մանէթի ապրանք, հաշուելով այն գնով ինչ գնով Բէգզադէն յանձնել էր երիտասարդին։ Բայց Բէգզադէն մի մանէթով երիտասարդին տուած ապրանքը չետ չէ ընդունում մի մանէթի տեղ, այլ հաշվում 75 կոպէկով, պատճառելով թէ հնացած էին։ Երիտասարդը պատասխանում, «պարոն, թէ նոր է թէ հին է, ահա քո ինձ տուած ապրանքը, ես չեմ կարել, չեմ վատնել, այլ որքան վաճառել եմ, նոյնա լոլորի արծաթը քեզ հասուցանելով և այն քսան հազարին հինգ հազար ևս շահ հանելով, ուստի արժէն է որ մնացած ապրանքը չետ առնուս նոյն գնով ինչ գնով ևս

քեղանից ստացել էի։ Եթե մի մանեթի բանը պիտոյ է 75 կոպեկով յետ տալ, պակաս մնացած 25 կոպեկը ո՞ր տեղից պիտի դուրս գայ»։

— Ինձ վարձից, — շուտով պատասխանում Բէգզադէն։

«Իմ ոռճիկը հերիք չէ այդ պակասը լցուցանելու համար», կցորդում երիտասարդը հեգնութեամբ։

— Անցածի համար մուրհակ կը տաս, — ասում Բէգզադէն։

«Ես այսքան տարի ծառայեմ, քեզ այնքան շահ ցոյց տամ, հերիք չէր այս, ոչինչ վարձ չառնում, այլև պարտականն մնամ, այս ո՞ր աշխարհի կամ ինչ կրօնից թոյլ տրված գործ է», հարցանում երիտասարդը։

— Ես փիլիսոփայ չեմ, — պատասխանում Բէգզադէն թաթակը քաշելուց յետոյ տուփի կողքին զարկելով։ — Ապրանքը հնացած է և այժմ չէ արժում մի մանեթ։

Այս կերպով ևս վերջացնում Բէգզադէն իւր հաշիւը. մնացորդ ապրանքը յետ է ընդունում ցած գնով, չէ տալիս երիտասարդի վարձը և պակաս մնացած արծաթի փոխարէն առնում մուրհակ։ Երիտասարդը չէ կամենում դատաստան մտանել, քաջ իմացած լինելով Բէգզադէի սովորութիւնը, որ ծառայողի 100 մանեթ վարձը կտրելու և իւր անխիղճ կամքը յառաջ տանելու համար, պատրաստ է 1000 մանեթ կաշառք տալով, դատաստանը թիւրել։

Այս գործողութենից յետոյ, մի քանի մարդիկ տեսանում Բէգզադէին, որ նա, քաղաքի նշանաւոր փողոցի մէջ, իւր վաճառանոցի առաջև, օր ու ցերեկով, դեշերագնաստը հագած մեն է գալիս մի Հրէական հետ, աշխատելով խաբել կամենալով մի մուշտակ գնել նորանից։

Երկրորդ, Բէգզադէն ստիպուած ունէր ապրանք ուղարկել մի մեծ քաղաք, երբ վաճառի հանդէս էր լինում այն տեղ։ Մի այլ վաճառական պարոն, որ նոյնպէս պարապում էր այդ առուտուրով, գնում Բէգզադէի մօտ և ասում, որ եթե այդ անգամը Բէգզադէն յօժարի մարդ և ապրանք չուղարկել այդ վաճառահանդէսը, ինքը պարոնը պատրաստ է մի քանի ամիս ժամանակով գնել Բէգզադէից մօտ իբր 15,000 մանեթի ապրանք, հարիւրին 10 շահով։ Բէգզադէն համաձայնում, տալիս է ապրանքը և ստանում պարոնից կանոնաւոր մուրհակ։ Երբ գնող պարոնը իւր ապրանքի հետ միասին հեռացած էր քաղաքից, դէպի վաճառահանդէսը, Բէգզադէն, միւս օրը գնում վաճառափողոցը (բուլ.) և այն տեղ խօսում այսպէս։

— Մի մարդ, որ ինձ յիմար անուանէ, իրաւունք ունի։

«Ի՛նչ պատճառով», հարցանումեն վաճառականք։

— Այս ինչ պարոնի այսքան արծաթի ապրանք հաւատացի։ բայց,

թէ նորան վաճառած, թէ ծովը ձգած մի և նոյն է։ Ո՛վ մի կոպէկ կը տայ այժմ նորա մուրհակներին։

«Ինչու այդպէս կոտրումէք այն պարոնի անունը, նա ոչ ոքի արծաթ կերած չէ, ոչինչ խարդախութիւն արած չէ», ասումն մարդիկ։

— Իսկապես այն չէ, — պատասխանումէ Բէգղադէն, — արնել է կամ չէ արել· այլ այսքան միայն գիտեմ, որ արծաթս կորած է։

Այս բանի մէջ Բէգղադէի խորհուրդը այն էր, որ այն պարոնի անունը կոտրվի վաճառանոցում, որ հաւատարմութիւնը կորուսանելով չկարողանայ շարունակել իւր առ և տրական գործողութիւնքը, որպէս զի մնայ մի միայն Բէգղադէին։

Մի փոքր ժամանակից յետոյ վերադառնումէ վաճառահանդիսից պարտական պարոնը և իմանալով Բէգղադէի արած տմարդութիւնը, իսկոյն ժամանակից յառաջ վճարումէ իւր պարտքը Բէգղադէին, մտածելով թէ այսպիսի ազնուութեամբ կարող էր հանել իւր վրէժը և հաստատակել Բէգղադէի ստախօսութիւնը և անբարոյականութիւնը։

Բայց ի՛նչ բանով արդեօք կարելի է ամաչեցնել Բէգղադէին։ Աստուծոյ ստեղծած նիւթական և իմացական բանների մէջ չկայ մի այնպիսի բան որ կարողանար նորան ամաչեցնել։ Բէգղադէի երեսը վաղուց դարձել է շինականի տրեխ։

Ներորդ, Բէգղադէն ունէր մի սիրական գործակատար, որ վերջին ժամանակներում շինել էր իւր հետ մանաւոր ընկեր։ (Այս գործակատարի և Բէգղադէի շատ վաղ ժամանակներից սկսած, իրեարու մէջ ունեցած յարաբերութեան մասին, չար լեզուներ խօսած են շատ կեղտոտ բաներ....)։ Ինչ և իցէ։ Ահա այդ գործակատարին նշանումէ մի օրիորդի հետ։ Մարդիկ, տեսանելով, որ Բէգղադէն մեծ ուշադրութիւն և խնամք է ցոյց տալիս հարսնացու օրիորդի վերայ, ղարմանումեն։ Բայց այդ ղարմանքը հասանումէ մինչև ի սարսափ, երբ մի անգամ մի պատուաւոր մարդ, տեսանելով հարսնացու օրիորդը, մինչդեռ ման էր գալիս Բէգղադէի կառքով, ասումէ Բէգղադէին։

Այս ի՛նչ պատիւ է, որ ցոյց ես տալիս գործակատարիդ հարսնացուին· կառքերով բաներով.....»

— Լո՛ւ, դու ևս չէս հասկացել, — պատասխանումէ Բէգղադէն.— գիտե՞ս թէ ինչ խորհրդով առնումեմ ես այդ բանները։

«Ո՛ր տեղից պիտի իմանամ»։

— Որ քաղ յայտնի է իմ գործակատարի նիւթական կարողութիւնը, — շարունակումէ Բէգղադէն։ — Լաւ գիտես, որ նա կարողանալու չէ կառք պահել իւր կնոջ համար, այս պատճառով ես սովորեցնումեմ հարսնացուն կառքերի և այլ այսպիսի շռայլութիւնների, որ

ամուսնութենից յետոյ նոյն բանը պահանջէ իւր ամուսնուց։ Տարակոյս չկայ, որ նորա ամուսինը կարողանալու չէ առնել այդ բանները, ուստի պիտի բորբոքվի նոցա մէջ անմիաբանութեան և դժտութեան լոցը.....այդ տեղ ունիմ ես իմ խորհուրդը.....Ամուսինը չկարողանալով կատարել իւր կնոջ կամքը, անշուշտ կորուսանելու է իւր յարգը նորա աչքում.....ինձ հարկաւոր է այդ, ես.....դեռ ես կը ծիծաղեմ նոցա երկուքի վերայ ևս։

Չորրորդ, Բէզդադէն, բարերարութեան անունով, իւր մնացորդ և փտած ապրանքը, որ եթէ վաճառելու լինէր, անշուշտ իւրաքանչիւր մանէթից 40 կոպէկ պիտի վնասուէր, տալիս է իւր սիրական գործակատարին, որի մասին վերևում յիշեցինք, անուանելով նորան անկախ վաճառական։ Եւ այսպէս, 60 կոպէկանոց բանը մի մանէթի տեղ տալով առնում է խելք մարգուց 33,000 մանէթի մուրհակ, որի զօրութեամբ պարտական է մնում հատուցանել այդ գումարը։

Գտանվումն մարդիկ, որ հարցանումն Բէզդադէից, թէ ինչպէս այդքան արծաթ հաւատացիր, մինչդեռ խանութը ևս քո անունով չէր։ Ծիծաղում Բէզդադէն և ասում, դուք գաղափար ևս չունիք վաճառականութեան վերայ։ եթէ ես խանութը նորա անունով չշինէի, նա երբէք կարողանալու չէր վճարել ինձ պայմանեալ արծաթը։

— Այդ ինչպէս, — հարցանումն մարդիկ։

«Շատ հասարակ կերպով», պատասխանում Բէզդադէն։

«Ահա որպէս անկախ մարդ և այդքան ապրանքի տէր երևելով վաճառականների մէջ, կարող է հաւատարմութիւն ստանալ։ Այս հաւատարմութեամբ գնելով նա օտարազգիներից հետ ղՀետէ ղանազան ապրանք և վաճառելով նորանց, կարողութիւն կը ստանայ վճարել ինձ իմ 33,000 մանէթը, օտարներին մնալով 55,000 մանէթ պարտական»։

— Այդ այդ օտարքը, ինչպէս ապա պիտի ստանան իւրեանցը, քո մարդ շինած գործակատարից։

«Հանդը ունի շատ սենեակներ.....

— Այդ անխղճութիւն է քո կողմից. այդքան տարի ծառայելու վարձը.....

«Կոցա ծնունդը չորանայ, նոքա եմ տունն են քանդել», ասելով լցնում քիթը թաքակով և գլխին քարշելով գլխարկը հեռանում լաւսողներից, որ մի այլ անօրէնութիւն չդանայ։

Երկրորդ, Բէզդադէն մի անգամ հրաւիրում մի մարդ անգամ շինել մի ընկերութեան, որ կազմել էին Բէզդադէն և այլ նորա համախոհ մարդիկ։ Պարոնը հարցանում, — ինչ ընկերութիւն է այդ, ապ դպին բաների վերայ խորհելու, թէ.....

«ՀՔ»· ընդհատումն խօսքը Բէգլադէն, մեր ընկերութիւնը բաժնասանքի ընկերութիւն է։ Մենք հաւաքվումենք, որ սորան բաժնասենք, նորան հայհոյենք, միւսին դաւ դնենք, սորա տունը քանդենք, միւսին գլխակոր վայր ձգենք·····

— Աստուած աղատէ այդպիսի դիւական ընկերութենից, — ասելով հեռանումն բարեպաշտ Հայրը։

Ա. Եղերորդ, Բէգլադէն պատուիրումն իւր մի գործակատարին, որ նոյնպէս շատ տարիներով ծառայումէր, բերել տալ իւր քեռորդին Բէգլադէի խանութի մէջ ծառայելու համար։ Գործակատարը գրումն և պատանին յայտնվումն Նիժնիյ-Նովգորոդի վաճառականդէսը։ Մի փոքր ժամանակից տղան հիւանդանումն և այդ պատճառով ևս Բէգլադէն սկսումն ծուռ աչքով նայել ողորմելու վերայ։

Հայհոյանք, թուք ու մուր և այլ անասելի և անխնայք խօսքեր թափվումեն Բէգլադէի կողմից աղքատ պատանու վերայ։ Բանը այն տեղ է հասանումն, որ Բէգլադէն ասումն, թէ չկամէր ունենալ նորան իւր խանութի մէջ։ Տղան աղաղակումն, եթէ չկամիս իմ ծառայութիւնը, ուրեմն իմ տեղը ուղարկի՛ր ինձ։ Այս խօսքերի վերայ Բէգլադէն ևս առաւել բարկանումն։ Այս միջոցին տղայի մայրը ուղարկումն իւր որդուն Բէգլադէի անունի վերայ 30 մանէթ արծաթ, մի վրարկու գնելու համար։ Բայց Բէգլադէն պահումն արծաթը իւր մօտ։ Երբ որ գրականապէս ասել էր պատանուն թէ չկամէր ունենալ նորան իւր խանութի մէջ, այլև հրաժարվումէր յետ իւր տեղը ուղարկելուց, տղան բոլորովին անօգնական մնալով կամենումն գնալ Պօլիցմէյստերի մօտ գանգատելու։ (Բէգլադէն բնակվումէր Պօլիցմէյստերի տան դէմ ու դէմ)։ Բէգլադէն լսելով տղայի սպառնալիքը, սկսումն ջարդել ողորմելի տղայի քիթը բերանը, դժոխային խօսքեր դուրս ժայթքելով բերանից։ Պօլիցմէյստերը պատուհանից տեսանումն այս հանդէսը։ Տղան գնումն գանգատ։ Պօլիցմէյստերը գանչումն Բէգլադէն և ասումն, թէ կամ հնդ տար քո ծառան, կամ իւր տեղը ուղարկիր նորան։ Բէգլադէն պատասխանումն, թէ չէր կարող դողը և աւազակը ընդունել իւր մօտ ծառայութեան համար, և թէ այդ տղայի ցեղը տանով տեղով գող են։ Այս ասելով հանումն ծոցից մի նամակ տղայի մօր բերանից իւր որդու վերայ, որով, որպէս թէ ուղարկումէր վերոյիշեալ 30 մանէթը և ասումէր թէ գողացած արծաթ էր։

Տղան հերքումն բոլորովին այս զրպարտութիւնը և քննութիւնը ստուգումն, որ այդ նամակը շինովի էր և խարդախած Բէգլադէի ձեռքով։ Պօլիցմէյստերը ասումն Բէգլադէին, թէ լաւ չէ նորա ընթացքը ծառայի հետ և թէ այդպիսի խարդախութիւնք կարող են մեծ անպատ-

ուսուիչնք ծնուցանել։ Ա.յսպիսի խօսքերով համոզում Բէգզադէին, որ կամ հետը տանի տղան կամ ճանապարհի արծաթ տայ մինչև կովկաս։ Բէգզադէն խոստանում հետը տանել։

Տղան ընկնում հիւանդանոց, աղքատութիւնը հասանում մինչև ի կատաղութիւն։ Մի քանի օրից յետոյ գալիս է Բէգզադէն տղայի մօտ և տալով նորան 5 մանէթ ասում, թէ կարգադրութիւն եր արել նորա մասին։ Երբ տղան մի փոքր հանգստել էր, Բէգզադէն տալիս է ուրիշներին հետևեալ պատուէրները։

Վանչում իւր գործակատարը, այսինքն տղայի քեռին, և ասում, որ չհամարձակվի ուղարկել տղան դէպ ի իւր վաճառանոցը, կամ դէպ ի իւր աշխարհը։ Եթէ որ և իցէ կարեկցութիւն ցոյց տալով գործակատարը խնամ տանէր տղային, այնուհետև Բէգզադէն տալու չէր գործակատարին պատկանած 2,000 մանէթը, որ գտանվում էր Բէգզադէի մօտ։ Գանչում իւր ապրանքի համար վարձված սայլորդները, նոցա ևս պատուիրում, որ չհամարձակվին ապրանքների հետ վերառնուլ տղան և հնար տալ Մ.....քաղաքը հասանելու։ Իսկ թէ սայլորդքը համարձակվէին կարեկցել ողորմելի տղային, Բէգզադէն սպառնում ոչ մի կոպէկ վարձ չտալ սայլորդներին ապրանքը ընդունելու համար։

Ա.յս լաներից յետոյ գնում Բէգզադէն։

Տղան հաւատացած է, թէ շուտով ինքը ևս գնալու էր դէպի այն տեղ ուր գտանվելու էր իւր պարոնը։

Բէգզադէի գնալուց մի երկու օր յետոյ, գալիս է տղայի մօտ սորա քեռին, (այսինքն Բէգզադէի գործակատարը) և յայտնելով, թէ երկու օրից յետոյ պիտոյ է միասին ճանապարհ ընկնէին դէպ ի Մ..... հարցանում տղայից, թէ չունէ՞ր արդեօք երկու մանէթի մանր արծաթ։ Տղան ասում թէ ունի միայն մի հինգ մանէթանոց թղթադրամ, որ ստացել էր պարոնից։

— Փոյթ չէ, — պատասխանում գործակատարը, — ի և նոյն է, էգուց կը տամ։ Ա.յժմ ինձ հարկաւոր է այս ընչին արծաթը այն պատճառով, որ ընակարանս հեռի է և չկամի միւս անգամ գնալ այն տեղ այդքան արծաթի քամակից։

Տղան հանում և տալիս է իւր բոլոր ունեցածը։ Գործակատարը ստանում և դէպուղիղ գնալով իւր ընակարանը, ուր պատրաստ սպասում եր նորան սուրհանդակի կառքը, նստում.....և կառքը յառաջ է շարժվում ամենայն ղօրութեամբ։

Երկու օրից յետոյ իմանում խնդճ պատանին թէ խաբվել էր իւր քեռուց։ Լաց է լինում, ողբում, բայց ինչ ճար, մնում միայն այս դաժանական անգթութեան ընդդէմ դէպ ի երկինք բողոքել։

Մի քանի բարեսիրտ Հայեր խղճալով այս անօգնական տղայի վիճակ ժողովուրդն մի քանի մանէթ և ճանապարհ են ձգուար նորան դէպ ի այն քաղաքը, ուր էր Բէգզադէն։

Նօթներորդ, Բէգզադէն Մ.....Հասանելուց յետոյ, մի քանի օրից յայտնվուամ Հաշոյակատար գործակատարը և խնդրուամ տալ ին։ քան իւր 2000 մանէթը։ Բէգզադէն, որ ինքը խոստովանէլ էր թէ գործակատարը ունէր 2000 մանէթ, այժմ սկսուամ քրքրել իւր սատանայի պոչով գրված մատեաններըը, երբեմն գլուխը քորելով, և երբեմն մի պողունց թաթակ քիթը լցնելով, ասուամ թէ գործակատարը ոչ թէ միայն 2000 մանէթ, այլ 2076 մանէթ է ստացել, ուրեմն դեռ նա պարտական էր Բէգզադէին 76 մանէթ։ Գործակատարը աղաղակուամ այս անիրաւութեան ընդդէմ, բայց լսող չկայ։ Բէգզադէի սովորական կանոնն է այս։ Երկար ու ձիգ խօսակցութիւններից յետոյ, գործակատարը տեսանելով, որ աւելորդ էր վիճել Բէգզադէի հետ, յանձն է առնուամ վճարել 76 մանէթը, ուստի և խնդրուամ իւր անցաթուղթը։ Բէգզադէն պատասխանուամ,—մինչև 76 մանէթը չբերես, քեզ անցաթուղթ չկայ։

Ինչ երկար գլխացաւութիւն առնենք ընթերցողներին, գործս կատարը գնուամ, մուշտակը և այլ բաները գրաւ դնելով ճարուամ 76 մանէթ արծաթ։ Եւ սեւցնելով Բէգզադէին ստանուամ անցաթուղթը։ Այսպէս վարձատրվուամ գործակատարի ոչ միայն այնքան տարիների ծառայութիւնը, այլև այն գաղանական անդիմութիւնը, որ, Բէգզադէին հաճոյանալու համար, ցոյց տուեց իւր քեռորդուն խլելով նորա ձեռքից Բէգզադէի տուած 5 մանէթը։

Այժմ, ինչպէս յոյս ունինք, մի տեսակ մարդերի օրապիրքը կամ լրագիրքը արդարացնեն Բէգզադէի եօթն հրաշալիքը, այն ժամանակ սուրբ պատմականութիւն կը համարենք գնել նոցա առաջև Բէգզադէի ամբողջ և լիակատար վարքագրութիւնը (біографія) նորա գործած քառասուն հրաշքների պատմութեամբ հանդերձ, որոնց իւրաքանչիւրը իւր ժամանակին ընկած են օրագրութեանս մէջ։ Ցիշատակարանքս, հատուած են այդ ընդհանուր և մանրամասն օրագրութիւնից, ուր ամենայն օր թուով և համարով գրուամ էր տեսածս և լսածս։

Այժմ հերիք է առ այժմ, շրջինք մեր երեսը այդպիսի մառախլապատ կերպարանքից և աղաչենք Ամենակալ Տէրը, որ մաքրէ Հայկական մելամոտեալ անդաստանը։

Ընդհանուր առանց մեր կողմից ջանքի և հոգաբարձութեան, առանց ղեկավարութեան և անդուլ աշխատութեան, Տէրը կ'առնէ այդ գործը անմիջապէս։

Տիրոջ առաջև դատապարտված է ծուլութիւնը և անհոգութիւնը. մեք ինքներին պարտական ենք նախ գործ սկսանել և ապա խնդրել Տիրոջ յաջողութիւնը։

Առաջին գործը է դպրոցների հիմնարկութիւնը, այս է մեր առաջին և վերջին ճանապարհը փրկութեան։

Ոչ մի ածնի մէջ պիտի հիմնվի՞ արդեօք մի օրինաւոր դպրոց, մինչև այժմ լուր չունինք։

Թիֆլիսի հոգևոր դպրոցը պիտի բարեկարգվի՞ արդեօք, նոյնպէս չգիտենք։

Աստրախանի, նոր բացված հոգևոր դպրոցը, որքան մեզ յայտնի եղաւ դորա ուսման առաջարկութիւնը, շատ անշան է. հարկաւոր է զբաղցնել, բայց ասումն թէ՝ Առաջնորդը չունի այն աղատութիւնը գերագոյն իշխանութիւններից, որից օգուտ են քաղում ուրիշները թերևս չարաչար գործ դնելով իւրեանց իշխանութիւնը։ Աստրախանի առաջնորդ սրբազան Մատթէոս Թեւմակալ արքեպիսկոպոսի բարեմտութիւնը և աղգասիրութիւնը յայտնի է ոչ միայն մեզ, այլև բոլոր ժողովուրդներին, որոնց առաջնորդած է. ուստի և ստիպված ենք դպրոցի անշանաւորութեան պատճառը վերագրել հնարների և կարողութեան սակաւութեանը, քան թէ մեծապատիւ սրբազան Արքեպիսկոպոսի զանցառութեանը։ Երանի թէ մեր բոլոր հոգևորների սիրտը այնքան ցաւէր ազգի վերայ, որքան Մատթէոս սրբազանի սիրտը։

Մի քանի օր սորանից յառաջ ստացած նամակ, մի նոր ապացոյց տալիս է մեզ մեր արեղաների ֆանատիկոսութեան մասին։

«Ռահանայի մինը», գրումէր բարեկամս, «չգիտեմ ինչ կերպով «ստանում է եղած փարիզի Արևմուտք օրագիրը։ Մի անգամ ներս է «մտանում նորա տուն մի արեղայ։ Յառաջուց պիտի ծանօթացանել, «որ արեղայ ասածդ միշտ վեր է համարում իւրեան քան թէ աշխար- «հական քահանայն և այս պատճառով շատ կոշտ են վարվում քահա- «նաների հետ, ամենայն րոպէ իշխանութիւն գործ դնելով նոցա վե- «րայ։ A propos. մի անգամ հարցուցին մի արեղայից թէ ի՛նչ է նոցա «իրաւասութիւնը քահանաների վերայ, ինչո՞վ բարձր են քան թէ քա- «հանայք, և ինչու համար շատ անգամ անգթաբար վարվում քահա- «նաների հետ։ Արեղան պատասխանեց, թէ ինքեանք վանքի մէջ չլբուր «ուտելով և սաղմոս ասելով հոգևմաշ են լինում, իսկ քահանայք «միշտ ժողովրդի մէջ, ամուսինի և ընտանիքի տէր, վայելումեն աշխար- հի վայելչութիւնը։

«Արեղան տեսանելով, որ քահանան կարգումէ մի բան հարցա-

«նուամ թէ ի՛նչ էր կարգացածը։ Քահանայն պատասխանուամ «Արև-
«մուտք օրագիր»։

«— Դու ինչպէս համարձակվուս կարդալ այն բանը, որ ես նղո-
«վել եմ։

«Ի՛նչ նղովելու բան կայ այս տեղ. ճշմարտութիւն, մի՞ թէ դուք
«նղովուսք ճշմարտու.....

«— Զայնդ կորիր,— ասելով դուրս է գնում աբեղան և պաշտօ-
«նական թղթով ղրկուսմ նորան իւր ծուխից և ուղարկուսմ մի այլ քա-
«ղաք, որի ժողովրդի թէ սակաւութիւնը և թէ աղքատութիւնը պա-
«տիժ պիտի համարվէր քահանային։

«Խեղճ քահանայն հոգսից և նեղութենից հիւանդանալով մեռա-
«նուամ իւր աքսորի մէջ։

Մեք շուտով մանրամասն կը խօսենք Արևմուտքի մասին։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամէն ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Ինագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոյա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր գանազան ֆիզիքական յայտնագործութիւնների, հատարակաբար Աստղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ· այլև լանաթօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոյա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենդաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Խարոյական, գեղեցիկ լանաթիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և ղգայողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· Թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութիւնից· այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Յանկացողքը սոյնպէս այս օրագիրը կարող են հաստացնել իւրեանց ինդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. *կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի հասցեով.* въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 *տետրակների գինը է* 8 *մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար* 9½ *մանէթ:*

Печатать позволяется. С. Петербургъ, Нояб я 2-го, 1859 года.

Цензоръ В. Бекетовъ.